ՖԻԼՈԿԱԼԻԱ

ԿԱՄ ՍԷՐ ԴԷՊԻ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. ԱԲԳԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳՐԻԳՈՐ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ
ԵՒ ՆԱԻՐԱ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ

Զոնվում է
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ
Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝
ծննդյան 75-ամյակի առիթով

ΦΙΛΟΚΑΛΙΑ
ΤΩΝ ΙΕΡΩΝ
ΝΗΠΤΙΚΩΝ·
ΣΥΝΕΡΑΝΙΣΘΕΙΣΑ
ΠΑΡΑ ΤΩΝ ΑΓΙΩΝ ΚΑΙ ΘΕΟΦΟΡΩΝ
ΠΑΤΕΡΩΝ ΗΜΩΝ
ΝΥΝ ΔΕ ΠΡΩΤΟΝ ΤΥΠΟΙΣ ΕΚΔΟΘΕΙΣΑ
ΔΙΑ ΔΑΠΑΝΗΣ
ΙΩΑΝΝΟΥ ΜΑΥΡΟΓΟΡΔΑΤΟΥ
ΕΙΣ ΚΟΙΝΗΝ ΤΩΝ ΟΡΘΟΔΟΞΩΝ ΩΦΕΛΕΙΑΝ.
ΕΝΕΤΙΗΣΙΝ. 1782.
ΠΑΡΑ ΑΝΤΩΝΙΟΥ ΤΟΥ ΚΟΡΤΑΣΙ.
CON LICENZA DE' SUPERIORI, E PRIVILEGIO.

Ֆիլոկալիայի յունարէն
առաջին հրատարակութեան շապիկը 1782 թ.

ՖԻԼՈԿԱԼԻԱ
ԿԱՄ
ՍԷՐ ԴԷՊԻ
ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

Հաւաքեց եւ թարգմանեց՝
Յակոբ արք. Գլնճեանը

ՀԱՍԵ ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄ
2026

ԱՌԱՋԱԲԱՆ

ՖԻԼՈԿԱԼԻԱ
ՍԷՐ ԴԷՊԻ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

Ուղղափառ քրիստոնէութեան մէջ, յատկապէս յունական (բիւզանդական) եւ ռուսական օրթոդոքս եկեղեցիներում[1], գոյութիւն ունի սրբազան հայրերի գրութիւնների, աստուածաբանական մտորումների, հոգեշահ խոկումների եւ ուսուցումների մի բացառիկ հատընտիր, որը կոչւում է ՖԻԼՈԿԱԼԻԱ, ուր հաւաքուած են հիմնականում Դ.–ԺԵ. դարերում ապրած սրբակենցաղ հեղինակների որոշ գրուածքներ՝ սկսած Եգիպտոսի, Սիրիայի, Պաղեստինի եւ Սինա թերակղզու անապատական սուրբ հայրերից մինչեւ Աթոս Լեռան ճգնակենցաղ վանականները: Հոգեւոր այդ ողջ ժառանգութեան հիմնական նպատակն է տարածել սէրը ամենագեղեցկի ու բարու հանդէպ, այսինքն՝ մերձենալ Աստծուն, որն ինքնին բացարձակ լաւն է, անսահման բարին, աղբիւրը ճշմարիտ ու տենչալի գեղեցկութեան: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ քաղաքակրթութեանը զուգընթաց

[1] Թէեւ ռուսական եկեղեցին ոչ այլ ինչ է, եթէ ոչ բիւզանդական եկեղեցու մի ճիւղ. նոյնիսկ ռուսական եկեղեցական ճոխ արուեստը ներծծուած է բիւզանդական ազդեցութեամբ:

մարդ արարածը միշտ անյագ փափաք է ունեցել, եւ դեռ շատերը շարունակում են ունենալ, շփուելու աստուածութեան կամ Գերագոյն Էակի հետ: Դա, իհարկէ, մարդկային խղճին բնորոշ մի ցանկութիւն է՝ լինելու Աստծոյ հետ մտերմութեան մէջ, նոյնիսկ «միանալու Նրան անբաժանելի կերպով» (ըստ Ս. Գրիգոր Նարեկացու, Բան ԻԴ, 4): Դրան է ձգտում յատկապէս քրիստոնէական խորհրդապաշտ եւ ազնուական ոգին: Այդ ձգտումը չի վերաբերում միայն վանականներին, այլ նաեւ՝ աշխարհականներին: Այդ միացումը, սակայն, կատարւում է, ըստ նոյնինքն Ս. Նարեկացու, միայն «կապեալ ընդ շնորհի Քրիստոսի», եւ այդ շնորհը Ս. Հոգու ներգործութիւնն է կամ ներուժը (էներգիան), այլապէս տկար բնութեամբ մարդ արարածը չի կարող մերձենալ անդրանցական Աստծուն, քանզի Գերագոյնի հետ կապուելու միակ հզօր միջոցը՝ Քրիստոսին միանալն է աղօթքով, որն ինքնին Ս. Հոգու անկապուտ պարգեւն է: Պէտք է նկատի ունենալ, որ այդ մերձեցումը Աստծուն կամ Նրա հետ միաւորումը երբեք չի ոչնչացնում մարդու ինքնութիւնը, այլ այն դարձնում է յաւիտենական և արժանի Տիրոջ երանական տեսութեանը:

Քրիստոնէական քաղաքակրթութեան մէջ քրիստոնեայ առաջին վանականներն ապրել են Եգիպտոսում Դ. դարում: Նրանք շատ սովորական մարդիկ են եղել եւ առաքինի վարք են ունեցել: Նրանք, ընդհանրապէս, գիտական կամ աստուածաբանական առումով ոչ պատրաստուած մարդիկ էին, ոչ կրթուած, ոչ էլ՝ յայտնի: Նրանցից շատերը նոյնիսկ չէին կարողանում կարդալ Սուրբ Գիրքը,

թէեւ համարեա անգիր գիտէին այն: Նրանք մեծ մասամբ եկեղեցական կոչումներ չունէին եւ չէին էլ հետաքրքրւում եկեղեցական կամ աստուածաբանական ակադեմիական բարձր կոչումներով, այլ աղօթասաց ճշմարիտ քրիստոնեաներ էին՝ իրենց մտքում ու սրտում մշտապէս պահելով ու փառաբանելով Տէր Յիսուսին: Նրանց ունեցած իւրայատուկ իմաստութիւնը բխում էր Ս. Հոգուց, որով նրանք մերձենում էին Աստծուն եւ լցւում իմաստութեամբ,

Նրանք, ովքեր առանց Աստծոյ երկիւղի, առանց Սուրբ Հոգու օգնութեան, այլ պարզապէս վստահելով իրենց մտային սեփական կարողութեանը՝ փորձում են լոկ ուսումնառութեան ճանապարհով իմաստութեան հասնել, ձախողւում են եւ ընկնում որոգայթի մէջ, քանզի «գիրն սպանում է, իսկ հոգին՝ կենդանացնում» (Բ Կորնթ. Գ 6): Այս խօսքը վերաբերում է յատկապէս նրանց, ովքեր Աստծոյ սրբազան երկիւղը մէկ կողմ թողած, զբաղւում են աստուածաբանական դատարկ վէճերով կամ ցանկանում են փառաւորուել իբրեւ աստուածաբան կամ եկեղեցու «դոկտոր», մինչդեռ այդպիսիք չեն հասկանում, որ մեծագոյն աստուածաբանը հէնց ինքը՝ սատանան է, որը որեւէ մէկից աւելի լաւ գիտէ, թէ Ով է Աստուած եւ ի՛նչ է կամենում, թէեւ սարսում է Նրանից, սակայն այդ երկիւղը ստրկական է, որի մէջ սէր չկայ, եւ դրանից է գալիս նրա կործանարար չարութիւնը[1]:

---

[1] Տեսնել՝ Յակոբ արք. Գլնճեան, Հաւատի եւ բանականութեան հետքերով, Երեւան 2014, էջ 53–54:

ՖԻԼՈԿԱԼԻԱՆ, ասկետիկ–խորհրդապաշտ գրութիւնների այդ հոյակապ ժողովածուն, ի մի է բերում արեւելեան վանական աւանդոյթի ողջ իմաստութիւնը, եւ ինչպէս Նիկոդեմոս Հագիորացին (Նիկոդեմոս Աթոս Լեռնցի 1749–1809) է գրում, այն «զգաստութեան եւ ժուժկալութեան գանձարան է, բանականութեան պաշտպանութիւն, հոգեբուխ աղօթքի միստիկական ուղեցոյց, արգասաբեր ու առաքինի կեանք վարելու գերազանց չափանիշ, դրախտ հայրերի եւ շղթայ ամենայն առաքինութիւնների» (La Filocalia de la Oración de Jesús, España 2006, Առաջաբան, էջ IV):

ՖԻԼՈԿԱԼԻԱ բառը հին յունարէն է (Φιλοκαλία), որը նշանակում է՝ «Սէր դէպի գեղեցկութիւնը» կամ «Սէր գեղեցկութեան հանդէպ»: Այստեղ «Գեղեցկութիւնը», (հուն. καλός), նկատի ունի Աստծոյ անսահման գեղեցկութիւնն ու բարութիւնը: Ռուսերէնում «Ֆիլոկալիան» թարգմանուել է որպէս «Добротолюбіе», այսինքն՝ «սէր բարութեան հանդէպ»: Այն կարելի է վերարտադրել նաեւ իբրեւ «Սթափ սէր դէպի հոգեւոր գեղեցկութիւնը» կամ «Սէր դէպի առաքինութիւնը»: Ֆիլոկալիան հիմնականում մատնանիշ է անում արեւելեան ասկետիզմի բուն նպատակը, որն է ձգտելն ու հասնելը Աստծոյ հետ միութեան՝ ի շնորհիւ խորասուզուած աղօթքի ու հոգեւոր խոկումների, ինչը կազմում է *հեսիխասմի*[1] էութիւնը:

---

[1] Hesychasm եզրոյթը ծագել է յունարէն Hesychia բառից, որը նշանակում է «հանգիստ», «լռութիւն», «մենութիւն», «հանգստութիւն», «խաղաղութիւն»: Դա սկզբնապէս բիւզանդական հոգևորութեան ձև է եղել, որն հետզհետէ սկսել է լայն տարածում գտնել յատկապէս Ռուս Ուղղափառ Եկեղեցում:

Նախկինում «Ֆիլոկալիա» է կոչուել Որոգինէս Աղեքսանդրացու (184 –254) տեքստերի ընտրանին, որի շարադրանքը վերագրուել է սուրբ Բարսեղ Մեծին (329–379) եւ սուրբ Գրիգոր Նազիանզացուն (330–389/390)։ Նոր «Ֆիլոկալիան», իր յունարէն եւ ռուսերէն տարբերակներով, ընդգրկում է աւելի քան երեսուն սրբազան հեղինակի, որոնց թւում են Անտոն Մեծը, Եւագր Պոնտացին, Մեծն Մակար Եգիպտացին, Յովհաննէս Դամասկացին, Գրիգոր Սինայեցին, Իսահակ Նինուէցին, Յովհաննէս Կլիմակոսը (Յովհաննէս Սանդուղք), Սիմէոն Նոր Աստուածաբանը, Գրիգոր Պալամասը։ Առաջին անգամ այն հրատարակուել է յունարէն լեզուով, 1782 թ., Վենետիկում, Աթոս լեռան վանական Նիկոդեմոս Հագիորացու (Աթոս լեռնցու) եւ եպիսկոպոս Մակարիոս Կորնթացու (1731–1805) կողմից, մեկենասութեամբ ռումինացի իշխան Իոհան Մաւրոգորդատուի։ Այս հրատարակութիւնը, թարգմանուելով այլ լեզուների, մեծ յաջողութիւն է գտնում արեւելեան քրիստոնէութեան մէջ, յատկապէս սլաւոնական աշխարհում։ Նրանից ընտրուած հատուածներ սլաւոներէնի են թարգմանւում եւ լոյս տեսնում Մոսկուայում 1793 թ. իբրեւ «Добротолюбіе», որի հրատարակիչն էր վանական Պաիսի Վելիչկովսկին։ Այնուհետեւ ռուսերէնով եղել են եւս երկու թարգմանութիւններ, որոնցից մէկը հրատարակուել է 1857 թ., իսկ միւսը, աւելի ամբողջականը, հինգ հատորներով, 1877–1889 թուականներին[1]։ Այսպի-

[1] Այս հատորները թարգմանել, պատրաստել և հրատարակել է ռուս վանական և եպիսկոպոս, (սրբադասուած 1988 թ.) Թէոփան Ճգնաւորը (1815–1894), որն այցելել էր Պաղեստին, սովորել յունարէն և ծանօթացել

սով Ֆիլոկալիան, ինչպէս նաեւ անյայտ մի հեղինակի կողմից 1853–1861 թուականներին գրուած «Ռուս Ուխտաւորը» գիրքը դառնում են ուղղափառ քրիստոնէութեան ամենայայտնի գրքերից, որոնք լայնօրէն օգտագործուել են հեսիխաստական մեդիտացիայում եւ մեծ ազդեցութիւն են թողել ժամանակի ռուս գրողների վրայ, յատկապէս Ֆ. Մ. Դոստոեւսկու (1821–1881):

Ներկայումս Արեւմուտքում մեծ հետաքրքրութիւն է նկատւում Ֆիլոկալիայի նկատմամբ որպէս Արեւելքի եկեղեցու հոգեւոր ժառանգութիւն, որը հաւատի արծարծման եւ հոգեւոր դաստիարակութեան առնչութեամբ իր կարեւոր տեղն ու դերն ունի: Աստուածաշնչի եւ մեր Եկեղեցու հոգեւոր ժառանգութեանը առընթեր, «Ֆիլոկալիան» կարելի է համարել արեւելեան քրիստոնէութեան հոյակապ գոհարներից մէկը, որն, անտարակոյս, իր հոգեւոր նպաստը կ՛ունենայ նաեւ հայ ընթերցողի համար: Այս է պատճառը, որ մենք ձեռնամուխ եղանք այս բացառիկ գործի հակիրճ ուսումնասիրութեանը եւ նրա որոշ հատուածների թարգմանութեանը: Մեր նպատակը սեփական աւանդոյթից հրաժարուելը չէ, այլ՝ քոյր եկեղեցիների դարաւոր եւ ուղղափառ աւանդութիւնից օգտուելն է, որի սրբազան հեղինակներից շատերը նաեւ մեր Եկեեցու հարազատ սրբերն են: Այստեղ մենք Ֆիլոկալիայից զանց ենք արել այնպիսի հեղինակների, որոնք պարզապէս

սրբազան հայրերի գրուածքներին: Նա յունարէն Ֆիլոկալիայից դուրս է թողել որոշ հեղինակների և աւելացրել այլոց, որոնցից են՝ Եփրեմ Ասորին, Բարսանուփիոսը, Յովհաննէս Կլիմակոսը և ԺԷ.–ԺԸ. դարերի Ռուսական եկեղեցու մի քանի հայրեր:

կրկնել են իրենց նախորդներին կամ առնչուած են եղել դաւանաբանական եւ մանաւանդ քաղկեդոնական վէճերին, դրանցից մէկն է, օրինակ, Դիադոկոս Փոտիքեցի եպիսկոպոսը (Ե. դար)։

Թարգմանութիւնները կատարելիս հիմնականում օգտուել ենք «Ֆիլոկալիայի» իսպաներէն եւ երբեմն էլ՝ գերմաներէն տարբերակներից։

Յակոբ արք. Գլնճեան

ДОБРОТОЛЮБІЕ

ВЪ РУССКОМЪ ПЕРЕВОДѢ,

ДОПОЛНЕННОЕ.

ТОМЪ ПЕРВЫЙ.

ИЗДАНІЕ ЧЕТВЕРТОЕ.

Подвиженіемъ Русскаго на Аѳонѣ Пантелеимонова монастыря.

МОСКВА.

Типо-Литографія И. Ефимова. Большая Якиманка, собственный домъ.

1905.

Ֆիլեկալիայի ռուսերէն
հրատարակութեան շապիկը, 1905 թ.

ՖԻԼՈԿԱԼԻԱ ՅԻՍՈՒՍԵԱՆ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ[1]

ԱՆԴԱԴԱՐ ԿԱՆՉԵԼ ՅԻՍՈՒՍԻ ԱՆՈՒՆԸ

Արեւելեան եկեղեցիների կեանքում, եւ յատկապէս Ռուս ուղղափառ Եկեղեցում, գոյութիւն ունի խորասուզուած աղօթքի մի հոգեւոր պրակտիկա, որը բնութագրւում է իբրեւ «Յիսուսեան աղօթք» կամ իբրեւ «սրտի աղօթք»: Այն մուտք է գործել Ռուսաստան ԺԴ. դարի կէսերին: Ռուսական վանականութեան յայտնի հիմնադիր Ս. Սերգէյ Ռադոնէժցին (Сергий Радонежский) (1314–1392) արդէն գիտէր դրա մասին եւ կիրառում էր այն: Նոյնը անում էին նաեւ նրա աշակերտները: Նրանցում ամենից նշանաւորն էր Նեղոս Սորայեցին (իսկական անունը Николай Майков, 1433–1508): Հետագայում մի այլ նշանաւոր վանական՝ Պաիսի Վելիչկովսկին (1722–1794) տարածում է այն եւ ժողովրդականացնում:

Ֆիլոկալիայի մի հին բնագրի համաձայն, «Յիսուսեան աղօթքը» մեզ հասել է սուրբ առաքեալնե-

---

[1] Սոյն շարադրանքը հիմնուած է հետեւեալ աշխատութեան վրայ՝ J. Serr–ի La prière du coeur, Abbaye de Bellefontaine, Bégrolles (Maine–et–Loire) 1977.

ից: Նրանց համար այն ծառայել է իբրեւ օրինակ մշտական աղօթքի՝ հետեւելով Պօղոս առաքեալի՝ քրիստոնեաներին ուղղուած յորդորին, թէ պէտք է անդադար աղօթել (Ա Թես. Ե 17): Ամենայն աղօթքներով եւ աղաչանքներով ամէն ժամ աղօթէք Հոգով (Եփս. Զ 18): Անհրաժեշտ է միշտ աղօթել եւ չձանձրանալ (Ղուկ. ԺԸ 1): Հսկեցէ՛ք եւ աղօթք արէ՛ք ամէն ժամ (Ղուկ. ԻԱ 36)[1]: Այս աղօթքը հիմնականում Յիսուսի անուան անդադար կրկնումն է, այդ սրբազնագոյն անուան յիշատակումը, որի պատճառով էլ այն կոչուել է «Յիսուսեան աղօթք»: Աղօթքն իր ուժը ստանում է աստուածային անունից, դա կարող է լինել «Եահվէ»՝ Հին Կտակարանում կամ «*Յիսուս*»՝ Նոր Կտակարանում: Յատկապէս Գործք Առաքելոց գրքում գրուած է, թէ նա, ով կանչի Տիրոջ անունը, կը փրկուի (Գործք Բ, 21): Այս պարագայում այստեղ անունը նոյնանում է այդ անունը կրողի հետ, այսինքն՝ հենց ինքն մեր Տէր Յիսուսի անձի հետ: Դրա համար էլ այդ անուան հզօրութիւնն ու սրբութիւնը փրկում է, բժշկում, հանում պիղծ ոգիները, մաքրում սիրտը: Երբ հանապազ պահում ենք Տիրոջ անուան սրբութիւն եւ փառաբանում այն, այդ ժամանակ միայն զգում ենք դրա փրկարար զօրութիւնը մեր կեանքում: Ըստ Պօղոս առաքեալի (Ա Կորնթ. Ա 2)՝ քրիստոնեաները կոչուել են նաեւ՝ «ամենուրեք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը կանչողներ»[2].

---

[1] La Filocalia de la Oración de Jesús, Salamanca 1998, էջ 9:

[2] Յիսուսի սուրբ անունը ճշմարիտ արտայայտիչն է իր աստուածային էութեան: Ճանաչել Աստծու անունը նշանակում է ճանաչել հէնց ինքն Աստծուն այնպէս, ինչպէս որ Նա ինքն իրեն յայտնել է, դրա համար էլ այդ

«Յիսուսեան աղօթքը» բաղկացած է հետեւեալ բանաձեւի անվերջ կրկնումից. «Տէր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ, ողորմեա՛ ինձ, մեղաւորիս» (ըստ Ղուկաս ԺԸ 38), որն ինքնին Երիքովի կոյրի աղաղակն էր, երբ նա բժշկութիւն էր հայցում Յիսուսից: Սա նաեւ մաքսաւորի աղօթքն է. «Աստուած քաւեա՛ զիս զմեղաւորս» (Ղուկաս ԺԹ 13): Այստեղ հարկ է նշել նաեւ, որ «Յիսուսեան աղօթքի» պարզունակ ձեւն է եղել. «Տէր ողորմեա՛» (Kyrie eleison), որի մշտական կրկնութիւնը Արեւելեան ծիսակարգում սկիզբ է առնում դեռեւս Անապատական հայրերի ժամանակաշրջանից Գ.–Ե. դարերում:

անունը պահանջում է բացարձակ յարգանք ու պատիւ, ինչպէս կարդում ենք այս մասին Հին Կտակարանում. «Եթէ յանձն չառնէք կատարել այս գրքում գրուած օրէնքների բոլոր խօսքերը՝ չվախենաք ձեր Տէր Աստծոյ պատուական ու սքանչելի անունից, ապա Տէրը նոր նշաններով՝ մեծ ու զարմանալի հարուածներով, խոր ու խիստ ցաւերով կը պատուհասի քեզ ու քո սերնդին» (Բ Օր. ԻԸ 58–59): (Աւելի մանրամասն տեսնել՝ Յակոբ արք. Գլնճեան, Հաւատի եւ բանականութեան հետքերով, Երեւան 2014, էջ 36–47):

Իրականում Աստուած աւելին է քան իր յայտնած անունը, Նա վեր է անունից, որն սկզբնագոյ չէ: Այս է պատճառը, որ Ռուս Ուղղափառ Եկեղեցին 1913 թուականին պաշտօնապէս դատապարտել է Տիրոջ անունը պաշտողների ծայրայեղական շարժումը (ռուս. Имяславие կամ Имябожие), որը կոչւում է նաև Onomatodoxia: Նոյնը արել է նաև Կ. Պոլսի Տիեզերական պատրիարք Գերմանոս Ե.՝ յայտարարելով, որ Имяславие–ն պանթեիզմ է, իսկ Ռուսաստանի Նիկոլայ Բ. ցարը 1913 թ. յունիսին նոյնիսկ զինուորական միջամտութիւն է կատարել Աթոս լեռան ռուսական Սուրբ Պանտէլէյմոն վանքում և այնտեղ ապրող հարիւրաւոր վանականների դաժանօրէն ձերբակալել է տուել և նաւով տեղափոխել Ռուսաստան, որոնք կողմնակից էին Имяславие–ի շարժմանը (տեսնել Antoine Nivière, Les Glorificateurs du nom, Éditions des Syrtes, 2016):

Բանաձեւի բառերը կարող են տարբեր լինել, բայց խորհուրդ է տրւում կիրառել կարճ եւ ճշտուած բանաձեւեր՝ խուսափելու համար բառերի անպատշաճ եւ աւելորդ կուտակումից: Աւետարանում տեսնում ենք, որ մաքսաւորին եւ անառակ որդուն բաւական եղաւ անկեղծ զղջումի միայն մէկ խօսք ասել եւ ստանալ Աստծոյ ներումը: Նոյնպէս Յիսուսի կողքին խաչուած աւազակը, հաւատով լցուած մի պարզ արտայայտութեամբ, արժանի դարձաւ փրկութեան: Բառերի կամ նախադասութիւնների առատութիւնը չի կարող որեւէ ազդեցութիւն ունենալ: Երեխաների պարզ, ինքնաբուխ եւ միապաղաղ մէկ թոթովանքն անգամ բաւական է շարժելու իրենց հօր սիրտը: Աղօթքի մէջ բառերի շռայլութիւնը յաճախ լցնում է աղօթողի հոգին պատկերներով եւ ցրում նրա միտքը[1]:

ՇՆՉԵԼ ՅԻՍՈՒՍԻ ԱՆՈՒՆԸ

«Յիսուսեան աղօթքը» կարող է սկսուել լսելի ձայնով մի աղօթքի բազմիցս կրկնումով, ընդհանրապէս վարդարանի կամ «Տէրողորմեայի»[2] (համրիչի) օգնութեամբ, ինչպէս նաեւ մի հոգեւոր առաջ-

---

1 Juan Clímaco, La santa escala.

2 *«Տէրողորմեա»* (այսինքն՝ Տէ՛ր, ողորմի՛ր) է կոչւում սովորաբար բրդեայ սև թելից հանգոյցներով գործուած մի յատուկ համրիչ, որն ուղղափառ քրիստոնեաներն օգտագործում են «Յիսուսեան աղօթքն» ասելիս և երկրպագութիւն կատարելիս, *ռուսերէնով՝* «комбоски-ни=կոմբոսկինի» կամ «чётки=չյոտկի»: Այս անուանումը ծագում է յունարէն σχοινί με κόμπους ձեւից, որը նշանակում է՝ «հանգուցաւոր պարան»:

Նորդի, մեծաւորի (стáрец) կամ խոստովանահօր հսկողութեան ներքոյ, որն ընդհանրապէս լինում է տարեց ու փորձառու մի վանական:

Շնչելը ծառայում է որպէս աջակցութիւն եւ որպէս աղօթքի հոգեւոր խորհրդանիշ: Յիսուսի անունը տարածուող անուշ բուրմունք է, որը քաղցր է շնչել (Երգ Երգոց Ա 2–3): Յիսուսի շունչը հոգեւոր է, այն բժշկում է, հալածում դեւերին, եւ մեզ հաղորդակից է դարձնում Սուրբ Հոգուն:

Սուրբ Հոգին աստուածային շունչն է, Աստծոյ փչումը (տես Յովհ. Ի, 22. «Այս ասելուց յետոյ նրանց վրայ փչեց ու ասաց. Առէ՛ք Սուրբ Հոգին»), այդ Սուրբ Հոգին նաեւ Աստծոյ սիրոյ զեղումն է Ամենասուրբ Երրորդութեան խորհրդում: Յիսուսի շունչը, ինչպէս նաեւ իր սրտի տրոփիւնը, միշտ միացած են այդ սիրոյ խորհրդին:

Շնչառական գործողութիւնը խիստ էական է մարմնի կենսունակութեան համար: Այն կապուած է արեան շրջանառութեան, սրտամկանի կծկումների եւ մեր էութեան ամենախորը բջիջների հետ: Յիսուսի անուան խորը շնչումը կեանք է արարածի համար. «Նա, ով տալիս է կեանք բոլորին, շունչ եւ ամէն ինչ: Քանզի Նրանով ենք ապրում եւ շարժւում» (Գործք ԺԷ 25, 28): «Սուրբ Հոգին շնչելու փոխարէն,— ասում է Գրիգոր Սինայեցին,— մենք յագեցած ենք չար ոգիների շնչով»:

Աղօթքը յարմարեցնելով շնչառութեանը, հանգստացնում է հոգին, որը գտնում է իր «հանգիստը» (յունարէն՝ hesychia, որտեղից էլ գալիս է *հեսիխասպական* խորհրդապաշտ շարժման

անուանումը)։ Հանգստացած կամ խաղաղուած հոգին լքում է արտաքին աշխարհի խառնիճաղանճն ու ցնցումները, մաքրւում է մտածումների, պատկերների, խորհրդանիշերի անկարգ շարանից։ Նա միաժամանակ միաւորւում է նրա հետ, որն աղօթում է մարմնի հետ, որի արդիւնքում մարմնաւորւում է։ Սրտի խորքում հոգին եւ մարմինը վերագտնում են իրենց սկզբնական միասնութիւնը։ Մարդ էակը վերականգնում է իր «պարզութիւնը»։

Հարկ է գտնել ներքին անդորրը, խուսափել բոլոր մտքերից, նոյնիսկ նրանցից, որոնք թւում են օրինաւոր, մշտապէս զննել սրտի խորքը եւ ասել. «Տէր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ, ողորմի՛ր ինձ»։ Երբեմն ասւում է միայն. «Տէր Յիսուս Քրիստոս, ողորմի՛ր ինձ»։ Յետոյ փոխւում է. «Որդի Աստուծոյ, ողորմի՛ր ինձ»։ Համաձայն Գրիգոր Սինայեցու, այս վերջին բանաձեւը աւելի հեշտ է սկսնակների համար։ Այդուհանդերձ նա թելադրում է, թէ կարիք չկայ յաճախ փոխել բանաձեւը, այլ միայն՝ երբեմն։ «Ուշադրութեամբ արտասանելով այս աղօթքը, կը մնաս կանգնած կամ նստած կամ էլ նոյնիսկ՝ պառկած, պահելով շունչդ, որքան որ հնարաւոր է, որպէսզի շատ յաճախ չշնչես… Կանչի՛ր Տէր Յիսուսին ջերմեռանդ ցանկութեամբ եւ համբերատար ակնկալիքով, հրաժարուիր բոլոր մտքերից… Եթէ նկատես չար ոգիների պղծութիւնը, այսինքն՝ մտքերի անմաքրութիւնը, որոնք ծածկում են ու փակում հոգին սրտի մէջ, այն ժամանակ անդադար եւ առանց ցրուելու կանչի՛ր Տէր Յիսուսին, եւ այնուհետեւ այդ ոգիներն անտեսանելիօ-

ոէն կ՛ոչնչանան՝ այրուելով աստուածային անուան զօրութիւնից: *Հեսիխան* կայանում է հէնց նրանում, որ ձգտում է սեփական սրտում փնտռել Տիրոջը, պահպանելով սիրտը աղօթքի մէջ եւ անընդհատ լինելով նրա ներսում...»[1]:

Այնուամենայնիւ, այստեղ նկատի չունենք վաստակաշատ արարքներն իբրեւ արժանիք, որպիսիք են վարդարանների (Տէրողորմեաների) թիւը, աղօթքների քանակը, ինքնազոհողութիւններն ու նուաստացումները՝ իրենց հասարակ իմաստով: Արեւելեան աստուածաբանութիւնից բացակայում է «արժանիք» հասկացութիւնը. «Մի՛ անհանգստացէք ձեր արտասանած աղօթքների քանակի մասին: Ձեր միակ մտահոգութիւնը թող լինի այն, որ աղօթքը բխի ձեր սրտից, իբրեւ կենսապարգեւ աղբիւր կենդանի ջրի: Ձեր հոգուց ամբողջովին դէն նետէք քանակի գաղափարը»[2]: Դա մեխանիկական մի վարժութիւն չէ եւ ոչ էլ՝ հոգեմարմնական (psychosomatisch) հմտութիւն, որը հարազատ է արեւելեան այլ կրօնների: Յամենայն դէպս դա, իհարկէ, մի վարժութիւն է, որը կայուն մի իրավիճակ է եւ այն կոչւում է «ուշադրութիւն» կամ նոյնիսկ՝ «զգաստութիւն», «հոգեւոր աշխատանք», «սրտի պահպանում»: Դա աղօթքի հսկումն է, որն ուզում է անդադար լինել ու ներթափանցել նոյնինքն սրտի ակունքներում:

---

1 Nil de la Sora, Regle, cap. 2, մէջբերուած J. Meyendorf–ի կողմից, S. Grégoire Palamas et la mystique orthodoxe, Paris 1959, էջ 158.

2 Teófano el Recluso, El arte de la oración. (տեսնել՝ La filocalia, Salamanca 1998, էջ 15).

ՍՐՏԻ ԱՂՕԹՔԸ

Յիսուսեան աղօթքը կոչւում է նաեւ սրտի աղօթք: Սրտի աղօթքի այս հասկացութիւնը էական է արեւելեան հոգեւորութեան մէջ, յատկապէս ռուսական աւանդոյթում: Կարելի է ասել նոյնիսկ, որ այս առումով արեւելեան աւանդոյթն իրեն թոյլ չի տուել ենթարկուել յունալատինական փիլիսոփայական ազդեցութիւններին, այլ մնացել է շատ աւելի հարազատ Աստուածաշնչեան եւ սեմական աղբիւրներին:

Հին Կտակարանում իսկապէս գոյութիւն ունի մի «սրտի աստուածաբանութիւն»: Նոյնը նաեւ առկայ է Նորում, որը բանալին է աստուածաշնչեան մարդաբանութեան: Կարելի է տարբերել սիրտն ու գլուխը, եւ դրանք նոյնիսկ միմեանց հակադրել: Գլուխը կը լինի ուղեղի, մտային եւ մտաւոր կարողութեան, տրամաբանութեան եւ բանականութեան տիրոյթը… Սիրտը, սակայն, չպէտք է սահմանափակել միայն յուզական եւ զգացական տիրոյթում: Երբեմն ասւում է՝ «սրտի մարդ է» կամ էլ՝ «գլխով կին է»: Սիրտը հոգեւոր այն հարթութիւնն է, որտեղ թէ մարմինը եւ թէ հոգին միախառնում են իրենց իսկ արմատներն իրար: Սիրտն է գոյութեան կենսական աղբիւրը:

«Սիրտն է իրականում ամբողջ յօրինուածքի տէրն ու թագաւորը, եւ երբ շնորհն է գրաւում սրտի մարգագետինները, այդ շնորհը տիրում է բոլոր անդամների եւ հոգու բոլոր մտքեր վրայ, եւ այդտեղից է, որ բարիք է ակնկալում»[1]:

---

[1] Macario, *Hom. Spirit.* XV, 20, մէջբերուած՝ J. Meyendorf, S. *Grégoire Palamas,* 28.

«Ոմանք հոգին տեղադրում են ուղեղում, ինչ-պէս մի տեսակ միջնաբերդ (acrópolis), ուրիշները դրան յատկացնում են սրտի կենտրոնական մասը, որը զերծ է որեւէ կենդանի շնչից: Ինչ վերաբերում է մեզ, մենք հաստատ գիտենք, որ մեր բանական հոգին մեր ներսում այնպէս չէ, ինչպէս կը լինէր մի բաժակում, քանի որ այն անմարմին է: Այն նաեւ դրսում չէ, քանի որ այն միացած է մեր մարմնին, այլ այն սրտում է, ինչպէս իր սեփական տաղաւարում»:

«Ինչ վերաբերում է սրտին, արեւելեան աւանդութեան մէջ այն մարդու գոյութեան կենտրոնն է, իմացութեան եւ կամքի գործուն ունակութիւնների արմատը, այն կէտը, որտեղից գալիս է եւ դէպի ուր ընթանում է ողջ հոգեւոր կեանքը: Դա այն մութ ու խորը աղբիւրն է, որտեղից բխում է մարդու ողջ հոգեկան ու հոգեւոր առաքինութիւնը, եւ որի միջոցով նա մօտենում է եւ շփւում կենաց աղբիւրի հետ»:

Յիսուսեան աղօթքն հոգեւոր հմտությունների գործադրմամբ եւ իր շնչառական յաճախականութեամբ կայանում է հոգու կամ բանականութեան դէպի սիրտ իջնելու մէջ:

«Յարմար է ուղեղից իջնել դէպի սիրտը: Առայժմ,— ասում է Թէոփանէս Ճգնաւորը (Feofan Zatvórnik, 1815–1894), ձեր մէջ Աստծոյ մասին միայն ուղեղային (մտացածին) մտորումներ կան, բայց Ստուած ինքը հիմնականում մնում է դրսում»:

«Գոյաբանական տեսակէտից մարդու համար անկումի իբրեւ հիմնական հետեւանք դարձել է հենց այս հոգեւոր քայքայումը, որով նրա անձը

զրկւում է իր կենտրոնից, եւ իր բանականութիւնը ցրւում է արտաքին աշխարհում: Վայրը, ուր տեղի է ունենում անձի տարտղնումը, գլուխն է, ուղեղն է. այնտեղ մտքերը յորձանուտներ են կազմում, ինչպէս ձեան փաթիլներ, ինչպէս ամռանը վայրի ճանճերի պարսեր: Ուղեղի միջոցով հոգին ճանաչում է մի աշխարհ, որն իր համար արտաքին է, եւ դա կատարւում է այն ժամանակ, երբ ինքը կորցնում է կապը հոգեւոր աշխարհների հետ, որի իրականութիւնը անհասկանալի կերպով սեղմում է սիրտը: Վերականգնելու համար մարդուն շնորհի մէջ, անհրաժեշտ է ուրեմն վերագտնել մի ներդաշնակ յարաբերութիւն մտքի եւ սրտի հետ»:

Պէտք է աղօթել սրտով, պէտք է գտնել սրտի աղօթքը: Պէտք է նստել մեկուսի ու հանգիստ, աղմուկից ու շարժումներից հեռու, լռութեան մէջ: Հարկ է խոնարհեցնել գլուխը դէպի սիրտը, վանել մտքերի յուզումները, ո՛չ ասել ցրուածութեանը, պատկերների, մտքերի եւ յիշողութիւնների բազմազանութեանը: Շնչել հանգիստ, դանդաղ, խորը, աղօթելով Տէր Յիսուսին: Ներքին հայեացքն ուղղել դէպի սրտի գտնուած դեռեւս մռայլ ու մութ վայրը, ուր աղօթքը, շնչառութեան ռիթմով, ներմուծում է Յիսուսի աստուածային անունը: Քիչ–քիչ Յիսուսի անունը նոյնացւում է սրտի զարկերի հետ: Յիսուսեան աղօթքի ընթացքում սիրտն ինքնին աղօթում է եւ շնչում առանց դադարի, որն այսպիսով վերածւում է «Յաւերժական աղօթքի»:

Գործողութեան այս ընթացքը մեզ համար թւում է լինել ցնցող: Նրանում տեսնում ենք անմիջապէս, ինչպէս այն խորամանկ հոգեբանը, որպի-

սին է իւրաքանչիւր արեւմտեան մարդ, ինքնաքննումի, ինքնաներշնչման, իւրովի «վերլուծութիւններ» անելու վտանգը… Ցամենայն դէպս խօսքը դրա մասին չէ: Իրականում հարցը վերաբերում է նրան, որ պէտք է ազատագրել սիրտն ու հոգին մտքերի ճնշումից, գաղափարների շարունակական յաճախումներից, «անմաքուր ոգիների» ազդեցութիւնից, որպէսզի շնորհի գործողութեան ներքոյ «սրտի ազատագրուած ներուժը» անարգել փայլեն մեր մէջ: «Սրտի մէջ է կեանքը եւ հաճելի է նաեւ այնտեղ ապրելը»[1]:

ՍՐՏԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Երբ Յիսուսեան աղօթքը վերածւում է սրտի աղօթքի, դրա առաջին ազդեցութիւնը լուսաւորութիւնն է: Չմոռանանք, որ այդ աղօթքը կոյրի աղաչական ճիչն է՝ բժշկութիւն ստանալու ակնկալիքով (Ղուկ. ԺԸ, 38), ում Յիսուսը պատասխանում է՝ բացելով նրա աչքերը եւ լոյս տալով նրան: Յարատեւ արուած Յիսուսեան աղօթքի ազդեցութիւնն է բժշկութիւն պարգեւում: «Քրիստոսի ներկայութիւնը միայն, երբ Նա յայտարարում է, որ ինքն իր կեանքը կը տայ իբրեւ փրկագին վասն բազմութեան, ինքնին «հաղորդում» է Յիսուսեան աղօթքի փրկարար էութիւնը Երիքովի կոյրին»:

Սրտի աչքերը բացւում են աստուածային լոյսի առաջ: Սիրտը լուսաւորւում է եւ նրանով՝ ամբողջ մարդը (Մտթ. Զ, 22–23): «Երբ բանականութիւնն ու

[1] La Filocalia de la Oración de Jesús, Salamanca 2004, էջ 16–17

սիրտը միաւորւում են աղօթքի մէջ, եւ հոգու մտքերը չեն ցրուած, սիրտը տաքանում է մի հոգեւոր ջերմութեամբ, եւ Քրիստոսի լոյսը շողում է նրա մէջ՝ լցնելով ներքին մարդուն խաղաղութեամբ եւ ուրախութեամբ»:

Աղօթքի միջոցով հասած լուսաւորութիւնը արդիւնք է բացառապէս շնորհի: «Միայն աստուածային շնորհն ինքնին օժտուած է այնպիսի կարողութեամբ՝ արարածներին անալոգիկ կերպով (այսինքն՝ համանման կերպով) ընձեռելու աստուածացումը. հետեւաբար, բնութիւնը փայլում է մի գերբնական լոյսով եւ յայտնւում իր սահմաններից վեր՝ տեղափոխուած փառքի ճոխութեան մէջ»: Սակայն լուսաւորութիւնը ձեռք չի բերւում առանց աշխատանքի, երբեմն այն տրւում է միայն երկար սպասումից յետոյ, երկար տառապանքից յետոյ: Դա պայմանաւորուած է նաեւ նրանով, որ սիրտը նաեւ մեղքի, մթութեան ու խաւարի տիրոյթն է: Զմոռանանք աղօթքի խօսքերի իմաստը. «Տէ՛ր Յիսուս, ողորմի՛ր ինձ մեղաւորիս»: Պէտք է ճնշել այդ խաւարը զղջումով եւ իսկական ապաշխարութեամբ, յաճախ «արցունքներով». դա «զգայնութեան քնքոյշ շնորհն» է, որն օժտում է արեւելքի հոգեւորների նայուածքն ու դէմքը շնորհալի մի քաղցրութեամբ:

«Չար ոգիների շնչից մաքրուած սրտի մթնոլորտում, ինչպէս ասուել է, անհնար է, որ չփայլի Յիսուսի աստուածային լոյսը, քանի դեռ այնտեղ չի մտել հպարտութիւնը, ունայնութիւնը, յաւակնութիւնը»:

Սրտի այս լուսաւորութիւնը գալիս է Սուրբ Հոգու գործողութիւնից, որը լոյս է: Սրտի ճշմարիտ աղօթքը միշտ մաքուր աղօթք է:

ՄԱՐԴՈՒ «ԱՍՏՈՒԱԾԱՑՈՒՄԸ»

Սրտի աղօթքի եւ լուսաւորութեան շնորհի միջոցով մարդ էակը վերականգնում է իր ներքին ներդաշնակութիւնը, իր միասնութիւնը: Թիկունք է դարձնում ցրուածութեանը, բազմազանութեանը, բաժանուածութեանը: Հոգին եւ սիրտը, շունչն ու մարմինը հաշտւում են միմեանց հետ: Մարդը վերագտնում է իր սկզբնական միասնութիւնը, ծածկւում է Աստծոյ պատկերով եւ աստուածային նմանութեամբ: Մարդը «աստուածացած» է: «Աստուածացումը» (յունարէն՝ theosis) ոչ թէ մարդու գործն է, այլ՝ շնորհի:

«Առաջին հերթին շնորհը մարդուն ցոյց է տալիս իր մեղքը, ստիպում է, որ այն յայտնուի նրա առջեւ եւ, անընդհատ նրա աչքի առաջ դնելով այդ սարսափելի մեղքը, մղում է նրան դատելու ինքն իրեն: Բացայայտում է մեր անկումը այդ սարսափելի, խորը եւ մռայլ անդունդը դատապարտութեան, որտեղ ընկաւ մեր ցեղը՝ Ադամի մեղքին մասնակցելու պատճառով: Այնուհետեւ, աղօթքի ժամանակ, կամաց–կամաց արժանացնում է նրան խորը ուշադրութեան եւ շնորհում սրտի փափկացում: Ապա այս ձեւով պատրաստելով բաժակը, յանկարծակի, անսպասելի եւ աննիւթական կերպով դիպչում է բաժանուած մասերին, եւ դրանք միանում են իրար: Ո՞վ է նա, որ դիպաւ դրանց: Ես դա չեմ կարող բացատրել: Ես ոչինչ չեմ տեսել, ոչինչ չեմ լսել, բայց ես ինձ փոխուած եմ տեսել եւ յանկարծ զգացել եմ, որ կերպարանափոխուել եմ ամենակարող զօրութեան ազդեցութեան տակ: Արարիչը գործել է վերականգ-

նումի համար նոյն ձեւով, ինչպէս որ Նա գործել էր արարչագործութեան համար: Երբ Նրա ձեռքերը դիպան իմ էութեանը, բանականութեանը, սրտին ու մարմնին: Նրանք հաւաքուեցին կառուցելու համար մի ընդհանուր միաւոր: Յետոյ նրանք սուզուեցին Աստծու մէջ եւ մնացին այնտեղ ապահով այնքան ժամանակ, որքան որ նրանք պահպանուեցին Տիրոջ անտեսանելի, անկողոպտելի եւ ամենակարող ձեռքով»:

Արեւելեան աստուածաբանութիւնը մի աշխոյժ քննարկում ապրեց ԺԴ. դարում, կայացած Գրիգոր Պալամասի եւ ոմն Բարլաամ անունով մէկի միջեւ: Վերջինս այսպէս կոչուած արեւմտեան սխոլաստիկայով տոգորուած, իրեն ուղղակիօրէն նուիրել էր սրտի աղօթքի պրակտիկան ու դրա աստուածաբանական հիմքերը կասկածի տակ դնելու աշխատանքին, յատկապէս այդ աղօթքի հետ առնչուող շնչառական մեթոտները քննադատելով, դրանով իսկ վտանգելով եւ անարգանքի ենթարկելով վանական ողջ կեանքը: Գրիգոր Պալամասն իր Եռեակներում (Tríadas) ստանձնում է *հեսիխասմի* եւ աւանդոյթի պաշտպանութիւնը, եւ, յենուելով սրբազան հայրերի աջակցութեան վրայ, ձեւակերպում է աստուածային «զօրութիւնների» (էներգիաների) վարդապետութիւնը:

Ինչպե՞ս կարող է Աստուած, որ անդրանցական է եւ բնութեամբ անմերձենալի, հաղորդել մարդուն իր շնորհը եւ, յատկապէս, մասնակից դարձնել նրան «աստուածացմանը»: Այն, որ դուք կարող էք մասնակցութիւն ունենալ Աստծոյ մէջ, որն իր գերբնական էութեամբ բացարձակապէս

անմասնակցելի է, ուրեմն պէտք է ինչ–որ բան լինի այդ անմասնակցելի էութեան եւ մասնակցութիւն հայցողների միջեւ, որը թոյլ է տալիս մասնակցութիւն բերել Աստծու մէջ… Այդ որոշակի բանը աստուածային «էներգիաներն». են՝ համեմատելի արեւի ճառագայթների հետ, որոնք բերում են լոյս եւ ջերմութիւն, թէեւ իրենց էութեամբ առանց լինելու արեւ, այդուհանդերձ մենք դրանք կոչում ենք արեւ: Դրանք աստուածային էներգիաներ են, որոնք գործում են սրտում՝ վերաստեղծելու մեզ Աստծոյ պատկերով եւ Նրա նմանութեամբ: Այս միջոցով Ստուած ինքն իրեն տալիս է մարդուն՝ առանց որ նրա համար դադարի անդրանցական (տրանսցենդենտալ) լինելուց:

Իրականում «էներգիաների» այս հարցն առաջացրել է եւ դեռ շարունակում է առաջացնել անվերջանալի քննարկումներ: Արդեօք դրանք ստեղծուա՞ծ են կա՞մ չեն ստեղծուած… Նրանց միջոցով Ստուած հաղորդո՞ւմ է իր էութիւնը, թէ՞ ոչ.. Ի՞նչ բնոյթի է այս *թէոսիսը* կամ աստուածացումը:

Մի բան միայն հաստատ է, այն, որ *հեսիխասմը*՝ Յիսուսեան աղօթքի հոգեւոր եւ աւանդական ուղղութիւնը, Գրիգոր Պալամասի կողմից օժտուել է չափազանց հաստատուն եւ խորը աստուածաբանութեամբ: Այն ժամանակ, երբ Արեւելեան կայսրութիւնն անհետանալու վտանգի առաջ էր, իհարկէ, այն օգնել է նրան վերապրել եւ տարածուել տարբեր ուղղափառ եկեղեցիներում, յատկապէս՝ Ռուսաստանում[1]:

---

[1] La Filocalia de la Oración de Jesús, Salamanca 1998, էջ 17–18.

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Սիրտն է այն վայրը, ուր հոգին եւ մարմինը հաղորդակցւում են մարդկային էակի գոյութեան խորքերում: Այս կերպ է զգացւում սրտի աղօթքի ազդեցութիւնը ինչպէս մարմնում, այնպէս էլ՝ հոգում: «Սիրտը ներքին զգայարանների կենտրոնական օրգանն է, քանի որ ինքն է արմատը ամէնքի: Ե թէ արմատը սուրբ է, բոլոր ճիւղերն էլ սուրբ կը լնեն»: «Սիրտն, ըստ էութեան, տէրն ու թագաւորն է մարմնեղէն ամբողջ օրգանիզմի, եւ երբ շնորհը գրաւում է սրտի դիրքերը, այն տիրում է բոլոր անդամների եւ բոլոր մտքերի վրայ… Ահա թէ ինչու շնորհը թափանցում է մարմնի բոլոր անդամների մէջ»[1]:

Մարմինը նոյնպէս ստանում է լուսաւորութեան ազդեցութիւնը: «Եթէ քո աչքը (քո սիրտը) առողջ է, ապա ամբողջ մարմինդ լուսաւոր կը լինի» (Մտթ. Զ 22): Աստուածային «էներգիաների» շողերի ներքոյ «սրտի էներգիաներն» իրենց հերթին կենդանանում են եւ իրենց պայծառութեամբ այլակերպում ողջ էութիւնը, ինչպէս մի ներքին արեւի ազդեցութեան ներքոյ: Շատ յաճախ է պատահում, որ աղօթողի դէմքը լուսաւորւում է մի ներքին լոյսով: Նայէ՛ք սրբերի եւ սրբուհիների, հրեշտակների եւ Սուրբ Կոյսի դէմքերին սրբապատկերներում (յատկապէս՝ նկարիչ Անդրէյ Ռուբլեովի (1360–1430) գործերում… կամ աւելի պարզունակների շարքում՝ ինչպիսին է Եղբայր Անջելիկոն (1395–1455)): Մարմ-

[1] Macario, Hom. Spirit. XV, 32, մէջբերուած՝ J. Meyendorf, S. Grégoire Palamas, 20.

նի այս կերպարանափոխութիւնը կարող է այդ սրբերի եւ սրբուհիների համար տեսանելի շնորհ դառնալ: Այս առումով ամենաբնորոշ փորձառութիւնը Ս. Սերաֆիմ Սարովսկու (1754–1833) փորձառութիւնն է, որի մասին նա պատմում է իր *«Զրոյցներ Մոտովիլովի հետ»* շարադրանքում:

— «Մենք երկուսս էլ Սուրբ Հոգու լիութեան մէջ ենք, ինչո՞ւ չես նայում ինձ:

— Չեմ կարող, հայրի՛կ,— ասացի ես, — որովհետեւ Ձեր աչքերից ճառագայթներ են դուրս գալիս: Ձեր դէմքը արեւից էլ աւելի պայծառ է դարձել, եւ իմ աչքերը ցաւից կծկուել են:

— Մի՛ վախեցիր,— ասաց սուրբ Սերաֆիմը.— քո դէմքը նոյնպէս դարձել է այնքան լուսաւոր, ինչպէս իմը: Դու այժմ նոյնպէս Սուրբ Հոգու լիութեան մէջ ես, այլապէս դու ինձ չէիր կարող այս կերպ տեսնել»[1]:

Բայց այս արտասովոր շնորհների հետ մէկտեղ, որքան այլ աւելի սովորական եւ նոյնքան վաւերական շնորհներ կան հարիւրաւոր, հազարաւոր խոնարհ ու պարզ հաւատացեալների մէջ ամբողջ Ռուսաստանում… եւ ամբողջ աշխարհում: Բոլոր եկեղեցիներում մեր տեսած ծերերի, կանանց ու երեխաների դէմքերը ճառագայթում էին, յատկապէս Սուրբ Պատարագի ժամանակ:

«Երբ դուրս էին գալիս Սուրբ Պատարագից, մեր գիւղի բոլոր տղամարդիկ եւ բոլոր կանայք նման էին «*թէոֆորների*», այսինքն՝ «Աստուածակիրների»: Բոլորն էլ Սուրբ Հաղորդութիւն էին ստացել, եւ նրանց երակներում հոսում էր Աստծոյ արիւ-

[1] Serafín de Sarov, Conversaciones con Motovilov.

նը: Նրանք Աստծոյ զաւակներ էին եւ աստուածացել էին: Իրականում, սակայն, նրանք կոպիտ, թշուառ, խեղճ գիւղացիներ են: Նրանք լաւ գիտեն, թէ ինչ են... Եւ եկեղեցուց դուրս գալով՝ Աստծուն էին կրում իրենց մէջ եւ քայլում զգուշութեամբ այնպէս, ինչպէս, մի թանկագին բան տեղափոխելիս: Եւ այսպիսով նրանք «Թէոֆորներ» էին, այսինքն՝ «Աստուածակիրներ»: Երբ դուք մի լամպ կամ մի կերոն էք տանում, ձեր դէմքը լուսաւորւում է բոցով: Երբ մարդն իր մէջ կրում է Աստծուն, որը լոյսերի լոյսն է, ներսից լուսաւորւում է այնպէս, որ նրա ամբողջ միսն ու մարմինը կերպարանափոխւում են, գեղեցկանում... Ես երբեք չեմ տեսել աւելի գեղեցիկ մաշկ կամ մարմին, քան Թէոֆորների դէմքերինը, որոնք իրենց մէջ կրում էին Աստծոյ ճաճանչափայլ լոյսը: Նրանց մարմինը աստուածացուած էր եւ դարձած առանց քաշի ու ծաւալի, այն կերպարանափոխուած էր աստուածային Հոգու լոյսով»[1]:

Այդ մաքուր, աննիւթական լոյսը, որն արդէն կերպարանափոխում է մարմինը, գրաւականն է յարութեան: Սրանք են ապագայ յարութեան նշանները. Երկրային մարմինը կարծես թէ արդէն զգեցած լինի հոգեւոր մարմին, Յիսուս Քրիստոսի կողմից փրկուածների սպիտակ հագուստը հագած: «Հոգեւոր ուրախութիւնը, որը գալիս է հոգուց մարմնին, ամբողջութեամբ չի ապականւում, երբ հաղորդակցւում է մարմնի հետ, այլ փոխակերպում է մարմինը եւ այն դարձնում հոգեւոր»[2]:

---

1 V. Gheorghiu, De la vingt–cinquième heure à heure éternelle, Paris 1965, 35.

2 Մէջբերուած J. Meyendorf–ի կողմից, S. Grégoire Palamas et la mystique orthodoxe, Paris 1959, էջ 117:

Ի վերջոյ, ինչո՞ւ չասել, որ շնորհի միջոցով վերածնուած, սրբացած եւ «աստուածացած» սիրտն արդէն էութիւնն է ապագայ յարութեան: Դա «ԵՍ» եմ, երբ ես յարութիւն եմ առնում: Դա իմ իսկական «ԵՍ»–ն է, իմ անմահ էութիւնը, իմ յաւիտենական կեանքն արդէն իսկ հիմա, եւ դա կը լինի նաեւ յարութեան ժամանակ: «Նա, ով հաւատում է ինձ,— ասում է Յիսուսը,— եթէ նոյնիսկ մեռնի, կ՛ապրի, եւ ով ապրում է եւ հաւատում է ինձ, յաւիտեան չի մեռնի» (Յովհ. ԺԱ 25):

Այն փառքը, որ ունեն սրբերն այսօր իրենց հոգիներում, յարութեան օրը կը ծածկեն, կը զգեստաւորեն եւ դէպի երկինք կը բարձրացնեն իրենց մերկ մարմինները… Ահա թէ ինչու յարութեան ժամանակ նոյնինքն իրենց սեփական մարմինը ստանում է Հոգու յաւերժական բարիքները, որոնք միաւորուում են հոգիներում իրենց ունեցած փառքին:

Ի՞նչ է, ուրեմն, հոգեւոր աղօթքը: Իսահակ Նինուէցին (մօտ. 613–700) ասում է. «Դա մեր ապագայ վիճակի խորհրդանիշն է»[1]:

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Յիսուսեան աղօթքը շատ խորն է, շատ ներքին, շատ անձնական, շատ մտերմիկ: Բայց մի՞թէ դա վտանգ չի պարունակում մեկուսացնելու հաւատացեալին մնացած աշխարհից, նրան յետ քաշելու, ինքն իր մէջ փակելու եւ համայնքից բաժանելու: Նման բան չկայ, խօսքը նոյնիսկ հակառակի մա-

[1] La Filocalia, Quina edición, Salamanca 1998, էջ 20–21:

սին է: Առաջին հերթին, Յիսուսեան աղօթքը կարող է բնակուել միայն մկրտուածի սրտում: Մկրտութիւնն է, որ վերականգնում է սիրտը Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Մկրտութիւնից սկսած՝ Յիսուսի անունը մեր մէջ բաբախել է տալիս մի նոր սիրտ: Դա այլեւս քարէ սիրտը չէ, այլ դա մարմնեղէն մի սիրտ է, որն այսուհետեւ միայն Յիսուսին է տենչում:

«Մկրտութեան պահից սկսած, մեր հոգին, Սուրբ Հոգու միջոցով, աւելի պայծառ է դառնում քան արեւը, եւ մենք խորհրդածում ենք ոչ միայն Աստծոյ փառքի մասին, այլ նոյնիսկ ստանում ենք Նրա ճառագայթող փայլը, ինչպէս մաքուր արծաթը, որը ճառագայթների ազդեցութեան ներքոյ դառնում է աւելի փայլուն, ոչ միայն իր ունեցած բնութեան պատճառով, այլ՝ արեւի պայծառութեան պատճառով… Ամփոփելով, ահաւասիկ սրանք են մկրտութեան ազդեցութեան արդիւնքները. ջնջել մեղքերը, հաշտեցնել մարդուն Աստծու հետ, միաւորել Աստծուն մարդու գոյութեան հետ, բացել հոգու աչքերը աստուածային ճառագայթի առջեւ, վերջապէս ամէն ինչ կարգի բերել ապագայ կեանքի համար»[1]:

Մկրտուած սիրտը շնորհ է ստանում: Յիսուսի անունը ինչ–որ կերպ դրոշմւում է նրա վրայ եւ նրա մէջ: Յիսուսեան աղօթքը մկրտութեան շնորհի ընդարձակումն է:

Մի անանուն հեղինակ ասում է. «Այն շնորհը, որ ստանում ենք սուրբ Մկրտութեան ընթացքում,

---

[1] Nicolás Cabasilas, մէջբերուած J. Meyendorf–ի կողմից, S. Grégoire Palamas, 40.

թաքնուում է հոգու խորքերում»: Շնորհն այնուհետեւ թաքնուում է նոյնպէս սրտի խորքերում: Սիրտը նման է Սամարացի կնոջ խորը ջրհորին (Յովհ. Դ), ուր անդադար հոսում է կենդանի ջուր, որը միայն ցանկանում է տեւապէս բխել յանուն յաւերժական կեանքի: «Սրտի աշխատանքը, ինչպէս նաեւ մարմնական յոգնութիւնը,— ասում է Գրիգոր Սինայեցին,— կատարում են իրական գործը: Նրանք ցոյց են տալիս այն գործողութիւնը, որը տրուել է քեզ, ինչպէս նաեւ ցանկացած հաւատացեալի մկրտութեան շնորհիւ, որը, սակայն, պատուիրանների նկատմամբ ունեցած անփութութիւնը, թաղում է կրքերի տակ»:

Մկրտուած սիրտը ձգտում է միայն Տէր Յիսուսին: Ուզում է ապրել, գործել ու շնչել միայն Նրանով: Յիսուսեան աղօթքն իրագործում է այդ ձգտումը, արձակում է սրտի «էներգիաները», որոնք մկրտութեան շնորհիւ իրենց աղբիւրն ունեն սրտի ներսում: Այդ աղօթքը թոյլ է տալիս սրտին բացուել Յիսուսի անունով, որը կրկնուում է առանց դադարի եւ անխոնջ սիրով:

ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ՝ ՍՐՏԻ ՄՆՈՒՆԴ

ԺԴ. դարի սրբազան հայրերն ու աստուածաբանները՝ Գրիգոր Սինայեցին, Գրիգոր Պալամասը, Նիկողայոս Կաբասիլասը պնդում էին այն փաստը, որ աղօթքը անհատական մի հմտութիւն չէ, այլ այն իր ակունքն ունի եկեղեցու խորհուրդներում, որպիսիք են Մկրտութիւնը, Դրոշմը, Ս. Պա-

տարագը: Մկրտութիւնը կեանք է տալիս սրտին, իսկ Ս. Հաղորդութիւնը սրտի իսկական սնունդն է: Յիսուսն ասում է. «Իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, եւ իմ արիւնը ճշմարիտ ըմպելիք» (Յովհ. Զ 56):

«Տէրը մեզ տուել է իր մարմնի եւ արեան խորհուրդը, որպէսզի սնուցանի եւ զարգացնի մեր հոգեւոր կեանքը… Դա մեր կեանքը պահպանող ու հզօրացնող գերբնական աղբիւրն է: Քրիստոնէութեան ակունքներից ի վեր բարեպաշտութեամբ բոցավառուած հոգիները յաճախակի Ս. Հաղորդութիւն ստանալը համարում էին առաջնային օգուտ… Բոլոր սրբերի ընդհանուր կարծիքն է, որ առանց Ս. Հաղորդութեան չկայ փրկութիւն, եւ առանց յաճախակի հաղորդուելու չկայ առաջընթաց հոգեւոր կեանքում»[1]:

Այն հաւատացեալը, որն ընդունում է Ս. Հաղորդութիւնը, ընդունում է Քրիստոսին: Նա դառնում է «Աստուածակիր», այսինքն՝ «Թէոֆորոս», սա նաեւ այն անունն է, որն Արեւելքում տրւում է սուրբ հայրերին եւ Քրիստոսի ճգնաւորներին: Իսկ Ս. Հաղորդութեան առկայութիւնը աղբիւրն է սրտի լոյսի եւ ջերմութեան:

«Նոյնինքն Քրիստոսի մարմնում մարմնաւորապէս բնակւում է աստուածութեան ամբողջ լիութիւնը (Կողոս. Բ 9): Նա ուրիշ ո՞ւմ պիտի լուսաւորի, եթէ ոչ նրանց, ովքեր արժանաւորապէս հաղորդւում են Իր մարմնի աստուածային ճառագայթով, որը մեր մէջ է եւ մաքրում է մեր հոգին, այնպէս, ինչպէս Նա լուսաւորեց իր աշակերտների մարմինները Թաբոր լեռան վրայ, որովհետեւ այն ժամա-

[1] Teófano el Recluso, en “Ascetes russes”, Namur 1957, էջ 139.

նակ, այդ մարմինը՝ շնորհի լոյսի աղբիւրը, դեռ միացած չէր մեր մարմնին, դրա համար էլ լուսաւորում էր միայն դրսից: Այսօր, սակայն, երբ Նա Ս. Հաղորդութեան միջոցով մեր մէջ է, հէնց ներսից է լուսաւորում հոգին»[1]:

«Կենաց հացը մեզ հնարաւորութիւն է տալիս դառնալ Քրիստոսի անդամներ, շատ աւելի կատարեալ, քան ցանկացած այլ սրբազան ծէս: Որովհետեւ, ինչպէս գլխով եւ սրտով են ապրում անդամները, այնպէս էլ՝ «Ինձ ուտողը ինձանով կ՚ապրի յաւիտեան»,— ասում է Փրկիչը… (Յովհ. Զ 52): Սրտի եւ գլխի բնական աշխատանքի միջոցով, մենք միացած ենք եւ ապրում ենք այնպէս, ինչպէս Ինքն է ապրում… Նա է մեզ հաղորդում կեանքը, ինչպէս սիրտն ու գլուխը հաղորդում են այն մարմնի անդամներին… Ով որոշել է ապրել Քրիստոսի մէջ, պէտք է անպայման կախուած մնայ Նրա սրտից ու Նրա գլխից, քանի որ կեանքն այլ տեղից չի գալիս… Մեր անդամները պէտք է սրբութեամբ պահուեն, քանի որ նրանք Քրիստոսի անդամներ են՝ կախուած այն սրտից, որը Քրիստոսն է: Մենք պէտք է ունենանք այն նոյն զգացմունքներն ու ցանկութիւնները, ինչպէս Նա»[2]:

Մենք յիշում ենք Յովհաննէս առաքեալին, որը հինգշաբթի երեկոյեան, ընթրիքից յետոյ, թեքուել էր դէպի Յիսուսի կուրծքը: Յովհաննէսը աստուածաբան է, ինչպէս նրան անուանում է Արեւելեան եկեղեցին: Նա սրտի աստուածաբան է: Գրկի, կրծ-

---

1 Gregorio Palamas, *Triades*, մէջբերված J. Meyendorf-ի կողմից, S. Grégoire Palamas, էջ 114.

2 Nicolás Cabasilas, մէջբերուած J. Meyendorf-ի կողմից, S. Grégoire Palamas, 142.

քի կամ ծոցի այս պատկերը բազմիցս յայտնւում է Նրա Աւետարանում. «Միածին Որդին Հօր գրկում է» (Յովի. Ա 18). «Նա, ով հաւատում է Ինձ,— ասում է Յիսուսը,— Նրա ծոցից կենդանի ջրի գետեր պիտի բխեն» (Յովի. Է 38): «Աշակերտը, ում Յիսուսը սիրում էր, եւ ում Նա վստահեց իր մորը՝ ասելով. «Ահա քո որդին», մնաց Վարդապետի սրտի մօտ եւ թափանցեց Նրա մտերմութեան մէջ:

Սիրտը տաղաւարն է, սրբավայրը, տաճարը, ուր Տիրոջ ներկայութիւնը եւ փառքը հանգչում են ինչպէս մի ամպ: Այնտեղ է նաեւ ճշմարիտ գանձը. «Եւ ի վերջոյ, ուր ձեր գանձն է, այնտեղ կը լինի նաեւ ձեր սիրտը» (Մտթ. Զ 21):

ԵԿԵՂԵՑՈՒ ՍԻՐՏԸ

«Այն ամէնը, ինչ Յիսուսն ասաց մեզ իր սրտի մասին, իրականում վերաբերում է Հօր սրտին: Հօր սիրտն այն մոդելն է, որը վերարտադրեց Յիսուսի սիրտը: Թերեւս ամենագոհացուցիչ պատկերը, որ մենք կարող ենք ձեւաւորել Հօր մասին, դա սրտի պատկերն է, առաջին յոյզը, որը տարածւում է ամենուր, առաջին Սէրը, որը շարժում է բոլոր բաները, աստղերն ու հոգիները: Այդ սրտի իւրաքանչիւր զարկը մի մղում է, որով Հայրն Ինքն իրեն ընծայում է: Սրտի այդ բաբախիւնները դէպի մեզ են ուղարկում Որդու արիւնը՝ միախառնուած Հոգու շնչով կենսալից:

Հայրը սիրտ է: Հօր կամքի համաձայն ապրելը նշանակում է ապրել այդ սրտի կախուածութիւնից:

Միաւորէ՛ք ձեր սրտի իւրաքանչիւր զարկը աստուածային սրտի զարկերին:

Յիսուսը մարդացաւ, եւ ահա, մարդկային սիրտն առաջին անգամ է, որ սկսում է բաբախել Աստծոյ սրտի հետ կատարեալ միութեան մէջ: Առաջին անգամ է, որ Հօր հանդէպ կատարեալ սէրը բաբախել է տալիս մարդկային սիրտը: Առաջին անգամ է որ մարդու սիրտը սկսում է բաբախել կատարեալ սիրով մարդկանց հանդէպ»[1]:

Սիրտը լոկ անհատական մի չափանիշ չէ, այլ այն տիեզերական, երկնային մի հարթութիւն է, եւ Ստուած ինքը «տիեզերքի սիրտն է»[2]:

Յիսուսեան աղօթքը, նոյնիսկ երբ այն պահանջում է լռութիւն եւ առանձնութիւն, չի մեկուսացնում հաւատացեալին: Դա նրան չի բաժանում համայնքից, չի հեռացնում եկեղեցուց կամ աշխարհից: Ընդհակառակը, սրտի աղօթքն իր կեանքը ստանում է խորհուրդների աղբիւրից, Եկեղեցու աղօթքից:

ԷԱԿՆԵՐԻ ԵՒ ԻՐԵՐԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՔՈԽՈՒԹԻՒՆԸ

Սիրտը, որն աղօթում է կենդանի էակի ամենամտերիմ խորքերում, այնուամենայնիւ այն շփւում է նաեւ էակների եւ իրերի հետ: Դա անպայման բառերի կամ գաղափարների շփումը չէ, այլ դա յա-

---

1 Jesus, simples regards sur le Sauveur, Un moine de l'Église d'Orient, Chevetogne 1960, 144.

2 Clemente de Alejandría, մէջբերված H. de B., La prière du coeur, 16.

ճախ լռութեան մէջ ստեղծուած եւ գթութեամբ տոգորուած սրտի ներկայութիւնն է:

Նա, ով սիրում է Աստծուն իր ամբողջ սրտով, սիրում է նաեւ իր մերձաւորին, ինչպէս ինքն իրեն: Այդ շփումը տրւում է նոյնիսկ մեղաւորին կամ անհաւատին: Դէ ամէն մարդ մի «սիրտ» ունի, նոյնիսկ եթէ ինքը դա չի գիտակցում: Ո՞վ գիտէ, եթէ սրտի գթութիւնը անհաւատի կամ մեղաւորի մէջ չի արթնացնում սրտի այն ներկայութիւնը, որն ինքն անտեսում էր իր էութեան խորքում: Ո՞վ գիտէ, եթէ սիրոյ այդ ներկայութիւնը չի կարող երբեմն դուրս հանել դեւերին, վանել անմաքուր ոգիները, բուժել... Քանի՞ սրբեր, յայտնի թէ անյայտ, եւ քանի՞ պարզ հաւատացեալներ, դեռ չեն օժտուած նման շնորհներով:

Մեծարանք ընծայող սիրտը, ինչպէս տեսանք, մասնակից էր նաև մի տեսակ կերպարանափոխութեան: Այն ուրիշներին էլ նոյնպէս մասնակից էր դարձնում դրան, եւ ոչ միայն մարդկանց, այլ՝ բոլոր էակներին եւ ամէն ինչին:

«Միեւնոյն ժամանակ, երբ ես աղօթում էի, այն ամէնը, որ շրջապատում էր ինձ, ինձ երեւում էր մի սքանչելի տեսքով. ծառերը, խոտը, թռչունները, երկիրը, օդը, լոյսը: Ամէն ինչ կարծես ինձ ասում էր, որ ինքը գոյութիւն ունի մարդու համար, ամէն ինչ աղօթում էր, ամէն ինչ երգում էր Աստծոյ փառքը: Այս ձեւով է հասկացւում այն, ինչը Ֆիլոկալիա է կոչւում՝ «Արարչագործութեան լեզուի իմացութիւն», ինչպէս նաեւ Աստծոյ արարածների հետ զրուցելու հնարաւորութիւն»[1]:

---

[1] Relatos de un peregrino Ruso, Salamanca 1992, էջ 37.

«Սրտի աղօթքն ինձ այնքա՞ն էր ուրախացնում, որ ես մտածում էի, որ երկրի վրայ ես չեմ կարող սրանից աւելի երջանիկ լինել: Մտածում էի նաեւ, թէ ինչպէս կարող են երկնքի արքայութեան հրճուանքներն աւելի մեծ լինել քան երկրայիններ-ը: Երջանկութեան այս զգացումը լուսաւորում էր ոչ միայն իմ հոգու ներսը, այլեւ արտաքին աշխարհն ինձ յայտնւում էր մի սքանչելի տեսքով, եւ ամէն ինչ ինձ մղում էր սիրելու Աստծուն եւ փառաբանելու Նրան: Մարդիկ, ծառեր, բոյսեր, կենդանիներ, ամէն ինչ հարազատ էին ինձ, եւ ամենուր ես յայտնաբերում էի Յիսուս Քրիստոսի անուան պատկերը: Երբեմն ինձ այնքան թեթեւ էի զգում, որ կարծում էի, թէ մարմին չունեմ եւ ասես քաղցրօրէն սաւառնում եմ օդում: Երբեմն ամբողջութեամբ մտնում էի ինքս իմ մէջ: Ես պարզ տեսնում էի իմ ներսը եւ հիանում մարդկային մարմնի սքանչելի աշխատանքով»[1]:

Սրբերը յաճախ ներկայացուած են իբրեւ արջերի, գայլերի եւ անտառի այլ գազանների հետ ներդաշնակ համակեցութեամբ ապրող մարդիկ: Այսպէս է եղել, օրինակ, սուրբ Սերգէոսի եւ սուրբ Սերաֆիմի պարագաներում: Ի վերջոյ, ո՞վ կարող է ասել, եթէ կենդանի էակները, անասուններն ու բոյսերը, մի տեսակ իւրովի «սիրտ» չունեն: Իւրաքանչիւր էակի մէջ, որքան էլ նա փոքր ու աննշան լինի, կայ կեանքի մի առեղծուած: Ինչո՞ւ կեանքը չի հաղորդակցում կեանքի հետ: Էակներն ու իրերը նոյնպէս մատուցում են իրենց տեսակէտով մի իւրովի տիեզերական պատարագ: Յիսուս Քրիստո-

[1] Relatos de un peregrino Ruso, Salamanca 1992, էջ 82:

սը գլուխն է եկեղեցու, Նա նաեւ անդրանիկն է ողջ ստեղծագործութեան:

«Աստուած ի՜մ, որքա՜ն երջանիկ էի զգում ես ինձ այդ պահին,— ասում է աղօթքի մէկ այլ վկայութիւն:— Ինձ թւում էր, որ իւրաքանչիւր խոտ, իւրաքանչիւր ծաղիկ, աշորայի իւրաքանչիւր հասկ ինձ շշնջում են խորհրդաւոր խօսքեր աստուածային էութեան մասին, որը շատ մօտ է մարդուն, իւրաքանչիւր կենդանուն, ամէն ինչին՝ խոտաբոյսերին, ծաղիկներին, ծառերին, հողին, արեւին, աստղերին եւ ամբողջ տիեզերքին»[1]:

Ո՜հ, ինչ լաւ է Աստծուն սիրելը: Ես երբեք չեմ մոռանայ իմ գոյութեան այն ոսկէ օրերը, երբ առաւօտեան, արեւածագից առաջ, ես ճամփայ էի ընկնում: Ինչքա՜ն քաղցր էր դա: Ցորենը, վարսակը, աշորան ծովի նման ծփում էին այս ու այն կողմ, արտոյտները երգում էին, ծիծեռնակները, ինչպէս հրավառութիւն, թռչում էին մեր շուրջն ու մեր մերձակայքում, եւ մենք գնում էինք տիրակալի պէս, որն իր քայլերը դնում է մէկը միւսի մօտ իր առջեւ բացուած սքանչելի ու բազմերանգ գորգի վրայ՝ կազմուած անուշաբոյր ու փափուկ խոտաբոյսերից:

Որքա՜ն գեղեցիկ են Տիրոջ գործերը: Կային օրեր ու գիշերներ, երբ ես բառացիօրէն մեռնում էի Աստծոյ հանդէպ իմ ունեցած սիրուց: Իմ հոգու եւ մարմնի բոլոր մասերը կլանուում էին իմ՝ Աստծոյ հանդէպ տածած սիրոյ բոցով: Յիսուս Քրիստոսի կամ Աստծոյ անունը միայն բաւական էր ինձ անմիջապէս փոխակերպելու մէկ այլ արարածի»[2]:

---

1 Archimandrita Spiridon, Mes missions en Sibérie. Souvenirs d'un moine orthodoxe ruusse, Paris 1950, էջ 19.

2 Նոյն տեղում, էջ 30:

ԱՇԽԱՐՀԸ, ՈՐԸ ԳԱԼՈՒ Է

Սրտի լուսաւորութիւնը, աստուածանալու շնորհը, էակների եւ իրերի կերպարանափոխութիւնը աւետում են գալիք աշխարհի գոյութիւնը: Այլակերպութեան լոյսը, նախապատկերուած Մովսէսի դէմքին Սինայի անապատում, իր ողջ շքեղութեամբ փայլելով նաեւ Թաբոր լեռան վրայ՝ ի դէմս Յիսուսի, աւետում է հրաշափառ յարութիւնը, նոր աշխարհը: Ի դէպ, հայրաբանական աւանդոյթն էլ այս հարցում միատեսակ է, երբ մեկնաբանում է Աւետարանի հաղորդումը պայծառակերպութեան մասին որպէս Տիրոջ երկրորդ գալուստի ակնկալիք: Արդ, քրիստոնեայի համար այս երկրորդ գալուստը կազմում է մի կենսատու իրականութիւն իր եկեղեցական կեանքում եւ իր հոգեւոր փորձառութեան մէջ: Գալիք թագաւորութիւնն արդէն մեր ներսում է եւ սպասում է իր փառահեղ դրսեւորմանը Վերջին օրը[1]:

Վախճանաբանութիւնը (էսխատոլոգիան) կարեւոր տեղ է գրաւում Արեւելեան եկեղեցու հոգեւոր կեանքում եւ աստուածաբանութեան մէջ: Քրիստոնեայ Արեւելքն է, որ Արեւմուտքի արուեստին փոխանցել է իր գերիշխող թեմաները, ի մասնաւորի, «Վերջին Դատաստանի» թեման, որը զարդարում է գրեթէ մեր բոլոր մեծ տաճարների վերնաճակատը եւ ներշնչանքի աղբիւր է պարզունակ ու գրաւիչ ոճի ամենամեծ նկարիչների համար: Ուղղափառ եկեղեցիներում գուցէ շատ չեն Վերջին Դատաստանի սրբապատկերները: Բայց կարելի է ասել, որ

[1] J. Meyendorf, S. Grégoire Palamas, էջ 120.

ամբողջ եկեղեցին ինքնին երկնքի սրբապատկերն է (իկոնը): Քառաթեւ բազիլիկ եկեղեցու կենտրոնական գմբէթում, մի շատ բարձր տեղ, տիրապետող է Քրիստոս ամենազօրի (յուն. Παντοκράτωρ=–Պանտոկրատոր=ամենազօր) կերպարն իբրեւ դատաւոր: Աստուածածնի եւ սրբերի պատկերները շրջապատում են խորանի երգչախմբի տարածքը: Ամէն մէկն իր լոյսով երկնային աշխարհի արտացոլումն է, որի ներկայութիւնն արդէն կերպարանափոխում է մեր աշխարհը: Սուրբ Պատարագը երկնային կեանքն է երկրի վրայ: Պաշտամունքն իր զոհասեղանով, իր գահով, իր ճրագով Յայտնութեան գրքի առաջին մեծ տեսիլքի իրականացումն է (Գլուխ Դ եւ Ե):

«Աստուածային պաշտամունքի ժամանակ մտնելով եկեղեցի, դու մտնում ես այլ աշխարհի նման մի տեղ: Տաճարը կարծես թէ անհետանում է քո առջեւ եւ սկսւում յաւերժութիւնը… Երկրի վրայ ամէն ինչ պատկերն ու ստուերն է այն ամէնի, ինչ արւում է երկնքում: Այսպիսով, երկրի վրայ աստուածային պաշտամունքը Սուրբ Պատարագի ձեւով, պատկերն է երկնքում մատուցուող աստուածպաշտութեան: Եկեղեցիների գեղեցկութիւնը պատկերն է երկնային տաճարի գեղեցկութեան: Լոյսը պատկերն է երկնքում Աստծոյ անհասանելի փառքի: Խնկի հաճելի բուրմունքը պատկերն է սրբութեան անճառելի անուշահոտութեան: Երգն այստեղ, ներքեւում, արձագանքն է այնտեղ, վերեւում, հրեշտակային փառաբանութեան անճառելի երգի»[1]:

---

[1] J. de Cronstadt (Ivan Ilyich Sergiyev), տե՛ս Ascetes russes.

Այո, մարդն իրեն ինչպէ՞ս կարող է վեհացած չզգալ՝ ռուսական եկեղեցիների այդ ճոխ շարա-կանների հոյակապ երգեցողութեան ժամանակ: Այդ պահերին կարծես թէ գալիք աշխարհը շատ մօտ է: Այն, այնտեղ իր տեղում է: Անհրաժեշտ է, սակայն, միայն մի «ակնթարթ», որպէսզի այն յայտնուի:

Այս կերպ ենք տեսնում միստիկական աղօթքի աւարտը. ամբողջական մարդու կերպարանափո-խութիւնը իր հոգու եւ մարմնի միասնութեան մէջ աստուածային լոյսով: Ի վերջոյ, Քրիստոսի եւ Սուրբ Հոգու լոյսը փառահեղ փայլն է Ամենասուրբ Եր-րորդութեան:

Շնորհի խորհրդի անքննելի ազդեցութեան արդիւնքում փոխւում է մարդկային բնութիւնը: Մա-տերիայի խաւարն անհետանում է պարտուած, որով զգալի է դառնում Հոգու հզօրութիւնը, եւ մարդն ընդունակ է լինում ըմբոշխնելու Աստծոյ շքեղ փառքը:

ԱՆԱՊԱՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՐԻ ԱՍՈՅԹՆԵՐԻՑ [1]

Հայր Բեսարիոնը (Վիսարիոն) մահանալիս ասաց. «Անհրաժեշտ է, որ Վանականը լինի ոչ աւելին, քան աչք, ինչպէս սերովբէներն ու քերովբէներ են»:

* * *

Հայր Դուլասն ասաց. «Երբ թշնամին մեզ յորդորում է լքել մենակութիւնը (հեսիխիա), եկէք չլսենք նրան: Ոչինչ աւելի հզօր չէ, քան սովի ու մենակութեան դաշինքը՝ պայքարելու համար այդ թշնամու դէմ: Այդ դաշինքը սրում է ներքին աչքերի տեսողութիւնը»:

* * *

(Լսուել է Եպիփանի կողմից). «Ճշմարիտ վանականն իր սրտում միշտ պէտք է ունենայ աղօթքն ու սաղմոսերգութիւնը»:

---

[1] La Filocalia, Quinta edición, Salamanca 1998, էջ 20–21: Նաեւ՝ Apotegmas de los Padres del desierto, Ediciones Sígueme. Salamanca 1985. էջեր 27–31, 89–115 y 166–168.

* * *

Եւագրն էլ ասաց. «Ինչի՞ր քո բազմաթիւ յարաբերութիւնները, եթէ չես ցանկանում, որ քո հոգին մոլորուի եւ խանգարի քո մենակութիւնը» (հեսիխիա):

* * *

Եղիան ասաց. «Մարդիկ իրենց հոգին դնում են կամ իրենց թերութիւնների մէջ, կա՛մ Յիսուսի մէջ, կա՛մ էլ մարդկանց մէջ»:

* * *

Թէոնասն ասաց. «Մենք յաճախ ենք ընկնում մարմնի կրքերի գերութեան մէջ, քանի որ մեր հոգին անտեսում է Աստծոյ դիտաւորութիւնը մեր նկատմամբ»:

* * *

Յովհաննէս Կոլոբոսն (Յովհաննէս Կարճահասակը) ասաց. «Բանտում լինել նշանակում է խցում նստած մնալ եւ անընդհատ յիշել Աստծուն: Դա նման է այն խօսքին, որն ասում է. «Ես բանտում էի, եւ դու ինձ այցելեցիր»:

* * *

Քրոնիոսն ասաց. «Թող հոգին միշտ պահի իր սթափութիւնը, թող հեռանայ մոլորութիւններից եւ հրաժարուի իր սեփական կամքից: Այնուհետեւ Աստծոյ Հոգին կը մօտենայ նրան»:

* * *

Պիմէնն ասաց. «Մեզ պէտք է միայն մէկ բան՝ զգաստ հոգի»:

* * *

Պիմէնն ասաց նաեւ. «Ցրուածութիւնն է սկիզբը բոլոր չարիքների»:

* * *

Պատմում են, որ մի ծեր վանահայր յիսուն տարի էր անցկացրել առանց հաց ուտելու եւ առանց գինի խմելու: Եւ հէնց ինքն էլ հաստատել է. «Ես իմ մէջ կարողացայ ոչնչացնել պոռնկութիւնը, ագահութիւնը եւ սնափառութիւնը»: Աբբայ Աբրահամը, իմանալով, որ նա այդպէս է արտայայտուել, գնում է ասելու նրան. «Դո՞ւ ես արտասանել այդ խօսքերը»: Նա պատասխանում է. «Այո»: Այնուհետեւ աբբայ Աբրահամն ասում է նրան. «Ենթադրենք, երբ դու մտնում ես քո խուցը, քո անկողնում մի կին ես գտնում, կարո՞ղ ես մտածել, որ դա կին չէ»: «Ո՛չ,— պատասխանում է նա,— բայց ես կը պայքարեմ իմ մտքերի դէմ, որպէսզի երբեք ձեռք չտամ նրան»: Այնուհետեւ աբբայ Աբրահամն ասում է նրան. «Տեսնո՞ւմ ես, որ դու չես ոչնչացրել քո կիրքը, այլ այն դեռ ապրում է քո մէջ, թէեւ շղթայուած վիճակում: Բայց ենթադրենք նորից, որ քայլելիս քարերի եւ խեցիների մէջ ոսկի ես տեսնում, կարո՞ղ է քո հոգին այդ ամէնին նոյն արժէքը տալ»: «Ո՛չ,— պատասխանում է նա,— բայց ես կը պայքարեմ իմ մտքերի դէմ, որպէսզի չվերցնեմ ոսկին», ապա շարու-

նակում է. «Այո՛, կիրքն ապրում է, բայց այն շղթայուած է»: Աբբայ Աբրահամը եւս մէկ անգամ հարցնում է. «Ենթադրենք, որ դու լսում ես երկու եղբօր միջեւ եղած խօսակցութիւնից, որ նրանցից մէկը սիրում է քեզ, իսկ միւսը ատում եւ չար բաներ է ասում քո մասին, եթէ նրանք գան տեսնելու քեզ, կ՚ընդունե՞ս նրանց երկուսին էլ նոյն ձեւով»: «Ո՛չ,— պատասխանում է նա,— բայց ես կը պայքարեմ իմ մտքերի դէմ, որպէսզի ինձ ատողի հետ էլ նոյնքան լաւ ու սիրալիր լինեմ, որքան ինձ սիրողի հետ»: Աբբայ Աբրահամն ասում է նրան. «Այդ դէպքում, ուրեմն, կրքերը շարունակում են ապրել քո մէջ, բայց դրանք շղթայուած են սրբերի կողմից»:

ԱԲԲԱՅ ԱՂԱԹՈՆ

1.— Ղովտի աշակերտ աբբայ Պետրոսը պատմում է. «Մի օր, երբ ես աբբայ Աղաթոնի խցում էի, մի աշակերտ եկաւ նրան ասելու. «Ես ցանկանում եմ ապրել իմ եղբայրների հետ, ասա՛ ինձ, թէ ինչպէս պէտք է ապրեմ նրանց հետ»: Վանահայրը պատասխանեց. «Երբ գնում ես ապրելու նրանց հետ, կեանքիդ իւրաքանչիւր օրը պահպանիր քո օտարական լինելու հանգամանքը, ինչպէս առաջին օրն ունէիր, որպէսզի քեզ չափազանց ազատ չզգաս»: Այնուհետեւ աբբայ Մակարը, որը նոյնպէս այնտեղ էր, հարցրեց. «Ի՞նչ է տալիս այդ ազատութիւնը»: Վանահայրը պատասխանեց. «Այն նման է մի այրող եւ մոլեգնող քամու, որն ամէն անգամ, երբ բարձրանում է, ամէն ոք փախչում է նրա ճանապարհից, իսկ այդ քամին ոչնչացնում է ծառերի պտուղները»: Այնուհետեւ Մակարն ասաց. «Իսկ լե-

զուի ազատութիւ՞նը, մի՞թէ դա էլ վնասակար է»: Եւ աբբայ Աղաթոնը պատասխանեց. «Չկայ աւելի սարսափելի մեղք, քան լեզուի սանձարձակութիւնը, քանի որ այն է պատճառը բազում մեղքերի: Աշխատասէր մարդուն յարմար չէ օգտուել լեզուի ազատութիւնից, եթէ նոյնիսկ նա միայնակ է ապրում իր խցում: Ես գիտեմ մի եղբօր մասին, որը երկար ժամանակ է, որ ապրում է մի խցում, ուր մի պատգարակ կայ, եւ նա ինձ մի անգամ ասաց. «Ես նոյնիսկ կը թողնէի խուցը՝ առանց նկատելու այդ պատգարակը, եթէ մէկը դրա մասին ինձ չյիշեցնէր»: Ահա թէ ինչպիսին է աշխատասէր եւ մարտունակ վանականը»:

* * *

2.— Աբբայ Աղաթոնն ասում էր. «Վանականը ոչ մի դէպքում չպէտք է թոյլ տայ, որ իր խիղճը մեղադրի իրեն»:

* * *

3.— Բացի դրանից նա ասում էր, որ եթէ մարդը չի պահում Աստծոյ պատուիրաններ, նա չի կարող առաջադիմել ոչ իսկ մէկ առաքինութեան մէջ:

* * *

4.— Նա ասում էր նաեւ, «Ես երբեք չեմ քնել որեւէ մէկի դէմ բողոք ունենալով, եւ ինչքան կարող էի, երբեք թոյլ չեմ տուել, որ որեւէ մէկն էլ քնի իմ դէմ բողոք ունենալով»:

* * *

5.— Աբբայ Աղաթոնի մասին ասւում էր, որ մարդիկ գնում էին նրան փնտռելու, քանի որ լսել էին նրա մեծ խորաթափանցութեան մասին: Ցանկանալով ստուգել, եթէ նա պիտի բարկանայ, հարցրին նրան ու ասացին.

— Դո՞ւ ես այն Աղաթոնը, որի մասին ասում են, որ նա պոռնկացող է եւ հպարտ

— Այո՛, դա ճիշտ է, — պատասխանեց նա: Նրանք շարունակեցին.

— Դո՞ւ ես այն Աղաթոնը, որ անվերջ յիմարութիւններ է խօսում եւ վատաբանում ուրիշների մասին:

— Այո՛, դա ես եմ:

Նրանք շարունակեցին.

— Դու Աղաթոն հերձուածո՞ղն ես:

Նա պատասխանեց.

— Ես հերձուածող չեմ,

Այնուհետեւ նրան հարցրին.

— Ասա՛ մեզ, ինչո՞ւ ընդունեցիր այն ամէնը, ինչը մենք բարդեցինք քեզ վրայ, բայց մերժեցիր այս վերջին մեղադրանքը:

Նա պատասխանեց.

— Առաջին մեղադրանքները ես ինքս էլ հնչեցրել եմ իմ դէմ, քանի որ դա օգուտ է տալիս իմ հոգուն: Բայց հերձուածողութիւնը նշանակում է՝ Աստծուց բաժանում: Դէ, ես չեմ ուզում բաժանուել Աստծուց:

Այս խօսքերի դիմաց, նրանք հիացան նրա խորաթափանցութեամբ եւ մխիթարուած վերադարձան:

* * *

6.— Պատմւում է Աղաթոնի մասին, որը շատ երկար ժամանակ էր վատնել իր աշակերտների համար մի խուց կառուցելու առթիւ: Երբ այն աւարտւում է, աշակերտները գնում են այնտեղ բնակուելու: Առաջին շաբաթը, Աղաթոնը տեսնելով որոշ բաներ, որոնք վնասակար էին թւում իրեն, ասում է իր աշակերտներին.

— Վե՛ր կացէք, գնանք այստեղից:

Նրանք, շատ մտահոգուած, պատասխանում են.

— Եթէ մեզ տեղափոխելու միտք ունէիր, ապա ինչո՞ւ այդքան չարչարուեցիր խուցը կառուցելու համար: Մարդիկ կը զայրանան մեր արածից եւ կ՛ասեն. «Ահաւասիկ նրանք՝ անկայունները, մի անգամ եւս տեղափոխւում են»:

Տեսնելով նրանց այդպէս բարոյալքուած, Աղաթոնն ասում է.

— Եթէ ոմանք կը գայթակղուեն ու կը զայրանան մեր պատճառով, միւսներն էլ ընդհակառակը կը սփոփուեն եւ կ՛ասեն. «Երանի նրանց, ովքեր գաղթում յանուն Տիրոջ՝ նիւթական որեւէ բանի արժէք չտալով: Հետեւաբար, ով ուզում է գալ, թող գայ, իսկ ես հեռանում եմ»:

Աշակերտները խոնարհուեցին նրա առջեւ մինչեւ գետին եւ աղաչեցին նրան, որ թոյլ տայ իրենց ուղեկցել իրեն:

* * *

7.— Նրա մասին ասում էին նաեւ, որ նա յաճախ էր տեղափոխւում՝ տեղից–տեղ՝ վերցնելով իր հետ միայն մի դանակ, որպէսզի օգտագործի այն զամբիւղներ հիւսելու համար:

* * *

8.— Աղաթոնին հարցրին. «Ո՞րն է աւելի լաւ՝ մարմնական տառապա՞նքը, թէ՞ ներքին զգօնութիւնը»:

Վանահայրը պատասխանեց.

— Մարդը նման է ծառի. մարմնական տառապանքը սաղարթն է, իսկ ներքին զգօնութիւնը՝ պտուղը: Քանի որ, ըստ գրուածի, իւրաքանչիւր ծառ, որը լաւ պտուղ չի տալիս, կը կտրուի եւ կը նետուի կրակի մէջ, ակնյայտ է, որ մեր բոլոր մտահոգութիւնները կապուած են պտղի, այսինքն՝ հոգու խնամքի հետ, բայց այն կարիք ունի տերեւների պաշտպանութեան ու զարդարանքի, որոնք մարմնական տառապանքներն են:

* * *

9.— Եղբայրները հարցրին նրան.

— Հայր, բարի գործերի մէջ ո՞րն է ամենամեծ ջանք պահանջող առաքինութիւնը:

Նա պատասխանեց նրանց.

— Ներեցէք ինձ, բայց ես հաւատում եմ, որ չկայ աւելի մեծ ջանք, քան Աստծուն աղօթելը: Իրականում, ամէն անգամ, երբ մարդը ցանկանում է աղօթել, նրա թշնամիները կ՛ուզենան խափանել

Նրան, քանի որ նրանք գիտեն, որ միայն այդպիսով կը խանգարեն նրա առաջընթացին՝ շեղելով նրան աղօթելուց: Ինչ լաւ գործ էլ մարդ ձեռնարկի, մի օր կը ստանայ իր հանգիստը: Բայց եթէ նա քայլի աղօթքով, հարկ կը լինի, որ նա պայքարի մինչեւ իր վերջին շունչը:

* * *

10.— Աբբայ Աղաթոնն ունէր իմաստուն հոգի եւ գործունեայ մարմին: Նա ամէն ինչում ինքնաբաւ էր՝ լինի դա ձեռքի աշխատանք, սնունդ, հագուստ:

* * *

11.— Աղաթոնը քայլում էր իր աշակերտների հետ: Նրանցից մէկը գտաւ ոլոռի մի պատիճ եւ հարցրեց վանահօրը. «Հայր, թոյլ կը տա՞ս, որ տանեմ այն»: Աղաթոնը հարցրեց. «Դո՞ւ ես դրել այն այդտեղ»: Եղբայրը պատասխանեց՝ «Ո՛չ»:— «Այդ դէպքում, շարունակեց վանահայրը, ինչո՞ւ ես ուզում վերցնել այն, ինչը քոնը չէ»:

* * *

12.— Մի եղբայր հարցրեց վանահօրը.

— Ես հրաման եմ ստացել գնալ մի տեղ, ուր կռիւ կայ: Այդ հրամանը կատարելու համար ես ուզում եմ գնալ այնտեղ, բայց ես վախենում եմ կռուից:

Վանահայրն ասաց նրան.

— Եթէ դա վերաբերէր Աղաթոնին, նա կը կատարէր հրամանը եւ կը յաղթէր պատերազմում:

* * *

13.— Սկետէի վանքում (Եգիպտոս) ինչ-որ մի հարցով ժողով էր գումարուել եւ որոշում կայացուել: Աղաթոնը, աւելի ուշ հասնելով այնտեղ, ասում է.

— Դուք լաւ չէք որոշել այդ հարցը:

Նրանք պատասխանում են.

— Ո՞վ ես դու, որ խօսում ես այդպէս:

— Մարդկանց որդիներ, — ասում է նա,— որովհետեւ գրուած է՝ եթէ իսկապէս ասում էք այն, ինչը ճիշտ է եւ արդար, ուրեմն արդարութեամբ էլ կը դատէք:

* * *

14.— Աղաթոնի մասին ասում էին, որ նա երեք տարի ապրեց խճաքարը բերանում, մինչեւ որ յաջողուեց նրան ձեռք բեռել լռութիւն:

* * *

15.— Աղաթոնն ասում էր. «Բարկացկոտ մարդը, եթէ նոյնիսկ մեռած մարդուն յարութիւն տայ, Աստծուն երբեք հաճելի չի լինի»:

* * *

16.— Մի օր, երբ եղբայրները զբաղուած էին բարեգործութեամբ, աբբայ Յովսէփն հարցրեց. «Մենք իսկապէս գիտե՞նք, թէ ինչ է բարեգործութիւնը»: Եւ նա պատմեց, որ մի եղբայր, երբ գնացել էր Աղաթոնին տեսնելու եւ ողջունելու, Աղաթոնը նրան թոյլ չի տուել հեռանալ, մինչեւ որ չտար նրան իր ունեցած փոքրիկ դանակը՝ իբրեւ նուէր:

* * *

17.— Ասւում էր, թէ Աղաթոնը ջանում էր կատարել բոլոր պատուիրանները: Եթէ ճանապարհորդում էր նաւով, նա առաջինն էր թիավարում: Իսկ եթէ եղբայրները գնում էին նրան տեսնելու, նա իր ձեռքով էր պատրաստում սեղանը աղօթքից յետոյ: Նա տոգորուած էե Աստծոյ սիրով: Մահուան պահին նա երեք օր մնաց իր մեծ, բաց ու անշարժ աչքերով: Եղբայրները թափահարեցին նրան՝ հարցնելով. «Աղաթոն, որտե՞ղ ես»: Նա պատասխանեց. «Ես Աստծոյ դատաստանի առջեւն եմ»: Նրանք հարցրին. «Դո՞ւ էլ ես վախենում, հայրիկ»: Նա պատասխանեց. «Մինչեւ հիմա ամէն ինչ արել եմ Աստծոյ պատուիրանները պահելու համար, բայց ես մարդ եմ, ինչպէ՞ս իմանամ, թէ արդեօք իմ գործերը հաճելի են Աստծուն»: Եղբայրները նրան ասացին. «Չե՞ս կարծում, որ քո գործերը համապատասխանում են Աստծոյ կամքին»: Ծերունին պատասխանեց. «Դրանում ես չեմ կարող վստահ լինել, մինչեւ չգտնեմ Աստծուն: Մէկը Աստծոյ դատաստանն է, միւսը՝ մարդկանց»: Քանի որ դեռ ուզում էին նրան հարցումներ ուղղել, նա ասաց նրանց. «Հաճեցէք ինձ մի լաւութիւն անել եւ այլեւս չխօսել, իմ ժամանակն արդէն սպառուել է»: Եւ նա մահացաւ փառքի մէջ: Նրանք տեսան, որ նա գնաց, ինչպէս մէկը, որ ողջունում է իր սիրելի ընկերներին:

ԱԲԲԱՅ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐՃԱՀԱՍԱԿ (ԿՈԼՈԲՈՍ) (359–405)

Աբբայ Յովհաննէս Կարճահասակը մէկն է եգիպտացի անապատական սուրբ հայրերից եւ Հայց Եկեղեցու սրբերից: Նա ծնուել է 339 թ. Եգիպտոսի Թեբէ քաղաքում, տնտեսապէս շատ աղքատ մի ընտանիքում: Տասնութ տարեկանում նա իր աւագ եղբօր հետ մտնում է Սկետէի վանքը (Եգիպտոս), ուր ապրում է բացարձակ ժուժկալութեամբ: Այնտեղ նա զբաղւում է նաեւ դաստիարակչական գործունէութեամբ և իր աշակերտներից մէկն է լինում Արսէն Մեծը:

Այնուհետեւ Յովհաննէս Կարճահասակը ձեռնադրւում է կուսակրօն քահանայ Աղեքսանդրիայի Թէոփիլոս պատրիարքի կողմից եւ նշանակ-

ւում իր ապրած Սկետէ վանքի վանահայր: 395 թ., երբ բերեբերները ներխուժում են Սկետէ, Յովհաննէսը փախչում է անապատ և ապա իբրեւ ճգնաւոր բնակութիւն է հաստատում Կորազիմ լեռան վրայ:

* * *

Աբբայ Յովհաննէս Կարճահասակն ասել է. «Եթէ թագաւորը ցանկանում է իր թշնամու քաղաքներից մէկին տիրանալ, սկսում է զրկել այն ջրից ու սննդամթերքից, եւ այդպիսով թշնամիները, սովամահ լինելով, կը հնազանդուեն նրան: Նոյնը պատահում է նաեւ մարմնական կրքերի հետ: Եթէ մարդն ապրում է ծոմի ու սովի մէջ, նրա հոգու թշնամիները անպայման թուլանում են»:

* * *

Նա ասել է նաեւ. «Նա, ով որկրամոլ է, եթէ խօսի մի անչափահասի հետ, արդէն իսկ մտքով կը պոռնկանայ նրա հետ»:

* * *

Մի օր Աբբայ Յովհաննէս Կարճահասակը նստել էր եկեղեցու առաջ, եղբայրները շրջապատեցին նրան եւ հարցուփորձ արեցին նրա մտքերի մասին: Աւագներից մէկը, տեսնելով դա, խանդեց եւ ասաց.

— Քո սափորը, Յովհաննէ՛ս, լի է թոյնով:

Յովհաննէսը պատասխանեց.

— Դա ճիշտ է, աբբայ, եւ դու ասացիր, որ միայն դրսից ես տեսնում, բայց եթէ ներսը տեսնէիր, ի՞նչ կ՛ասէիր:

Աբբայ Յովհաննէսն ասաց.

— Ես նման եմ մի մարդու, որը նստած է մի մեծ ծառի տակ եւ տեսնում է բազմաթիւ գազանների ու օձերի, որոնք առաջ շարժւում են իր կողմը: Երբ նա այլեւս չի կարողանում դիմադրել, բարձրանում է ծառի վրայ եւ փրկւում: Ես էլ այդպէս եմ. խցում նստած՝ նայում եմ, թէ ինչպէս են վատ մտքերը գալիս դէպի ինձ եւ, երբ ուժ չունեմ դրանց դէմ պայքարելու, աղօթքով ապաստանում եմ Աստծու մօտ, եւ այդպիսով փրկւում եմ թշնամուց:

* * *

Աբբայ Պիմէնը պատմում էր, որ Յովհաննէս Կարճահասակը աղաչել էր Աստծուն, որ վերացնի իր կրքերը եւ ազատի իրեն բոլոր նեղութիւններից, ինչը շնորհւում է իրեն: Բայց յետոյ, երբ նա գնացել է իր մեծաւորի մօտ ասելու. «Տեսնո՞ւմ ես, որ ես բոլորովին հանգիստ եմ եւ որեւէ մէկի դէմ պայքար չունեմ»: Մեծաւորը պատասխանել է. «Գնա՛ աղաչի՛ր Աստծուն, որպէսզի նորից պայքարես նոյն նախանձախնդրութեամբ եւ նոյն խոնարհութեամբ, ինչպէս նախկինում, որովհետեւ պայքարների միջոցով է հոգին առաջադիմում»: Այնուհետեւ նա աղաչել է Աստծուն, եւ երբ պայքարն սկսուել է, նա այլեւս չի աղաչել, որ իրեն ազատեն դրանից, այլ ասել է. «Տէ՛ր, արիութիւն տուր ինձ մարտերում»:

* * *

Մի անգամ աբբայ Յովհաննէսը միւս եղբայրների հետ բարձրանում էր դէպի Սկետէ (Եգիպտոս), եւ ուղեցոյցը կորցնում է ճանապարհը՝ վերահաս գիշերուայ մթութեան մէջ: Ուղեկիցները հարցրին Յովհաննէսին. «Աբբայ, ի՞նչ անենք, որ թափառելով չմեռնենք, քանի որ մեր եղբայրը կորցրել է ճանապարհը»: Աբբան պատասխանեց. «Եթէ նրան որեւէ դիտողութիւն անենք, նա կ՛ամաչի, եւ նրան մեծ վիշտ կը պատճառենք: Բայց աւելի լաւ կը լինի, որ ես հիւանդ ձեւանամ եւ ասեմ, որ այլեւս չեմ կարող քայլել, հետեւաբար կը մնամ այստեղ մինչեւ լուսաբաց»: Նա այդպէս էլ արեց, իսկ միւսներն ասացին. «Մենք նոյնպէս չենք շարունակի քայլել եւ քեզ հետ կը մնանք»: Եւ նրանք էլ նստեցին մինչեւ լուսաբաց, եւ այդպիսով չխայտառակեցին իրենց եղբօրը:

* * *

Յովհաննէս Կարճահասակն ասել է. «Խոնարհութիւնը եւ Աստծոյ երկիւղը վեր են բոլոր առաքինութիւններից»:

* * *

Նա ասել է նաեւ իր աշակերտին. «Պատիւ տանք միայն մէկին, եւ բոլորը մեզ կը պատուեն, իսկ եթէ արհամարհենք միայն մէկին, որն է Աստուած, բոլորն էլ մեզ կ՛արհամարհեն, եւ կը գնանք դէպի մեր կործանումը»:

* * *

Աբբայ Յովհաննէսն ասել է. «Ես նախընտրում եմ, որ մարդն ունենայ մի փոքր մաս բոլոր առաքինութիւններից: Հետեւաբար, ամէն օր ձեռք բե՛ր մի փոքր աւելին իւրաքանչիւր առաքինութիւնից՝ Աստծոյ պատուիրանի համաձայն, առանց հանգստի, երկիւղով եւ երկայնամտութեամբ, Աստծոյ սիրով, հոգու եւ մարմնի ողջ եռանդով, սրտի նեղութիւնների հանդէպ մեծ խոնարհութեամբ, զգօնութեամբ, շատ աղօթելով, յարգանքով եւ հառաչանքներով, քո լեզուի մաքրութեամբ եւ քո աչքերի պահպանութեամբ, արհամարհանքների դիմաց առանց զայրանալու, խաղաղ եւ երբեք չարի փոխարէն չարը չփոխադարձելով: Ուշադրութիւն մի՛ դարձրու ուրիշի թերութիւններին, այլ աւելի շուտ տես քոնը»:

Ս. ԱՆՏՈՆ ՄԵԾ[1]
(251–356)

Ս. Անտոն Մեծը, որը յայտնի է նաեւ որպէս Անտոն Անապատական (Ճգնաւոր) կամ Եգիպտացի սուրբ Անտոն, համարւում է ճգնաւորական եւ վանական կեանքի խոշորագոյն դէմքը, որն ունեցել է նաեւ բազում աշակերտներ: Նա ծնուել եւ մահացել է Եգիպտոսում, ապրել է մօտաւորապէս 251–356 թուականների միջեւ, զաւակն էր քրիստոնեայ ազնուական մի ընտանիքի: Շատ երիտասարդ տարիքում որբ է մնացել՝եւ իր խնամքի տակ է ունեցել իր փոքր քրոջը: Մի օր Անտոնը, եկեղեցում, մեծապէս ազդւում է՝ լսելով Տիրոջ խօսքն ուղղուած մեծահա-

[1] Ս. Անտոն Մեծը Հայց. Առաքելական Եկեցեցու երեւելի սրբերից է:

ռուստ երիտասարդին. «Եթէ ուզում ես կատարեալ լինել, գնա՛, վաճառի՛ր այն ամէնը, ինչ ունես, տո՛ւր աղքատներին, եւ դու գանձ կ՚ունենաս երկնքում: Ապա արի՛ եւ հետեւի՛ր ինձ» (Մտթ. ԺԹ 21): Համարելով, որ այդ ակնարկն իր մասին է, նա անմիջապէս սկսում է վաճառել իր ունեցուածքը եւ իրեն նուիրել աղօթական կեանքի եւ ապաշխարութեան իր իսկ սեփական տանը: Որոշ ժամանակ անց, նա յանձնում է քրոջը քրիստոնեայ կոյսերի մի համայնքի խնամքին, իսկ ինքը գնում է իր գիւղից ոչ հեռու, քարանձաւների մէջ վարելու մենակեացի կեանք, ուր, ըստ աւանդութեան, հոգեւոր պայքարներ է մղում զազրատեսիլ կենդանիների կերպարանքով իրեն յայտնուող դեւերի դէմ: Դեւերը փորձում են հեռացնել նրան իր ապաշխարութիւնից՝ շշնջալով յիշողութիւններ իր հարստութեան, քրոջ հանդէպ ունեցած սիրոյ, դրամի եւ փառքի, սեղանի հաճոյքների եւ կեանքի յարմարաւէտութեան մասին: Դեւերից մէկը մի գիշեր կնոջ կերպարանք է ընդունում նրան գայթակղեցնելու համար: Այնուհետեւ, նրա շուրջը, յանկարծ, կուտակւում են առիւծների, արջերի, ընձառիւծների, կարիճների, գայլերի, ցուլերի, օձերի տեսակներ, որոնցից իւրաքանչիւրը շարժւում էր ըստ իր բնութեան: Այդ կերպարանքների հանած աղմուկը, իրենց կատաղի ոռնոցներով, վախ էին ներշնչում: Սուրբ Անտոնը, հասկնալով, որ դա դիւային պատրանք է, ասում է. «Եթէ դուք իշխանութիւն էք ստացել իմ դէմ, ես պատրաստ եմ թոյլ տալ, որ ինձ խժռէք, բայց եթէ դուք դեւերի կողմից էք ուղարկուել, հեռացէ՛ք այստեղից, որովհետեւ ես Քրիստոսի ծա-

ռան եմ»: Այս խօսքերն ասելով, Անտոնը վանում է կենդանիների կերպարանք ստացած դեւերին: Այսպիսով սատանան մատնւում է վերջնական պարտութեան, իսկ Անտոնը Տիրոջից այնպիսի զօրութիւն է ստանում, որ սկսում է ինքն էլ անձամբ հալածել դեւերին:

Այնուհետեւ նա գնում է ճգնելու Պիսպիր լեռան մօտ մի ամայի վայրում: Շուտով Անտոնի ճգնութեան ու սրբութեան օրինակը վարակիչ է դառնում, նրա շուրջն են հաւաքւում բազմաթիւ քրիստոնեաներ: Նոյնը պատահում է նաեւ երբ նա տեղափոխւում է Կարմիր ծովի ափամերձ գօտում: Տիրոջն ընծայուած կեանքը՝ մենութեան կամ խմբերի մէջ, արդէն սովորութիւն էր դարձել, բայց Ս. Անտոնի պարագայում այդ երեւոյթն այնքան մեծ չափերի էր հասնում, որ մենք կարող ենք նրան համարել, ըստ ժամանակի յայտնի արտայայտութեան, «հայրը վանական կեանքի»:

Նաեւ Արեւմուտքում մեծ է եղել նրա ազդեցութիւնը, յատկապէս իր մահից անմիջապէս յետոյ՝ շնորհիւ Ս. Աթանաս Աղեքսանդրացու (295–373) կողմից գրուած նրա կենսագրութեան արագ տարածման:

Ս. ԱՆՏՈՆ ՄԵԾ
ՅՈՐԴՈՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԷՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՐԻ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ[1]

Պատահում է, որ մարդկանց ոչ պատշաճ կերպով են խելամիտ անուանում: Սակայն հարկ նկատի ունենալ, որ նրանք, ովքեր ուսումնասիրել են ժամանակի իմաստունների ճառերն ու գրքերը, չեն կարող անպայման խելամիտ համարուել, բայց նրանք, ովքեր ունեն ողջամիտ հոգի, եւ ովքեր ի վիճակի են տարբերելու լաւն ու վատը, եւ նրանք, ովքեր փախչում են այն ամէնից, ինչը չար է եւ վնասում է հոգուն, եւ քանի ձգտում են աշխուժօրէն գործադրել այն ամէնը, ինչը լաւ է եւ հոգուն օգտակար, նաեւ գործում են Աստծոյ հանդէպ մեծ երախտագիտութեամբ, այս վերջինները միայն կարող են իսկապէս խելամիտ մարդիկ կոչուել:

* * *

Իսկական խելամիտ մարդը միայն մէկ ցանկութիւն ունի՝ հաւատալ Աստծուն եւ ամէն ինչում հաճոյանալ Նրան: Սրանից ելնելով, եւ միայն սրանից, խելամիտ մարդը կը պատշաճեցնի իր հոգին, որպէսզի այն հաճելի լինի Աստծուն՝ շնորհակալութիւն յայտնելով Նրան այն հիանալի գործելակերպի համար, որով Նրա նախախնամութիւնը կառավարում է ամէն ինչ, ներառեալ կեանքի պատահական իրադարձութիւնները: Տեղին չէ, անշուշտ, երբ

[1] San Antonio Abad, Advertencia sobre la índole humana y la vida buena, Editorial Santidad, 2021.

մենք շնորհակալութիւն ենք յայտնում բժիշկներին մարմնի առողջութեան համար, նոյնիսկ երբ նրանք մեզ դառը եւ տհաճ դեղամիջոցներ են տալիս, իսկ միւս կողմից անշնորհակալ ենք լինում Աստծուն այն բաների համար, որոնք մեզ ցաւոտ են թւում, առանց գիտակցելու, որ ամէն ինչ տեղի է ունենում ճիշտ ձեւով՝ յանուն մեր օգտի, ըստ Նրա նախախնամութեան:

* * *

Քանզի գիտելիքն ու հաւատը Աստծու հանդէպ հոգու փրկութիւնն ու կատարելութիւնն են:

* * *

Մենք Աստծուց ստացել ենք ժուժկալութիւն, համբերութիւն, չափաւորութիւն, հաստատակամութիւն, տոկունութիւն եւ սրանց նման այլ առաքինութիւններ՝ որպէս գերազանց եւ վաւերական ուժեր: Սրանք իրենց դիմադրութեամբ եւ հակառակութեամբ մեզ օգնութեան են հասնում այս երկրագնդի վրայ առկայ դժուարութիւններին դիմակայելիս: Եթէ մենք դրանք կիրառենք եւ միշտ պատրաստ լինենք, դրանք մեզ այնպէս կ՛օգնեն, որ մեզ հետ պատահած ոչինչ դաժան, ցաւոտ կամ անտանելի չթուայ: Բաւական է, որ մենք մտածենք, որ ամէն ինչ պատկանում է մարդկային իրականութեանը եւ ենթարկւում է մեր մէջ եղած առաքինութիւններին: Ի դէպ, յիմարներն այսպէս չեն մտածում, նրանք չեն հաւատում, որ ամէն մի իրադարձութիւն մեր օգտին է, որ այն լինում է այդպէս,

որպէսզի փայլեն առաքինութիւնները եւ մենք Աստծուց ստանանք պսակը:

* * *

Նկատի առ, որ շատ ինչք ունենալը եւ հարստութեանը վստահելը միայն անցողիկ պատրանք են: Հարկ է գիտակցել, որ առաքինի եւ Աստծուն հաճելի կեանքը հարստութիւնից աւելի լաւ բան է: Եթէ այս միտքը վերածես մի համոզիչ խորհրդածութեան եւ այն պահես քո յիշողութեան մէջ, դու այլեւս չես գոռայ եւ չես էլ տնքայ ցաւից, ոչ ոքի չես մեղադրի, այլ ամէն ինչի համար շնորհակալութիւն կը յայտնես Աստծուն՝ տեսնելով, որ նրանք, ովքեր քեզնից աւելի վատ են, վստահում են պերճախօսութեանը եւ իրենց հարստութեանը, մինչդեռ ցանկասիրութիւնը, փառքը եւ տգիտութիւնը հոգու ամենավատ մոլորութիւններն են:

* * *

Խելամիտ մարդը, երբ խորհում է, թէ ինչպէս պէտք է վարուի, գնահատում է այն, ինչը իրեն յարմար է եւ օգուտ է տալիս, եւ տեսնում է, թէ ինչ–որ բաներ լաւ են իր հոգու համար եւ բարենպաստ, մինչդեռ միւսները հոգու համար խորթ են եւ վնասակար: Այսպիսով, նա փախչում է այն ամէնից, ինչը վնասում է իր հոգուն որպէս օտար իրականութիւն, որն ընդունակ է նրան հեռացնելու անմահութիւնից:

* * *

Մենք չպէտք է յայտարարենք, որ անհնար է մարդու համար առաքինի կեանք վարելը: Աւելի շուտ պէտք է ասենք, որ դա այնքան էլ հեշտ չէ եւ ոչ բոլորին հասանելի: Մարդկանց մէջ բոլոր նրանք, ովքեր բարեպաշտ են եւ օժտուած աստուածասէր բանականութեամբ, մասնակից են առաքինի կեանքին, որովհետեւ սովորական եւ աշխարհիկ բանականութիւնը անկայուն է, առաջացնում է եւ՛ լաւ եւ՛ վատ մտքեր, այն իր բնոյթով փոփոխական է, եւ նրա փոփոխութիւնը հակուած է դէպի նիւթը: Մինչդեռ Աստծոյ սիրով համակուած բանականութիւնը պաշտպանուած է այն չարութիւնից, որը մարդն ինքնակամ է ձեռք բերում իր անզգուշութեան պատճառով:

* * *

Նրանք, ովքեր ցանկանում են ապրել առաքինի, բարեպաշտ եւ փառահեղ կեանքով, չպէտք է իրենց ընտրութիւնը կատարեն հիմնուելով յօրինուած սովորութիւնների կամ մարդկային կեղծ ապրելակերպի վրայ: Ընդհակառակը, նրանք, ինչպէս անում են քանդակագործներն ու նկարիչները, պէտք է իրենց գործերով ցոյց տան իրենց առաքինի եւ աստուածահաճոյ կեանքը եւ մերժեն բոլոր չար հաճոյքները որպէս որոգայթներ:

* * *

Խելամիտ մարդկանց համեմատ, նա, ով հարուստ է եւ ազնուական, բայց չունի հոգեւոր կար-

գապահութիւն եւ մարդկային ընդհանուր արժանիքներ, նա իրականում դժբախտ է: Բայց նա, ով կենցաղային պայմաններով աղքատ է եւ ստրուկ, սակայն զարդարուած է խրատով եւ առաքինութեամբ, նա է իսկական երջանիկը:

* * *

Ինչպէս օտարները, որոնք մոլորւում են փողոցներում, այնպէս էլ նրանք են, ովքեր անտեսում են առաքինի կեանք վարելը, եւ դրա համար էլ մոլորուածներ են իրենց սեփական ցանկութիւնների մէջ:

* * *

Նա է մարդ կոչւում, ով ողջամիտ է եւ ընդունակ սրբագրուելու: Սակայն անուղղելին պէտք է կոչել վայրենի, քանի որ նրա վիճակը բնորոշ է վայրենիներին: Եւ դուք պէտք է հեռու մնաք սրանցից, քանի որ երբեք հնարաւոր չի լինի, որ նրանք, ովքեր ապրում են չարութեամբ, լինեն անմահների մէջ:

* * *

Իւրաքանչիւր արուեստ ձեւաւորում է իր տրամադրութեան տակ եղած նիւթը եւ այդպիսով ցոյց է տալիս դրա արժէքը: Մէկը մշակում է փայտը կամ բրոնզը, ուրիշները՝ ոսկին կամ արծաթը: Եւ այսպէս էլ մենք, երբ իմանանք, թէ ինչպէս վարել պարկեշտ կեանք եւ առաքինի վարք, որը հաճելի լինի Աստծուն, ուրեմն պէտք է ցոյց տանք, որ մենք իսկապէս խելամիտ մարդիկ ենք մեր հոգով եւ ոչ միայն մեր մարմնի կառուցուածքով:

* * *

Իսկապէս ողջամիտ եւ աստուածասէր հոգին հեշտութեամբ է ճանաչում ամէն ինչ կեանքում, սիրով հաճելի է դարձնում Աստծուն եւ անկեղծօրէն շնորհակալութիւն է յայտնում Նրան, որովհետեւ հէնց Նրան են ուղղուած իր ողջ ջանքերը եւ խորհրդածելու ողջ կարողութիւնը:

* * *

Նաւավարները նաւակներն ուղղորդում են ըստ երթուղու, որպէսզի չվթարուեն ջրի վրայ կամ ջրի տակ գտնուող ինչ–որ ժայռի դէմ: Նոյն կերպ, նա, ով ցանկանում է առաքինի կեանք վարել, պէտք է ուշադիր ուսումնասիրի, թէ ինչ պէտք է անի եւ ինչից պէտք է խուսափի: Եւ պէտք է հաշուի առնել այն առաւելութիւնը, որն առաջանում է ճշմարիտ եւ աստուածային օրէնքներին հետեւելուց, ինչպէս նաեւ հոգուց չար ցանկութիւնները կտրականապէս հեռացնելուց:

* * *

Միայն նրանց ազատ համարիր, որոնք ազատ են ոչ թէ իրենց արտաքին վիճակով, այլ՝ իրենց ապրելու եւ գործելու կերպով: Տեղին չէ երբեք իսկապէս ազատ անուանել չար կամ անսանձ իշխաններին: Իրականում նրանք նիւթական կրքերի ստրուկներն են: Հոգու ազատութիւնն ու երջանկութիւնը կառուցուած են ջինջ մաքրութեան եւ ժամանակաւոր արժէքների հանդէպ մարդու ունեցած արհամարհանքի վրայ:

* * *

Կատարեալ կեանքի եւ հոգու հոգատարութեան մասին կատարուած խորհրդածութիւնները մարդկանց դարձնում են լաւ եւ Աստծուն սիրող արարածներ: Քանզի նա, ով փնտռում է Աստծուն, գտնում է նրան, ամէն ինչում յաղթում է ցանկասիրութեանը եւ երբեք չի շեղւում աղօթքից: Այդպիսի մարդիկ չեն վախենում դեւերից:

* * *

Մարդկանց կողմից իմացեալ մահը հաւասար է անմահութեան, բայց անմիտների համար, ովքեր դա չեն հասկանում, դա մահ է նշանակում: Սակայն այս մահից չէ, որ պէտք է վախենանք, այլ հոգու կորստից, որը Աստծոյ հանդէպ մարդու անգիտութիւնն է: Սա, այո, իսկապէս սարսափելի է հոգու համար:

* * *

Իսկական ազատը նա է, ով հաճոյքների ստրուկ չէ: Ընդհակառակը, իր խոհեմութեան ու ժուժկալութեան շնորհիւ նա տիրում է իր մարմնին եւ մեծ երախտագիտութեամբ է բաւարարւում նրանով, ինչ որ նրան տրուած է Աստծուց, թէկուզ եւ շատ քիչ: Երբ ներդաշնակութիւն կայ աստուածասէր բանականութեան եւ հոգու միջեւ, ուրեմն ամբողջ մարմինը խաղաղ է, նոյնիսկ առանց դրան յատուկ կերպով ձգտելու:



Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ[1]
(306–373)

Ս. Եփրեմ Ասորին յայտնի է նաեւ իբրեւ Եփրեմ Մծբնացի, քանի որ ծնուել է Միջագետքի Մծբին քաղաքում 306 թ. եւ վախճանուել 373 թ. Եդեսիայում: Եղել է միայն սարկաւագ, միստիկ աստուածաբան գրող եւ հռչակաւոր երաժիշտ, որն իրաւամբ կոչուել է՝ «Սուրբ Հոգու քնար»: Աշակերտել է Ս. Յակոբ Մծբնացի հայրապետին: Եղել է Կապադովկեան Կեսարիայում, որտեղ Ս. Բարսեղ Կեսարացի հայրապետից ձեռնադրուել է սարկաւագ: Համաձայն իր վկայութեան, երիտասարդ տարիներին նա կրօնին մեծ նշանակութիւն չի տուել, բայց երբ բախուել է փորձութիւնների եւ տառապանքների, այն ժամանակ հասկացել է, որ Աստծոյ կարիքն ունի:

[1] Ընդհանրական Եկեղեցու և ի մասնաւորի Հայց. Եկեղեցու մեծագոյն սրբերից մէկը:

Ըստ աւանդութեան, 325 թ. Եփրեմ Ասորին ուղեկցել է Ս. Յակոբ Մծբնացուն դէպի Նիկիա՝ մասնակցելու Տիեզերական առաջին ժողովին: Այնուհետեւ նա աւելի քան տասը տարի ապրել եւ ստեղծագործել է Եդեսիայում, ուր գրել է իր առաջին գործերը եւ կրթել բազում աշակերտներ: Նրա գրչին պատկանող բազմաթիւ երկեր հայացուել են դեռեւս Ե. դարում: Նա նաեւ Եկեղեցու տասներկու սուրբ վարդապետներից մէկն է:

ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ
ՀԻԱՍՔԱՆՉ ՄԱՅՐ

Ս. Կոյսը հրաւիրում է ինձ երգելու այն խորհուրդը, որի մասին ես հիացմունքով եմ խորհում: Որդի Աստծոյ, տո՛ւր ինձ քո սքանչելի պարգեւը, ստիպի՛ր ինձ լարել իմ քնարը, որպէսզի հնարաւոր լինի ինձ հռչակել քո սիրասուն մօր գեղեցկագոյն կերպարը:

Կոյս Մարիամը պարգեւում է աշխարհին իր Որդուն՝ մնալով կոյս, սնում է Նրան, որ կերակրում է ազգերին, իսկ իր մաքուր գրկում պահում է Նրան, ով պահում է տիեզերքը: Նա Կոյս է եւ Մայր եւ ամէն ինչ:

Սուրբ է նա մարմնով, հոգով միանգամայն գեղեցիկ, անարատ, բանականութեամբ անկեղծ, զգացումներով կատարեալ, ժուժկալ, հաւատարիմ, սրտով անբիծ, նա ունի բոլոր առաքինութիւնները:

Թո՛ղ կոյսերի ամբողջ շառաւիղը ուրախանայ Մարիամով, որովհետեւ նրանցից մէկը ծնեց Նրան,

ով պահում է ամբողջ արարչութիւնը, Նրան, ով ազատեց ստրկութեան մէջ հառաչող մարդկային ցեղին:

Օձից վիրաւորուած ծեր Ադամը թող ուրախանայ Մարիամով, Մարիամը Ադամին տալիս է մի սերունդ,որը նրան հնարաւորութիւն է տալիս ճզմել անիծեալ օձին եւ բուժել նրան իր մահացու վէրքից:

Թո՛ղ քահանաներն ուրախանան օրհնեալ Սուրբ Կոյսով: Նա աշխարհին տուել է Յաւերժական Քահանային, որը միաժամանակ զոհ է: Նա վերջ դրեց հնագոյն զոհաբերութիւններին, դառնալով Հօրը գոհացնող հաշտարար Զոհը:

Թո՛ղ բոլոր մարգարէներն ուրախանան Մարիամով, Նրա մէջ են իրականացուել իրենց տեսիլքներն ու մարգարէութիւնները, նրա մէջ է հաստատուել իրենց պատգամների վաւերականութիւնը:

Թո՛ղ բոլոր հայրապետներն ուրախանան Մարիամով: Ինչպէս որ նա ստացաւ ձեզ խոստացուած օրհնութիւնը, այնպէս էլ նա կատարեալ դարձրեց ձեզ իր Որդու մէջ, որի միջոցով մարգարէները, արդար մարդիկ եւ քահանաները մաքրութեան արժանացան:

Եւայի կողմից մահաբեր ծառից քաղած դառն պտղի փոխարէն, Մարիամը մարդկութեանը տուեց քաղցրութեամբ լեցուն մի պտուղ: Եւ ահա, ամբողջ աշխարհը հրճւում է Մարիամի պտղով:

Կենաց ծառը, թաքնուած դրախտի մէջտեղում, սկիզբ է առել Մարիամից եւ իր ստուերն է տարածել տիեզերքի վրայ, սփռել է իր պտուղները թէ՛ ամենահեռաւոր եւ թէ՛ ամենամօտ քաղաքներում:

Մարիամը փառքի զգեստ է հիւսել եւ տուել մեր նախահօրը, որն իր մերկութիւնն էր թաքցրել ծառերի մէջ, եւ այժմ զգեցած է զօրութիւն, առաքինութիւն եւ գեղեցկութիւն: Նրան, ում կինը խորտակել էր, նրա դուստրը բարձրացնում է, որի աջակցութեամբ վերջինս կանգնում է հերոսի պէս:

Եւան եւ օձը թակարդ էին լարել, եւ Ադամն ընկել էր դրա մէջ: Մարիամը եւ իր արքայական Որդին խոնարհուել են եւ նրան դուրս են բերել անդունդից:

Կուսական որթատունկը ողկոյզ է տուել, որի համեղ հիւթը ուրախութիւն է պատճառում տառապեալներին: Եւան եւ Ադամն իրենց դժբախտութեան մէջ ճաշակեցին կենաց գինին եւ գտան կատարեալ մխիթարութիւն:

Ս. ԿՈՅՍԻ ԱՒԵՏՈՒՄԸ (ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԵԱՆ ՕՐՀՆԵՐԳ)

Դարձրէ՛ք ձեր նայուածքը Մարիամին: Երբ Գաբրիէլ հրեշտակը մտաւ նրա սենեակ, նա հարցրեց. «Ինչպէ՞ս դա կարելի է լինել ինձ հետ» (Ղուկ. Ա 34): Սուրբ Հոգու ծառան պատասխանեց՝ ասելով. «Աստծոյ համար անհնարին ոչինչ չկայ» (Ղուկ. Ա 37): Եւ նա, հաստատապէս հաւատալով իր լսածին, ասաց. «Ահաւասիկ այստեղ է Տիրոջ աղախինը» (Ղուկ. Ա 38): Եւ անմիջապէս Խօսքն իջաւ նրա վրայ, մտաւ նրա մէջ եւ բնակուեց այնտեղ՝ առանց որ նա ոչինչ նկատի: Նա յղիացաւ Նրան առանց կուսութեանը վնաս պատճառելու, եւ իր արգան-

դում Նա երեխայ դարձաւ, մինչդեռ ամբողջ աշխարհը լցուած էր նրանով… Երբ լսես Աստծոյ ծննդեան մասին, լռի՛ր, թող Գաբրիէլ հրեշտակի աւետումը դրոշմուած մնայ քո հոգում: Գերազանց Մեծութեան համար ոչինչ դժուար չէ, Նա մեզ համար է ինքն իրեն խոնարհեցրել եւ ծնուել մեր մէջ՝ մեզանից:

Այսօր Մարիամը երկինքն է մեզ համար, քանի որ նա Աստծուն բերում է մեզ: Ամենաբարձրեալը խոնարհեցրեց իրեն եւ իր բնակարանը հաստատեց նրա մէջ, Նա իրեն փոքրացրեց Կոյսի մէջ, որպէսզի մեզ մեծացնի… Մարիամի մէջ մարգարէների եւ արդարների կանխատեսումներն իրականացան: Նրանից մեզ համար լոյս է ծագել, եւ վերացել է հեթանոսական խաւարը:

Մարիամն ունի բազմաթիւ անուններ, եւ ինձ համար մեծ հաճոյք է դրանցով կանչել նրան: Նա այն ամրոցն է, որտեղ ապրում է թագաւորների հզօրագոյն Թագաւորը, բայց Նա այնտեղից չհեռացաւ այնպէս, ինչպէս մտել էր. Նա մարմին հագաւ, եւ այդպէս դուրս եկաւ: Նա նաեւ նոր երկինք է, որովհետեւ այնտեղ է ապրում թագաւորների Թագաւորը. այնտեղ Նա ներս մտաւ, ապա դուրս եկաւ արտաքին աշխարհի նմանութեամբ հագնուած… Մարիամը նաեւ այն աղբիւրն է, որտեղից ծարաւելոց համար կենդանի ջուր է բխում: Նրանք, ովքեր ըմպել են այդ ջրից, հարիւրապատիկ պտուղ են տալիս:

Այսպիսով, այս օրը նման չէ արարչագործութեան առաջին օրուայ: Այդ օրը արարածները ստեղծուեցին. նրանում երկիրը նորոգուեց եւ օրհնուեց՝

Ադամի հրահրած անէծքի փոխարէն: Ադամն ու Եւան մեղքով մահ բերեցին աշխարհին, բայց աշխարհի Տէրը մեզ նոր կեանք տուեց Մարիամի մէջ: Չարը, օձի տարած աշխատանքով, թոյն կաթեցրեց Եւայի ականջի մէջ: Դրա փոխարէն, Բարերարն իր ողորմութեան մէջ խոնարհուեց եւ ականջի միջով թափանցեց Մարիամի մէջ: Նոյն դռնից, որով մտել էր մահը, մտել է նաեւ Կեանքը, որը սպանել է մահը: Եւ Մարիամի բազուկները տանում են Նրան, ում կրում են քերովբէները: Տէր Աստծուն, ում տիեզերքը չի կարող ընդգրկել, գրկուել է Մարիամի կողմից: Թագաւորը, որի առջեւ դողում են հրեշտակները, հոգեւոր արարածները, պառկած է Կոյսի գրկում, որը երեխայի նման շոյում է Նրան: Երկինքը Նորին Մեծութեան գահն է, եւ Նա նստում է Մարիամի ծնկներին: Երկիրը Նրա ոտքերի պատուանդանն է, եւ Նա երեխայի պէս ցատկում է Մարիամի վրայ: Նրա մեկած ձեռքը ցոյց է տալիս փոշու չափը, իսկ փոշու վրայ Նա խաղում է երեխայի նման:

Ուրախացի՛ր Ադամ, քանզի Քրիստոսի ծնունդով գտար քո կորցրած փառքը: Երբեւէ տեսե՞լ էք, որ կաւը բրուտագործի համար հագուստ ծառայի: Ո՞վ է տեսել, որ կրակը փաթաթուի շորերով: Աստուած այս ամէնը յանձն առաւ՝ խոնարհեցրել է իրեն ի սէր մարդու, որը յիմարաբար բարձրացրել էր իրեն եւ մարդասպան չարի խորհրդով ոտնահարել էր աստուածային պատուիրանը: Պատուիրանի հեղինակը խոնարհեցրեց իրեն՝ մեզ բարձրացնելու համար:

Եկէ՛ք շնորհակալութիւն յայտնենք աստուածային ողորմութեանը, որն իջել է երկրի բնակիչնե-

րի վրայ, որպէսզի հիւանդ աշխարհը բուժուի աստուածային Բժշկի կողմից: Փառք Նրան եւ Հօրը, որն ուղարկեց Նրան, եւ փառք Սուրբ Հոգուն, յաւիտեանս յաւիտենից:

ԵՒԱՆ ԵՒ ՄԱՐԻԱՄԸ

Օ՜, քնարդ իմ, յօրինիր նոր պատճառներ գովաբանելու համար Կոյս Մարիամին: Բարձրացրո՛ւ քո ձայնը եւ երգի՛ր Դաւթի դստեր՝ այս Կոյսի, հրաշալի մայրութիւնը, որը կեանք բերեց աշխարհին:

Ով սիրում է նրան, հիանում է նրանով: Հետաքրքրասէրը լցւում է ամօթով եւ լռում: Նա չի համարձակւում հարց տալ, թէ ինչպէս է մայրը ծննդաբերում եւ պահպանում իր կուսութիւնը: Ու թէեւ դա շատ դժուար է բացատրել, բայ անհաւատները չէին համարձակուի հետաքրքրուել նրա Որդու մասին:



ՄԵԾՆ ՄԱԿԱՐ ԵԳԻՊՏԱՑԻ[1]
(300–390)

Ծնուել է 300 թ. Եգիպտոսում: Մանուկ տարիքում զբաղուել է խաշնարածութեամբ, այնուհետեւ, 30 տարեկանում աշակերտել է Ս. Անտոն անապատականին եւ մեծապէս ոգեշնչուել նրա քարոզներից, ապա որոշել է իրեն նուիրել աղօթքի եւ ճգնութեան, գնացել է ապրելու անապատում, բայց նրան

[1] Ս. Մակար Եգիպտացին Հայց. Առաքելական Եկեղեցու կարևոր սրբերից մէկն է:

հետեւել են բազմաթիւ քրիստոնեաներ: Եպիսկոպոսի որոշմամբ ձեռնադրուել է քահանայ, որպէսզի կարողանայ Ս. Պատարագ մատուցել իր հետեւորդների համար: 60 տարուայ իր ճգնաւորական կեանքի ընթացքում նա գրել է բազմաթիւ խրատական ճառեր, որոնք առ այսօր հոգեւոր բացառիկ սնունդ են քրիստոնեաների համար:

Ս. Մակարն իր մասին պատմել է հետեւեալը. «Երբ ես երիտասարդ էի, մինչ ապրում էի Եգիպտոսում, մի խցում, ինձ յանձնարարեցին ստանձնել այդ վայրի հոգեւորականի պաշտօնը: Չցանկանալով զբաղուել այդ պաշտօնով, ես փախայ այլ տեղ: Այդ ընթացքում մի բարեպաշտ աշխարհական եկել էր ինձ փնտռելու, որպէսզի կատարի իմ ձեռային աշխատանքը եւ ծառայի ինձ: Պատահեց, որ գիւղի կոյս աղջիկներից մէկը տրուեց փորձութեանը եւ մեղք գործեց: Երբ այդ յղի աղջկան հարցրին, թէ ո՞վ է մեղաւորը, նա պատասխանեց. «Մենակեացը»: Այնուհետեւ գիւղի բնակիչները եկան ինձ փնտռեցին, տարան գիւղ, վզիցս կախեցին ծխից սեւացած հին ամաններ եւ զանազան առարկաներ, շրջեցին գիւղի բոլոր փողոցներով՝ ծեծելով ինձ եւ ասելով. «Այս վանականը պղծել է մեր կոյսին, տարէ՛ք, տարէ՛ք սրան»: Եւ նրանք ինձ ծեծելով գրեթէ սպանեցին: Յետոյ ծերերից մէկը մօտեցաւ եւ ասաց. «Որքա՞ն էք ծեծելու այս օտար վանականին»: Մարդը, որ սպասարկում էր ինձ, ամօթով լցուած քայլում էր իմ ետեւից: Շատերը նուաստացնում էին նրան՝ ասելով. «Տես, թէ ինչ է արել այս ճգնաւորը, որի մասին դու լաւ վկայութիւն էիր տալիս»: Աղջկայ ծնողներն էլ ասում էին. «Մենք

Նրան բաց չենք թողնի, քանի դեռ չի երաշխաւորել, որ կերակրելու է նրան»: Ես խօսեցի իմ սպասաւորի հետ, եւ նա դարձաւ իմ երաշխաւորը: Նրա հետ գնացի իմ խուցը, տուեցի նրան իմ գործած բոլոր զամբիւղները՝ յանձնարարելով. «Վաճառի՛ր եւ կերակրի՛ր կնոջը»: Այդ ընթացքում ես ինքս ինձ ասում էի. «Մակա՛ր, ահա դու մի կին ես գտել, դու պէտք է մի քիչ աւելի աշխատես կերակրելու համար նրան»: Այդպէս եղաւ, որ ես օր ու գիշեր աշխատեցի եւ նրան ուղարկեցի իմ աշխատանքի արդիւնքը: Բայց երբ հասաւ դժբախտ կնոջ ծննդաբերելու ժամանակը, երկունքի ցաւերի օրերը երկարեցին՝ առանց ծննդաբերութեան: Հարցին, թէ ինչ է կատարւում, նա պատասխանեց. «Ես գիտեմ, որ սա այն պատճառով է, որ ես զրպարտել եմ ճգնաւորին եւ սուտ ամբաստանել նրան, ինքը մեղաւոր չէ, այլ այսինչ երիտասարդը»: Իմ երաշխաւորն ու սպասաւորը մեծ ուրախութեամբ եկաւ ինձ մօտ՝ ասելու. «Այդ աղջիկը չէր կարողանում ծննդաբերել, քանի դեռ չէր խոստովանել իր սուտը: Հիմա ամբողջ գիւղը հանդիսաւոր կերպով պատրաստւում է գալ այստեղ՝ ներողութիւն խնդրելու»: Այս լսելով՝ ես վեր կացայ եւ փախայ Սկետէ, որպէսզի մարդիկ ինձ չխանգարեն: Ահա սա է իմ այստեղ գալու սկիզբն ու պատճառը»:

* * *

Մի օր Մակարը արմաւենու տերեւներ կրելով ճահճից դէպի իր խուցն էր քայլում, երբ յանկարծ հանդիպեց սատանային: Վերջինս ցանկացաւ տպաւորել նրան իր կրած մանգաղով, սակայն

ապարդիւն: Յետոյ նա ասաց նրան. «Մակա՛ր, այդ ի՞նչ ուժ է բխում քեզնից, որ ես անզօր եմ քո դէմ: Այն, ինչ դու անում ես, ես էլ եմ անում, դու ծոմ ես պահում, ես էլ ոչինչ չեմ ուտում, գիշերները դու հսկում ես, իսկ ես ամենեւին չեմ քնում: Այնուամենայնիւ, դու ինձ մի կէտում յաղթում ես»: Մակարը հարցրեց նրան, թէ ո՞րն է այդ կէտը, նա ասաց. «Քո խոնարհութիւնը: Եւ այդ պատճառով էլ ես ոչինչ չեմ կարող անել քո դէմ»:

* * *

Մակարին հարցրին. «Ինչպէ՞ս պէտք է աղօթել»: Նա պատասխանեց. «Պէտք չէ երկար ճառեր ասել, բաւական է ձեռքերդ լայն բացել եւ ասել. «Տէ՛ր, ինչպէս Դու ուզում ես եւ գիտես, ողորմի՛ր ինձ»: Եւ եթէ մարտը շարունակուի, ասա՛. «Տէ՛ր, օգնի՛ր ինձ»: Նա լաւ գիտէ, թէ մեզ ինչ է պէտք եւ ողորմում է մեզ»:

* * *

Մի եղբայր գնաց փնտռելու Մակար Եգիպտացուն եւ ասաց նրան. «Հա՛յր, մի խօսք ասա, որպէսզի կարողանամ փրկուել»: Եւ աբբան ասաց. «Գնա՛ գերեզմանատուն եւ նախատիր մեռելներին»: Եղբայրը գնաց, հայհոյեց նրանց եւ քարեր նետեց նրանց շիրիմների վրայ, ապա վերադարձաւ, որպէսզի զեկուցի աբբայ Մակարին: Աբբան հարցրեց նրան. «Քեզ մեռելները ոչինչ չասացի՞ն»: Նա պատասխանեց՝ ոչ: Աբբան ասաց նրան. «Վաղը գնա՛ այնտեղ եւ գովաբանիր նրանց»: Այնուհետեւ եղբայրը գնաց եւ

գովեց նրանց ասելով. «Առաքեալներ, սրբեր եւ արդարներ» եւ վերադարձաւ աբբայի մօտ եւ ասաց. «Ես արդէն կատարեցի քո պատուէրը»: Մակարը նրան հարցրեց. «Քեզ ոչինչ չպատասխանեցի՞ն»: Եղբայրն ասաց՝ ո՛չ: Աբբան ասաց. «Դու գիտես, թէ ինչ հայհոյանքներ ես ուղղել նրանց հասցէին, առանց որ նրանք քեզ պատասխանեն, եւ ինչ գովեստներ ես արել, եւ նրանք քեզ ոչինչ չեն ասել: Այդպէս էլ դու, եթէ ուզում ես քեզ փրկել, եղի՛ր մեռածների նման, հաշուի մի՛ առ մարդկանց արհամարհանքը եւ ոչ էլ նրանց գովասանքները»:

ՄԵԾՆ ՄԱԿԱՐԻ ԱՍՈՅԹՆԵՐԻ ՂՊՏԱԿԱՆ ՇԱՐՔԻՑ

Եղբայրներից մէկը հարցրեց. «Ո՞րն է Աստծուն ամենահաճելի գործը ճգնաւորութեան եւ պահեցողութեան մէջ»: Մակարը պատասխանեց՝ ասելով. «Երանի նրան, ով համբերում է անդադար սրտի զղջումով եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով: Դէ, իհարկէ, գործնական կեանքում չկայ աւելի հաճելի բան, քան այս օրհնուած սնունդը, դու պէտք է այն անընդհատ որոճաս, ինչպէս հորթը, ում հաճելի է որոճալու քաղցրութիւնը, մինչեւ որ ծամածը թափանցի նրա սրտի ներսը եւ այնտեղ լցնի իր ամբողջ քաղցրութիւնը, որն օգտակար է նրա ընդհանուր առողջութեանը: Չէ՞ք տեսնում նրա այտերի գեղեցկութիւնը՝ սնուած եւ ցայտուն դարձած այն քաղցրութիւնից, որը նա որոճացել է իր բերանում»:

* * *

Մի եղբայր ասաց հայր Մակարին. «Սովորեցրո՛ւ ինձ այս խօսքերի իմաստը. «Իմ սրտի խորհրդածութիւնը քո ներկայութեան մէջ լինելն է»: Ծերունին ասաց նրան. «Ուրիշ խորհրդածութիւն չկայ, բացի մեր Տէր Յիսուս Քրիստոսի փրկաբեր եւ օրինեալ անունից, որն անդադար բնակւում է քո մէջ ճիշտ անպէս, ինչպէս որ գրուած է. «Ծիծեռնակի պէս կը ճչամ եւ կրիայի պէս կը խորհեմ»: Ահա թէ ինչ է անում մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով ապրող բարեպաշտ մարդը»[1]:

* * *

Մակար Մեծն ասաց. «Դու պէտք է ուշադրութիւն դարձնես մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուան վրայ, երբ քո շուրթերը պատրաստւում են արտաբերել այն, եւ թող միայն չթուայ, որ դու ընդունում ես այն քո հոգում»:

Մտածիր միայն կանչելու այդ անունը. «Տէր Յիսուս Քրիստոս, ողորմի՛ր ինձ», եւ հանգստի ժամանակ դու կը տեսնես Նրա աստուածութիւնը, որ հանգչում է քո մէջ, կը հեռացնես կրքերի խաւարը եւ կը մաքրես ներքին մարդուն՝ վերադարձնելով Նրան Ադամի մաքրութեանը, երբ նա դրախտում էր: Սա է այն օրինեալ անունը, որը կանչել է Յովհաննէս Աւետարանիչը՝ Նրան անուանելով «աշխարհի լոյս», «չյագեցնող քաղցրութիւն» եւ «կեանքի ճշմարիտ հաց»:

---

[1] P. Luis Glinka Ofm, La Oración en los santos Padres, Buenos Aires/Lumen 2009, էջ 121:

* * *

Հայր Եւագրը, մտքերից ու մարմնական կրքերից տանջուած, գնաց փնտռելու հայր Մակարին եւ ասաց նրան. «Հայր ի՛մ, մի խօսք ասա՛, եւ ես կ՚ապրեմ»: Մակարը պատասխանեց. «Կապի՛ր խարիսխի պարանը քարին, եւ Աստծոյ շնորհիւ նաւակը կ՚անցնի հիասթափութիւնների այս ծովի սատանայական ալիքների միջով եւ այս ունայն աշխարհի խաւարի յորձանուտով»: Եւագրը հարցրեց. «Ո՞ւր է նաւակը, ո՞ւր է պարանը, ո՞ւր է քարը»: Հայր Մակարն ասաց. «Նաւակը քո սիրտն է, պահի՛ր այն: Պարանը քո հոգին է, կապի՛ր այն մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որն այն քարն է, որը զօրութիւն ունի բոլոր դիւային ալիքների վրայ, որոնց դէմ կռւում են սրբերը, քանի որ հեշտ չէ ամէն շունչ առնելիս ասել. «Տէր Յիսուս Քրիստոս, ողորմի՛ր ինձ. ես օրհնում եմ Քեզ, իմ Տէր Յիսուս, օգնի՛ր ինձ»: Ալիքների դէմ պայքարող ձուկը կը բռնուի առանց իմանալու, մինչդեռ մենք, ամուր կանգնելով մեր Տէր Յիսուս Քրիստոսի փրկիչ անունով, կ՚ապրենք: Նա կը բռնի սատանայի քթից այն բանի համար, ինչ արել է մեզ, Իսկ մենք՝ տկարներս, կ՚իմանանք, որ օգնութիւնը եկել է մեր Տիրոջից»:

* * *

Հայր Մակարը պատմեց. «Այցելեցի մի հիւանդի, որն անկողնում էր: Նա մի ծերունի էր, որն արտասանում էր մեր Տէր Յիսուս Քրիստոսի փրկաբեր եւ օրհնեալ անունը: Երբ ես հարցրի նրան իր առողջութեան մասին, նա ուրախութեամբ ասաց

ինձ. «Քանի որ ես մշտապէս ընդունում եմ կեանքի այս քաղցր կերակուրը, որն է մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը, ինձ տրւում է քնելու վայելքը՝ Թագաւորի տեսիլքով օժտուած, Քրիստոս Նազովրեցու կերպարանքով, որն ինձ յայտնել է երեք անգամ. «Դո՛ւ, դու իմ մէջ ես, եւ ոչ թէ ուրիշի մէջ, այլ իմ մէջ»»:

Ս. ԵՒԱԳՐ ՊՈՆՏԱՑԻ[1]
(345–399)

Եւագր Պոնտացին կամ Ս. Եւագր Մենակեաց, ազգութեամբ յոյն կրօնաւոր էր: Նա եղել է վանական, ճգնաւոր, աստուածաբան, հռետոր եւ հռչա-

[1] Ս. Եւագր Պոնտացին Հայց. Առաքելական Եկեղեցու տօնելի սրբերից է, որի գրութիւնների մի զգալի մասը յունարէնից հայերէնի է թարգմանուել դեռևս Ե. դարում՝ մեծ ազդեցութիւն թողնելով հայ հոգևոր գրականութեան զարգացման վրայ:

կաւոր ու բացառիկ մատենագիր: Ծնուել է 345 թ. հռոմէական Պոնտոս նահանգի Իբորա փոքրիկ քաղաքում: Նրա հայրը եղել է տեղի քորեպիսկոպոսը: Նա ուսանել է Կեսարիայում, աշակերտել Ս. Բարսեղ Կեսարացուն եւ Ս. Գրիգոր Նազիանզացուն: Բարեկամական սերտ կապեր է ունեցել Ս. Բարսեղ Կեսարացու եղբօր՝ Ս. Գրիգոր Նիւսացու հետ, որի կողմից ձեռնադրուել է սարկաւագ: Կոստանդնուպոլսի Տիեզերական Բ ժողովի ժամանակ (381 թ.) նա ուղեկցել է Ս. Գրիգոր Նազիանզացուն: Մի որոշ ժամանակ ապրել է Կ. Պոլսում, ապա տեղափոխուել Պաղեստին եւ վերջում՝ Եգիպտոս, ուր մերժելով ձեռնադրուել եպիսկոպոս, վարել է ճգնազգեաց վանականի կեանք եւ այնտեղ կնքել է իր մահկանացուն 399 թուականին՝ բարի համբաւ թողնելով քրիստոնեաների մէջ[1]:

Իր վախճանումից շատ տարիներ անց, 553թ., Բիւզանդիայում, աստուածաբանական թէժ վէճերի ընթացքում, եւ յատկապէս Կոստանդնուպոլսի Գ (680–681), Նիկիոյ Բ (787) եւ Կոստանդնուպոլսի Դ (869–870) այսպէս կոչուած «Տիեզերական» ժողովներում Ս. Եւագր Պոնտացին յանիրաւի մեղադրուել է եւ դատապարտուել՝ համարուելով իբրեւ պաշտպան Որոգինէս Աղեքսանդրացու (185–253) հերձուածողական եւ գնոստիկեան գաղափարների[2]:

---

1 La Filocalia, Volume I, (Evagrio Monaco), 5ª Ed. Milano 1995.

2 Մինչև այսօր Ս. Եւագր Պոնտացին մնում է դատապարտուած քաղկեդոնական և մասամբ էլ հին Արևելեան եկեղեցիների կողմից, թէև Հռովմէական Կաթոլիկ Եկեղեցին վերջերս փորձել է վերականգնել նրան իբրև սուրբ:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Ս. Եւագր Պոնտացին հեղինակն է Եկեղեցու կողմից ընդունուած «մահացու մեղքերի» առաջին ցուցակի, որն ի տարբերութիւն հետագայում Հռոմի պապ Գրիգոր Մեծի (540–604) կազմած ցուցակի, ոչ թէ եօթ, այլ ութ մեղքեր է ընդգրկում, ըստ հետեւեալի՝ որկրամոլութիւն, բղջախոհութիւն կամ պոռնկութիւն, ագահութիւն կամ արծաթասիրութիւն, տրտմութիւն, սնափառութիւն, բարկութիւն, ամբարտաւանութիւն (հպարտութիւն), ծուլութիւն (անտարբերութիւն):

ԵՒԱԳՐ ՊՈՆՏԱՑԻ ՈՒԹ ՉԱՐ ՄՈԼՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Որկրամոլութիւն

Պտղի սկիզբը ծաղիկն է, իսկ գործնական կեանքի սկիզբը՝ ժուժկալութիւնը: Նա, ով վերահսկում է իր ստամոքսը, նուազեցնում է կրքերը, իսկ, ընդհակառակը, նա, ով ենթարկւում է պարարտ սննդին, աւելացնում է իր կորստաբեր հաճոյքները:

Ինչպէս Ամաղէկից են սկիզբ առնում իր տոհմի անդամները, այնպէս էլ որկրամոլութիւնից առաջանում են մարդկային կրքերը: Ինչպէս փայտն է կրակի կերակուրը, այնպէս էլ սնունդը՝ ստամոքսի համար: Շատ փայտը բորբոքեցնում է կրակը եւ վերածում հսկայ բոցի, այնպէս էլ առատ սնունդը խթանում է ցանկասիրութիւնը: Կրակը

հանգում է, երբ վառելափայտը քիչ է լինում, իսկ սննդի սակաւութիւնն էլ մարում է ցանկասիրութեան ախտը:

Որկրամոլութիւնը ծնում է անհնազանդութիւն, իսկ ախորժելի ուտեստների ձգտումն ու ճաշակումն էլ ձեզ դուրս է շպրտում դրախտից: Ճոխ ճաշերը յագեցնում են կոկորդը եւ սնուցում անժուժկալութեան որդը, որը երբեք չի քնում:

Սակաւապէտ փորը պատրաստւում է զգօն աղօթքի, իսկ լաւ լցուած որկորը, ընդհակառակը, երկար քուն է հրաւիրում:

Սթափ միտքը հնարաւոր է լինում ձեռք բերել շատ խղճուկ սննդակարգով, մինչդեռ ախորժահամ խորտիկներով ճոխացած կեանքը շպրտում է միտքը դէպի անդունդ:

Ծոմապահի աղօթքը նման է ճնճղուկի, որն արծիւից բարձր է թռչում, իսկ որկրամոլինը՝ պարուրւում է խաւարով: Ամպը թաքցնում է արեւի ճառագայթները, իսկ սննդի ծանր մարսողութիւնը՝ մթագնում է միտքը:

Կեղտոտ հայելին յստակ չի արտացոլում այն կերպարանքը, որը դրուած է իր դիմաց, եւ այն միտքը, որը բթացած է յագեցուածութիւնից, չի կարող ընդունել Աստծոյ գիտութիւնը:

Անմշակ հողը փշեր է ծնում, եւ որկրամոլութիւնից ապականուած մտքից մէջտեղ են գալիս չար մտքեր:

Ինչպէս ճահճից չի առաջանում ոչ մի քաղցր բուրմունք, նոյնպէս եւ որկրամոլի մօտ մենք չենք զգում խորհրդածութեան տենչալի անուշահոտութիւնը:

Որկրամոլի աչքը հետաքրքրութեամբ զննում է խնջոյքների սեղանները, մինչդեռ ժուժկալների հայեացքը ուղղուած է լինում իմաստունների ուսմունքներին:

Որկրամոլի հոգին թուարկում է նահատակների յիշատակման օրերը, իսկ ժուժկալների հոգին ընդօրինակում է նրանց վարքը:

Խարդախ զինուորը դողում է շեփորի ձայնից, որն ազդարարում է ճակատամարտը, ինչպէս շատակերը դողում է ժուժկալութեան կանչերից:

Եթէ դուք անձնատուր էք լինում ուտելու ցանկութեանը, այլեւս ոչինչ չի հերիքի բաւարարելու ձեր հաճոյքը: Ուտելիքի փափաքը, ըստ էութեան, նման է կրակին, որը միշտ պարուրում է եւ միշտ բոցավառւում: Բաւարար չափը լցնում է բաժակը, մինչդեռ անյատակ փորը երբեք չի ասի, որ «բաւական է»: Ձեռքերի տարածումը ու բարձրացումը փախուստի է մատնում Ամաղէկին, նոյնպէս եւ վեհասլաց կեանքը պարտութեան է մատնում մարմնական կրքերը[1]:

Ոչնչացրո՛ւ այն ամէնը, ինչ առնչուած է ախտերին ու մոլութիւններին, եւ մեծապէս խոնարհեցնելով՝ մահացրո՛ւ քո մարմինը: Ամէն դէպքում թող սպանուի թշնամին, նա քեզ այլեւս վախ չի պատճառի: Հետեւաբար,, մահացած մարմինը այլեւս չի խանգարի հոգուն: Դիակը չի զգում կրակի ցաւը եւ աւելին՝ ժուժկալը չի զգում մարած ցանկութեան հաճոյքը:

---

[1] Նկատի ունի Մովսէսի մարգարէի ձեռքերի տարածումն ու բարձրացումը, որպէս երաշխիք յաղթանակի՝ ամաղէկացիների դէմ իսրայէլացիների մղած պատերազմի ընթացքում (տեսնել՝ Ելից, գլուխ ԺԷ):

Եթէ սպանես եգիպտացուն[1], թաքցրու նրան աւազի տակ եւ մի՛ պարարտացրու մարմինը հանգած կրքով, քանզի ինչպէս որ թաքնուածը բողբոջում է պարարտ հողում, այնպէս էլ ճարպակալած մարմնում կիրքն է վերակենդանանում:

Թուլացող բոցը բորբոքւում է նորից, եթէ վրան չոր փայտ են աւելացնում, եւ նուազող հաճոյքը վերակենդանանում է կերակրի յագեցուածութեամբ: Մի՛ խղճացիր սովի համար ողբացող մարմնին եւ մի՛ հաճոյացրու նրան ճոխ կերակուրներով: Իրականում, եթէ զօրացնես այն պարարտ սննդով, այն կը շրջուի քո դէմ՝ տանելով քեզ դէպի դադար չունեցող մի պատերազմի, մինչեւ որ ստրկացնի քո հոգին եւ վերածի այն վաւաշոտութեան ստրուկի:

Բղջախոհութիւն

Ժուժկալութիւնը ծնում է չափաւորութիւն, մինչդեռ որկրամոլութիւնը մայրն է անառակութեան: Ձէթը սնուցում է ճրագի լոյսը, իսկ կանանց հետ յաճախակի շփումը հրահրում է ցանկասիրութեան բռնկումը:

Ինչպէս կատաղի ալիքներն են մոլեգնում վատ խարսխուած նաւի դէմ, այնպէս էլ ցանկասիրութեան կրքերը մոլեգնում են ու ներխուժում մարդու անժուժկալ մտքի մէջ: Միւս կողմից էլ բղջախոհութիւնը որպէս իրեն դաշնակից է ընտրում որկրամոլութիւնը, ազատութիւն է տալիս նրան, միանում է

[1] «եգիպտացի» ասելով՝ անապատական հայրերը նկատի ունեն գայթակղութիւն առաջացնող մի կատաղի դեւի:

հակառակորդներին եւ, ի վերջոյ, թշնամիների կողմը բռնելով՝ սկսում է իր պայքարը:

Նա, ով հանդարտութիւն[1] է սիրում, անխոցելի է մնում թշնամու նետերի դէմ, իսկ նա, ով խառնւում է ամբոխին, անընդհատ հարուածներ է ստանում:

Նախքան երիտասարդ մի կնոջ մօտենալդ, մօտեցի՛ր վառուող կրակին, մանաւանդ, եթէ դու նոյնպէս երիտասարդ ես: Իրականում, երբ դու մօտենում ես կրակի բոցին եւ մի ուժեղ այրուածք ես ստանում, արագ հեռանում ես, մինչդեռ երբ գայթակղւում ես կանանց շաղակրատանքով, դժուար թէ կարողանաս դրանից փախչել:

Որովայնը լցնողն ու իմաստունի հանգամանք դրսեւորողը նման է նրան, որ պնդում է, թէ ինքը յարդով է ծածկում ու զսպում կրակի ուժը: Ինչպէս գործնականում անհնար է մարել կրակը ծղօտով, այնպէս էլ անհնար է զսպել անժուժկալութեան բորբոքուած թափը:

Սիւնը կանգնած է մի հիմքի վրայ, եւ ցանկասիրութեան կիրքն էլ իր հիմքերն ունի յագեցումի մէջ:

Ագահութիւն կամ արծաթասիրութիւն

Ագահութիւնն է արմատը բոլոր չարիքների, որը վնասակար թփերի նման սնուցում է միւս բոլոր կրքերը եւ թոյլ չի տալիս, որ դրանից առաջացածները չորանան:

---

[1] Այստեղ խօսքը վերաբերում է ներքին խաղաղութեանը, ինքնատիրապետմանը, յիշողութեան և միայնութեան հանգստութեանը՝ վանականի պարագայում:

Նա, ով ուզում է յետ մղել կրքերը, թող հանի դրանց արմատը: Եթէ իսկապէս էտում ես ճիւղերը լաւութեան համար, բայց ագահութիւնը մնում է, դա քեզ ոչ մի օգուտ չի բերի, որովհետեւ դրանք չնայած կրճատուել են, սակայն շուտով աճելու են եւ ծաղկելու:

Հարուստ վանականը նման է չափազանց ծանրաբեռնուած մի նաւի, որը խորտակւում է փոթորկի ուժգնութիւնից: Ինչպէս ջուր ներթափանցած նաւը փորձութեան է ենթարկւում ամէն ալիքից, այնպէս էլ հարուստը խորտակւում է հոգսերի մէջ:

Փոխարէնը, այն վանականը, որ ոչինչ չունի, մի ճարպիկ ճամփորդ է, որն ապաստան է գտնում ամէնուր: Նա նման է մի արծուի, որը թռչում է բարձր եւ իջնում է միայն իր կերակուրը փնտռելու, երբ դրա կարիքն ունի: Նա ամէն փորձութիւնից վեր է, ծիծաղում է ներկայի վրայ եւ բարձրանում է բարձունքներ՝ հեռանալով երկրայիններից եւ միանալով երկնայիններին. նա իսկապէս ունի թեթեւ թեւեր, որոնք երբեք չեն ծանրաբեռնուած հոգսերից: Ցաղթահարում է բռնութիւնը եւ լքում է տեղը առանց ցաւի: Մահը գալիս է, եւ ինքը գնում է հանդարտ յօժարութեամբ, քանզի հոգին, իրականում, չի կապուել ոչ մի տեսակ ստրկութեան կապով:

Փոխարէնը նա, ով շատ հարստութիւն ունի, ենթարկւում է բազում հոգսերի եւ շան պէս կապուած է լինում իր շղթային, եւ երբ ստիպուած է լինում հեռանալ, իր հետ տանում է իր հարստութեան յիշողութիւնները որպէս անտանելի ծանրութիւն եւ

անպէտք տառապանք: Նա շատ է ընկճուում տխրութիւնից եւ տանջւում յուսահատութիւնից, որ կորցրել է իր հարստութիւնը:

Երբ գալիս է մահը, ագահ հարուստ մարդը թշուառօրէն թողնում է իր ունեցուածքը, աւանդում է իր հոգին, մինչդեռ աչքը յառած է մնում իր հարստութեանը: Դժկամօրէն քարշ են տալիս նրան ինչպէս մարմինը մի փախած ստրուկի: Նա առանձնանում է մարմնից եւ չի բաժանւում իր շահերից, որովհետեւ կիրքը նրան աւելի է գրաւում, քան այն, ինչը քարշ է տալիս նան:

* * *

Ծովը երբեք ամբողջութեամբ չի լցւում, չնայած գետերից ջրի մեծ զանգուած ստանալուն, այնպէս, ինչպէս երբեք չի բաւարարւում ագահ մարդու հարստութեան ցանկութիւնը, նա կրկնապատկում է այն եւ անմիջապէս կամենում է քառապատկել, եւ այդ բազմապատկումը երբեք չի դադարում մինչեւ որ մահը չգայ եւ վերջ չդնի այդպիսի անվերջ շտապողականութեանը:

Խելամիտ վանականը կը հոգայ մարմնի կարիքները եւ հաց ու ջուր կը մատուցի աղքատ ստամոքսին, հարուստներին փորի հաճոյքի համար չի շողոքորթի եւ իր ազատ միտքը շատ տէրերի չի ենթարկի, իրականում, իր ձեռքերը միշտ բաւարար են իր կարիքները հոգալու համար:

Ոչինչ չունեցող վանականը մի մարտիկ է, ում հնարաւոր չէ ուղիղ հարուածել, նա նաեւ արագընթաց մի մարզիկ է, որն արագօրէն հասնում է երկնային հրաւէրի մրցանակին:

Հարուստ վանականը ուրախանում է բազմաթիւ եկամուտներով, իսկ նա, որ ոչինչ չունի, ուրախանում է այն պարգեւներով, որոնք գոյանում են արդար եւ լաւ կերպով ձեռք բերուած բաներից:

Ագահ վանականը շատ է աշխատում, իսկ նա, որ ոչինչ չունի, իր ժամանակն օգտագործում է աղօթքի եւ ընթերցանութեան համար:

Ագահ վանականը լցնում է իր պահոցները ոսկով, իսկ նա, որ ոչինչ չունի, գանձեր ունի կուտակած դրախտում:

Անիծեա՛լ լինի նա, որ դարբնում է կուռքը եւ յետոյ թաքցնում այն, ինչպէս նաեւ նա, ով սիրում է ագահութիւնը: Առաջինը, ըստ էութեան, խոնարհւում է կեղծիքի եւ անօգուտի առաջ, իսկ երկրորդը կրում է իր մէջ պատկերը[1] հարստութեան, պարզապէս որպէս նմանակում այդ հարստութեան:

Բարկութիւն

Զայրոյթը մի կատաղի կիրք է, որը յաճախ մղում է նրանց, ովքեր գիտելիք ունեն, կորցնելու իրենց խելքը, խարխլում է հոգին եւ նսեմացնում մարդկային ողջ համայնքը:

Ուժեղ քամին աշտարակ չի խորտակի, իսկ թշնամանքը չի կարող քարշ տալ հեզ հոգուն:

Զուրը շարժւում է քամիների ուժգնութիւնից, իսկ ցասումը՝ խենթ մտքերից: Բարկացած վանականը տեսնում է մէկին եւ ատամներն անմիջապէս կրճտացնում:

---

[1] Եւագրի համար կրքերով համակուած մարդն իր սրտում ունի իր վրայ տիրապետող առարկայի պատկերը:

Մշուշի տարածումը թանձրացնում է օդը, իսկ զայրոյթի պոռթկումը մթագնում է բարկացածի միտքը:

Առաջացող ամպը ծածկում է արեւը, եւ այդպիսով զայրալից ու գարշելի մտածումները բթացնում են միտքը:

Առիւծը վանդակում անընդհատ թափահարում է դուռը, ինչպէս դաժան մարդն իր խցում, երբ զայրալից մտքերն են տիրում նրան:

Մեծահոգի վանականը մի հանդարտ աղբիւր է, մի հաճելի ըմպելիք, որը մատուցւում է բոլորին, մինչդեռ բարկացածի միտքը շարունակ խռովայոյզ վիճակում է եւ ջուր չի տալիս ծարաւին, իսկ եթէ յանկարծ տայ, նրա ջուրը պղտոր է ու մնասակար: Խիզախների աչքերն անհանդարտ են ու արիւնալից, որոնք բացայայտում են բախման մէջ գտնուող սիրտը: Մեծահոգի դէմքը, սակայն, ողջախոհութիւն է ցոյց տալիս, իսկ նրա բարի աչքերը՝ խոնարհ են:

* * *

Մարդու հեզութիւնը յիշւում է Աստծոյ կողմից եւ խաղաղ հոգին դառնում է Սուրբ Հոգու տաճար:

* * *

Քրիստոսն իր գլուխը յենում է հեզ հոգիների վրայ, եւ միայն խաղաղ միտքն է դառնում Սուրբ Երրորդութեան իջեւան:

Աղուէսներն իրենց որջն են պատրաստում վրդովուած հոգում, իսկ վայրի գազանները պատսպարւում են ապստամբ սրտում:

Ազնիւ մարդը փախչում է վատահամբաւ տներից, իսկ Աստուած՝ չար սրտից:

Զուրն ընկած քարը խառնում է ընկած տեղը, ինչպէս չար խօսքը՝ մարդու սիրտը:

Հեռացրո՛ւ քո հոգուց բարկութեան մտքերը եւ մի՛ խրախուսիր թշնամանքը քո սրտում եւ մի՛ խանգարիր այն աղօթքի ժամանակ: Արդարեւ, ինչպէս ծղօտների ծուխը մթնեցնում է տեսողութիւնը, այնպէս էլ մարդկային միտքը մթագնում է ոխակալութիւնից աղօթքի ընթացքում:

Բարկացկոտների մտքերը սերում են իժերից եւ խժռում են սիրտը, որը ծնել է նրանց: Այդպիսիների աղօթքը գարշելի խունկ է, եւ նրանց սաղմոսերգութեան ձայնն էլ անհաճոյ է:

Բարկացկոտ եւ ամբարիշտ մարդու պարգեւը նման է մրջիւններով պատուած ընծայի եւ անշուշտ տեղ չի ունենայ սուրբ ջրով ցօղուած զոհասեղանների վրայ:

Համարձակ մարդը խանգարուած երազներ կ՛ունենայ, իսկ զայրացածը՝ կը պատկերացնի գազանների յարձակումներ: Մեծահոգի մարդը, սակայն, որը ոխ չի պահում, մարզւում է հոգեւոր ճառերով եւ գիշերը ստանում առեղծուածների լուծումը:

Տրտմութիւն կամ տխրութիւն

Տրտմութեամբ կամ տխրութեամբ տառապող վանականը չգիտէ, թէ ինչ է հոգեւոր հաճոյքը: Տրտմութիւնը հոգու ընկճուածութիւն է եւ առաջանում է բարկութեան մտքերից:

Վրէժխնդրութեան ցանկութիւնը, ըստ էութեան, բնորոշ է զայրոյթին: Վրէժի ձախողումը տխրութիւն է առաջացնում. տխրութիւնը առիւծի բերանն է եւ հեշտութեամբ խժռում է տխուրին:

Տրտմութիւնը սրտի որդ է, որն ուտում է իրեն ծնող մօրը:

Մայրը տանջւում է երեխային ծննդաբերելիս, բայց երբ ծնւում է երեխան, նա ազատւում է ցաւից: Տրտմութեան պարագայում, սակայն, երբ այն մէջտեղ է գալիս, երկար ցաւ է պատճառում եւ նրա գոյատեւումը, բազում ջանքերից յետոյ, նուազ տառապանք չի պատճառում:

Տխուր վանականը հոգեւոր ուրախութիւն չի ճանաչում, ինչպէս բարձր ջերմութիւն ունեցողը չի ճանաչում մեղրի համը:

Տխուր վանականը չի իմանայ ինչպէս ուղղել իր միտքը դէպի հոգեւոր խոկում (մեդիտացիա), ոչ էլ մաքուր աղօթք է բխում նրանից: Տխրութիւնը խոչընդոտ է բոլոր լաւ բաների:

Ոտքերի կապուած լինելը արգելք է վազելուն, տխրութիւնն էլ խոչընդոտ է խոկումի:

Նա, ով կապուած է տխրութեամբ, պարտուած է իր կրքերից, եւ որպէս ապացոյց իր պարտութեան՝ կապերն հետզհետէ աւելանում են:

Արդարեւ տրտմութիւնը բխում է մարմնական ցանկութեան յաջողութեան բացակայութիւնից, քանի որ ցանկութիւնը բնական է բոլոր կրքերի պարագայում: Ցանկութեանը յաղթահարողը կը յաղթահարի կրքերը, իսկ կրքերը յաղթողը չի ենթարկուի տրտմութեան:

Չափաւոր մարդը չի տրտմում սննդի պակասի պատճառով, ոչ էլ իմաստունը, երբ նրա վրայ յարձակւում է խելագար մարդը: Նոյնպէս հեզը չի տրտմում, երբ հրաժարւում է վրէժխնդրութիւնից, ոչ էլ խոնարհը, եթէ զրկւում է մարդկանց պատուից, ոչ էլ առատաձեռն մարդը, երբ նա դրամական վնասներ է կրում: Նրանք, ըստ էութեան, կտրականապէս խուսափել են այս բաները տեսնելուց: Ինչպէս լաւ զրահաւորուածը վանում է հարուածները, այնպէս էլ կրքերին տիրապետող մարդը չի տուժում տխրութիւնից:

* * *

Վահանը զինուորի անվտանգութիւնն է, իսկ պարիսպները՝ քաղաքի, սակայն վանականի համար երկուսից էլ աւելի ապահով է ներքին խաղաղութիւնը:

* * *

Իրականում ուժեղ թեւից արձակուած նետը յաճախ թափանցում է վահանը, եւ թշնամիների բազմութիւնը քանդում է պատերը, մինչդեռ տխրութիւնը չի կարող գերակշռել ներքին խաղաղութեանը:

* * *

Նա, ով տիրում է կրքերին, կը տիրի նաեւ տխրութեանը, մինչդեռ նա, ով պարտւում է հաճոյքից, նա չի կարող խուսափել իր ստրկութեան կապերից:

* * *

Ագահը, նիւթական վնաս կրելիս, ահաւոր կերպով է տխրում, իսկ հարստութիւնն արհամարհողը միշտ զերծ է մնում տխրութիւնից:

* * *

Ով փառք է փնտռում, երբ անարգանքի ենթարկուի, մեծ ցաւ է զգում, մինչդեռ խոնարհները կ՛ընդունեն այն որպէս ուղեկից:

* * *

Մառախուղը թուլացնում է աչքերի ուժը, իսկ տխրութիւնը բթացնում է խորհրդածութիւններին նուիրուած միտքը: Արեւի լոյսը չի հասնում ծովային անդունդներին, եւ լոյսի տեսքը չի լուսաւորում տխուր սիրտը: Քաղցր է արեւի ծագումը բոլոր մարդկանց համար, բայց նոյնիսկ դա տհաճ է տխուր հոգու համար: Քորը խլում է համի զգացողութիւնը, քանի որ տխրութիւնը վերացնում է հոգու ընկալման առաքինութիւնը, բայց նա, ով արհամարհում է աշխարհի հաճոյքները, չի անհանգստանում տխրութեան վատ մտքերից:

Ծուլութիւն, անտարբերութիւն

Ծուլութիւնը հոգու թուլութիւնն է, որը առաջանում է, երբ մարդը չի ապրում ըստ բնութեան, ոչ էլ ազնուօրէն դիմակայում է գայթակղութեանը: Իրականում, գայթակղութիւնը մի վեհ հոգու համար նոյնն է, ինչ սնունդը՝ առոյգ մարմնի համար:

Հիւսիսային քամին սնուցում է բողբոջները, իսկ գայթակղութիւնները ամրացնում են հոգու դիմադրողականութիւնը:

Քամին քշում է ջրի նօսր ամպը այնպէս, ինչպէս քշում է այն միտքը, որը յարատեւութիւն չունի անփոփոխութեան պատճառով:

Գարնանային ցօղը մեծացնում է դաշտի պտուղը, իսկ հոգեւոր խօսքը բարձրացնում է հոգու ամրութիւնը:

Ծուլութեան հոսանքը վանականին դուրս է մղում իր կացարանից, իսկ նա, ով յարատեւում է, միշտ հանգիստ է:

Ծոյլն իր խցից դուրս գալու որպէս պատրուակ է բերում հիւանդներին այցելելը[1], որի ներքոյ իրականում թաքցնում է իր հետապնդած սեփական նպատակները:

Ծոյլ վանականը ծոյլ է նաեւ աղօթքի մէջ: Երբեք ամբողջութեամբ չի արտասանում աղօթքի խօսքերը: Ինչպէս հիւանդը երբեք չի հասցնում աւելորդ ծանրութիւն կրել, այնպէս էլ, իհարկէ, ծոյլը ջանասիրաբար չի կատարում իր պարտականութիւնները Աստծոյ հանդէպ. մէկին պակասում է ֆիզիկական ուժը, միւսին՝ հոգու կորովը:

Համբերութիւնը, ամէն ինչ մեծ հաստատակամութեամբ անելը եւ Աստծուց երկնչելը բուժում են ծուլութիւնը:

---

[1] Անապատական վանականների աւանդոյթի համաձայն՝ խուցը թողնելը ծուլութեան գլխաւոր գայթակղութիւններից մէկն էր: Հիւանդներին այցելելը, հետևաբար, բարեգործութեան քօղի տակ թաքցնելու միջոց էր միայնութիւնից փախչելու համար:

Իւրաքանչիւր գործի մէջ քեզ համար մի արդար չափ սահմանիր եւ մի յանձնուիր այն աւարտելուց առաջ, միաժամանակ աղօթիր խիեմաբար եւ ուժգին, եւ յայնժամ ծուլութեան ոգին կը փախչի քեզանից:

Մնափառութիւն

Մնափառութիւնը անբանաւոր (իռացիոնալ) կիրք է, որը հեշտութեամբ խճճւում է բոլոր առաքինի արարքների հետ:

Բաղեղը կառչում է ծառից եւ, երբ հասնում է գագաթին, չորացնում է արմատը, նոյնպէս եւ մնափառութիւնը ծագում է առաքինութիւններից եւ չի հեռանում, քանի դեռ չի սպառել նրանց ուժը:

Գետնին նետուած խաղողի ողկոյզը հեշտութեամբ է թառամում, եւ առաքինութիւնը, եթէ այն մնում է մնափառութեամբ, կորչում է:

Ծակ տոպրակը չի պահպանում իր մէջ պահուածը, եւ մնափառութիւնը ոչնչացնում է առաքինութիւնների վարձատրութիւնը:

Քամին ջնջում է մարդու հետքը, ինչպէս մնափառների ողորմութիւնը: Վեր նետուած քարը չի հասի երկնքին, ինչպէս այն մարդկանց աղօթքը, որոնք ցանկանում են հաճեցնել մարդկանց, չի հասնի Աստծուն:

* * *

Մնափառութիւնը խորհուրդ է տալիս աղօթել հրապարակներում, մինչդեռ դրա դէմ պայքարողն աղօթում է իր փոքրիկ սենեակում:

* * *

Անխոհեմ մարդը ակնյայտ է դարձնում իր հարստութիւնը եւ շատերին դրդում է, որ խաբեն իրեն: Փոխարէնը դու թաքցրու քո ունեցածը: Ճանապարհին կարող ես հանդիպել յարձակուողների, մինչեւ հասնես խաղաղութեան քաղաք, ուր կը կարողանաս հանգիստ օգտագործել քո ապրանքները:

Մնափառի առաքինութիւնը սպառուած զոհաբերութիւն է, որը չի կարելի մատուցել Աստծոյ զոհասեղանին:

Հպարտութիւն, ամբարտաւանութիւն

Հպարտութիւնը կամ գոռոզամտութիւնը հոգու թարախալից ուռուցք է, որը եթէ հասունանայ, կը պայթի՝ սարսափելի գարշահոտութիւն արձակելով:

Կայծակի շեղբը ազդարարում է ամպրոպի որոտումը, իսկ սնափառութեան դրսեւորումը՝ հպարտութեան գոյութիւնը:

Մեծամիտի հոգին մեծ բարձունքների է հասնում ու այնտեղից ընկնում է անդունդը:

Աստծուն ուրացողը հիւանդանում է հպարտութեամբ, երբ լաւ ձեռք բերուած բաները վերագրում է իր սեփական կարողութիւններին:

Ինչպէս ընկնում է սարդոստայնի մէջ բարձրացողը, այնպէս էլ ընկնում է նա, ով ապաւինում է իր սեփական կարողութիւններին:

Պտուղների առատութիւնը խոնարհեցնում է ծառի ճիւղերը, իսկ առաքինութիւնների առատութիւնը խոնարհեցնում է մարդու միտքը:

Թօշնած պտուղը հողագործի համար անօգուտ է, իսկ հպարտութիւնն էլ Աստծոյ կողմից ընդունելի չէ:

Փայտէ նեցուկը պահում է մրգերով ծանրաբեռնուած ծառի ճիւղը, իսկ Աստծուց երկնչելը պահում է առաքինի հոգին: Ինչպէս մրգերի ծանրութիւնը կոտրում է ծառի ճիւղը, այնպէս էլ հպարտութիւնը խորտակում է առաքինի հոգին:

* * *

Հոգիդ մի յանձնիր հպարտութեանը եւ սարսափելի երեւակայութիւններ չես ունենայ: Մեծամիտների հոգին Աստծուց լքուած է եւ դարձած դեւերի չար ուրախութեան առարկայ: Գիշերը նա պատկերացնում է, թէ ինչպէս են գազանների երամակները յարձակւում իր վրայ, իսկ ցերեկը նրան անհանգստացնում են գարշելի մտքերը: Քնած ժամանակ նա հեշտութեամբ տագնապում է սարսափահար, իսկ արթուն ժամանակ նա վախենում է նոյնիսկ թռչնի ստուերից: Ծառերի տերեւների խշշոցը նոյնիսկ սարսափեցնում է մեծամտին, իսկ ջրի ձայնը կործանում է նրա հոգին: Նա, ով փաստօրէն հակառակուել է Աստծուն՝ հրաժարուելով Նրա օգնութիւնից, ենթակայ է լինում գռեհիկ ուրուականների պատճառած սարսափին:

* * *

Հպարտութիւնը դրախտից դուրս շպրտեց հրեշտակապետին, որը կայծակի նման ընկաւ երկրի վրայ:

Փոխարէնը, սակայն, խոնարհութիւնը մարդուն տանում է դէպի դրախտ եւ պատրաստում նրան մաս կազմելու հրեշտակների երգչախմբին:

Ինչո՞վ ես հպարտանում, ո՜վ մարդ, երբ բնութեամբ դու կաւ ես եւ փծուն, եւ ինչո՞ւ ես բարձրանում ամպերից վեր:

Մտածի՛ր քո բնութեան մասին, որովհետեւ դու հող ես ու մոխիր, եւ շուտով կը դառնաս փոշի, այժմ հպարտ եւ շուտով որդ:

Ինչո՞ւ ես բարձրացնում գլուխդ, որը քիչ ժամանակ անց պիտի թառամի:

* * *

Մեծ է այն մարդը, ում օգնական է Աստուած, եւ երբ նա մի անգամ լքուած է եղել, ճանաչել է իր բնութեան տկարութիւնը: Ամէն ինչ, որ դու ունես, ստացել ես Աստծուց, հետեւաբար մի՛ արհամարհիր Արարչին:

* * *

Մի՛ արհամարհիր խոնարհին. իրականում, նա քեզնից աւելի ապահով է: Նա քայլում է երկրի վրայ եւ չի շտապում, բայց ով շատ է բարձրանում, եթէ ընկնի, ջարդուփշուր կը լինի:

Մեծամիտ վանականը նման է առանց արմատների ծառի, որը չի կարող դիմանալ քամու ուժին:

Համեստ միտքը նման է մի անառիկ միջնաբերդի, եւ ով բնակուի այնտեղ, անհասանելի կը լինի:

Ինչպէս պայթած պղպջակը անհետանում է, այնպէս էլ մեծամիտի յիշատակը կորչում է:

Խոնարհի խօսքը քաղցրացնում է հոգին, մինչ-դեռ մեծամիտինը լեցուն է պարծենկոտութեամբ:

Աստուած կռանում է խոնարհների աղօթքի առաջ, փոխարէնը զայրանում է գոռոզների աղա-չանքից:

Խոնարհութիւնը տան պսակն է, եւ պահում է ապահով այնտեղ մտնողին:

Թանկարժէք քարը փայլում է ոսկէ ապարան-ջանում, իսկ մարդկային խոնարհութիւնը՝ բազմա-թիւ առաքինութիւններով:

ԵՒԱԳՐ ՊՈՆՏԱՑԻ ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ԴԵՒԸ

Բոլոր դեւերը հոգուն սովորեցնում են հաճոյքի սէրը, միայն տրտմութեան դեւն է զերծ մնում դրա-նից: Ընդհակառակը, նա ոչնչացնում է միւս դեւերի կողմից ներշնչուած բոլոր մտքերը՝ թոյլ չտալով հո-գուն որեւէ հաճոյք զգալ, թմրեցնելով նրան իր տխ-րութեամբ: Ճիշտ է այն, ինչ ասուել է, որ տխուր մարդու ոսկորները ցամաքում են (Առակ. ԺԷ 22): Բայց եթէ մի քիչ դիմադրութիւն ցոյց տրուի, ապա այս դեւը կը ծառայի մենակեացին զօրացնելու հա-մար նրան: Նա կը համոզի նրան, որ չմօտենայ այս աշխարհի որեւէ բանի կամ որեւէ հաճոյքի: Եթէ վերջինս յամառում է իր պայքարի մէջ, նրա մէջ կ՛առաջացնի մտքեր, որոնք կը դրդեն նրան հե-ռացնել իր հոգին այդ տանջանքներից կամ ստի-պել նրան փախչել այդ վայրից: Ահա թէ ինչպէս էր մտածում եւ տառապում երանելի Յովբը, որը չար-

չարւում էր նոյն դեւից. «Երանի թէ կարենայի ձեռք մեկնել ինքս ինձ կամ մէկ ուրիշին» (Յովբ Լ 24)։ Այս դեւի խորհրդանիշն է իժը՝ թունաւոր սողունը։ Բնութիւնը նրան շնորհել է, բարեհոգաբար, այն յատկութիւնը, որ կարող է ոչնչացնել այլ կենդանիների թոյները եւ նոյնիսկ սպանել նրանց։ Այա դեւին է, որ սուրբ Պօղոսը յանձնել է Կորնթոսում մեղանչած մարդուն, բայց յետոյ շտապել է գրել կորնթացիներին. «Աղաչում եմ, որ հաստատէք ձեր սէրը նրա հանդէպ, որպէսզի նա չընկճուի աւելորդ տխրութիւնից» (Բ Կորնթ. Բ 7–8)։

Եւ այնուամենայնիւ, այս ոգին, որը տառապեցնում է մարդկանց, կարող է լինել նաեւ բարի ապաշխարութեան կրողը։ Սուրբ Յովհաննէս Մկրտիչն էլ «իժերի ծնունդներ» է կոչել նրանց, ովքեր խոցուել են այս ոգուց, եւ ովքեր ապաստան էին փնտռում Աստծոյ մօտ։ Նա ասել է. «Ո՞վ է ձեզ սովորեցրել փախչել գալիք բարկութիւնից։ Ուրեմն ապաշխարութեան արժանի պտուղներ բերէք եւ մի՛ մտածէք ինքներդ ձեզ ասել, թէ մենք Աբրահամին ունենք իբրեւ հայր» (Մտթ. Գ 7–9)։ Ամէն ոք, որ իսկապէս ընդօրինակել է Աբրահամին եւ հեռացել իր երկրից ու իր ազգականներից, աւելի ուժեղ է դարձել, քան այս դեւը։

Եթէ որեւէ մէկի վրայ գերիշխում է բարկութիւնը, ուրեմն նա ենթակայ է դեւերին։ Եւ եթէ մէկը ծառայում է դրանցից մէկին, այդպիսին օտար է վանական կեանքին, օտար է մեր Փրկչի ճանապարհներին, քանի որ Տէրն ինքն է մեզ ասում, որ ինքը ճանապարհ է ցոյց տալիս միայն խոնարհներին։ Հետեւաբար, երբ միայնակեացների միտքը

ապաստան է գտնում հեզութեան հարթավայրում, դժուար թէ ենթակայ լինի դիւահարութեան, քանի որ չկայ այլ առաքինութիւն, որից դեւերը աւելի շատ են վախենում, քան նոյնինքն հեզութիւնը: Սա այն առաքինութիւնն է, որ ձեռք էր բերել մեծն Մովսէսը, որը յայտնի էր որպէս ամենահեզը մարդկանց մէջ: Եւ սուրբ Դաւիթը յայտարարել է, որ այս առաքինութիւնը արժանի է Աստծոյ կողմից յիշատակուելու. «Յիշի՛ր Տէր Դաւթին եւ նրա ամբողջ հեզութիւնը» (Սաղմ. ՃԼԱ 1):

Եւ նաեւ Փրկիչն ինքը պատուիրել է մեզ ընդօրինակել իր հեզութիւնը. «Սովորեցէ՛ք ինձնից, որ ես հեզ եմ եւ սրտով խոնարհ, եւ կը գտնէք հանգիստ ձեր հոգիների համար» (Մտթ. ԺԱ 29):

Եթէ մէկը հրաժարուել է ուտելիքից եւ ըմպելիքից, բայց գրգռել է իր բարկութիւնը չար մտքերով, նա նման է նաւի, որը նաւարկում է դեւի հետ իբրեւ նաւապետ: Մեր ամբողջ ուժով մենք պէտք է հոգ տանենք մեր շանը եւ սովորեցնենք նրան ոչնչացնել միայն գայլերին, առանց յօշոտելու ոչխարներին՝ տալով հեզութեան ապացոյց բոլոր մարդկանց հանդէպ:

Ս. ՆԵՂՈՍ ՍԻՆԱՅԵՑԻ[1] ԿԱՄ ՆԵՂՈՍ ՃԳՆԱՒՈՐ (ՄԱՀ. ՄՕՏ. 430Թ.)

Ս. Նեղոս Սինայեցին, այլ անուանումով՝ Նեղոս Ճգնաւոր կամ Ս Նեղոս Անկիւրացի, ազգութեամբ յոյն: Ծնուել է Անկիւրիայում (Անկարա), ազնուականի ընտանիքում: Իր աշխարհական կեանքում աշխատել է Կոստանդնուպոլսի կայսերական արքունիքում, ապա կայսեր կողմից նշանակուել է իբ-

[1] Ս. Նեղոս Սինայեցին Հայց. Եկեղեցւոյ կարևոր սրբերից մէկն է:

րեւ մէկը նրա եպարքոսներից: Նա ամուսնացած էր եւ ունէր մի որդի եւ մի դուստր:

Այնտեղ, Կոստանդնուպոլսում, Նեղոսը մի քանի այլ երիտասարդների հետ աշակերտել է տեղի նշանաւոր պատրիարք եւ աստուածաբան Ս. Յովհաննէս Ոսկեբերանին[1] (347թ. Անտիոք– 407 թ. Կոմանա, Պոնտոս), որն առաջնորդել է նրան Ս. Գրքի եւ բարեպաշտական այլ գրուածքների ուսումնասիրութեան մէջ: Մօտաւորապէս 390 կամ 404 թուականներին Նեղոսը հեռանում է իր կնոջից եւ, առնելով իր հետ իր որդուն՝ Թէոդուլոսին, երկուսով հաստատւում են Սինա լեռան մի վանքում, հետագայում նրանք դառնում են վանական եւ ձեռնադրւում իբրեւ քահանայ:

Ս. Նեղոս Սինայեցին թողել է գրական հարուստ ժառանգութիւն, որի մէջ յայտնի են իր աստուածաբանական խորիմաստ երկերը եւ մանաւանդ իր կարեւոր նամակները:

Իր գրուածքներում Նեղոսն իրեն չի ներկայացնում որպէս ճգնաւոր, այլ աւելի շուտ որպէս վանականների վերադաս կամ նորընծաների ուսուցիչ:

Հսկայական է եղել Անկիւրացի վանականի ազդեցութիւնը, որն արտացոլուած է նրա ծաւալուն նամակագրութեան մէջ: Որոշակի առիթով Արկադիոս կայսրն ինքը հրաւիրել է նրան աղօթելու Աստծուն, որպէսզի երկրաշարժներից եւ հեղձուցիչ շոգից փրկի Կոստանդնուպոլիսը, որոնք պատուհասում էին այն: Բայց Նեղոսը, իրեն բնորոշ ոգու ազատութեամբ, պատասխանում է. «Ինչպէ՞ս կա-

[1] Ս. Յովհաննէս Ոսկեբերան հայրապետը ծնուել է Անտիոք քաղաքում 347 թ. և վախճանուել Կոմանա, Պոնտոսում 407 թ.:

որող ես այդպիսի բան ինձնից խնդրել Կոստանդ-նուպոլսի համար, որն այնքան արատաւորուած ու պղծուած է յանցագործութիւններով եւ մեղաւոր է այն որոշումների համար, որոնք յանգեցրին աքսո-րելու եկեղեցու սիւնին, ճշմարտութեան ջահին, ամենաերանելի եպիսկոպոս Յովհաննէսին»[1]:

Ս. Նեղոսի համար Աստուածաշունչն առաջին հերթին մի գիրք է, որտեղից կարելի է սովորել ամէն լաւ բան եւ օրինակ վերցնել նրանից, ինչպէս նաեւ մերժել վատը: Նրա կերպարներից շատերը՝ Մովսէսը, Եղիան, Եղիշէն, Եզեկիէլը, Գեդէոնը, Յովհաննէս Մկրտիչը, Պօղոսը, ներկայացւում են որպէս կատարելութեան ձգտող քրիստոնեայի համար իրական օրինակներ: Անկիւրացի ճգնաւո-րի գրուածքները բացայայտում են շատ հարուստ եւ անձնական շփում Տիրոջ սրբազան Խօսքի հետ, որն ամենից առաջ հոգեւոր սնունդ է[2]:

Ս. ՆԵՂՈՍ ՍԻՆԱՅԵՑԻ ԽՕՍՔ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Քո նամակն ինձ մեծ յուզում պատճառեց, որը սովորութեանդ համաձայն տոգորուած էր Աստծոյ հանդէպ դրսեւորած քո մեծ սիրով, դու ինձ վերա-կանգնեցիր երբ ես բռնուած էի անմաքուր կրքերի բոցից առաջացած տենդով: Դու մխիթարեցիր իմ

---

1 Նկատի ունի Կոստանդնուպոլսի պատրիարք Ս. Յովհաննէս Ոսկեբերանին, որն աքսորուել էր Եւդոքսիա կայսրուհու դրդումով:

2 SCRIPTA TEOLÓGICA 27, 1995/3, Pamplona (Navarra), էջ 1063.

բանականութիւնը, որը յոգնած էր ամենայն անմաքուր բաներից, նաեւ ուրախութեամբ ընդօրինակեցիր մեծ Առաջնորդին ու Վարդապետին: Եւ պատճառ չկայ զարմանալու, քանի որ նրանք միշտ քեզ հետ են, ինչպէս երանելի Յակոբն իր ոչխարների հետ:

Հիանում եմ աղօթական գրուածքների գլուխների հանդէպ քո ունեցած սիրով եւ շատ եմ նախանձում քո շատ վեհ նպատակին, քանի որ դու ոչ թէ պարզապէս սիրում ես թղթի վրայ թանաքով արուած այդ գրութիւնները, այլ՝ նրանք, որոնք մարդկային մտքում յաւերժացնում են բարեգործութիւնն ու վրդովմունքի բացակայութիւնը: Բայց քանի որ ամէն ինչ զոյգ է՝ մէկը միւսին հանդիպակաց, առանց մէկը միւսին ներհակ լինելու՝ ըստ իմաստնագոյն Յեսուի (Սիր. ԽԲ 25), հետեւաբար, նամակից բացի ընդունիր նաեւ շնորհը եւ պահիր այն քո հոգում, քանզի միտքը միշտ առաջ է նամակից, իսկ եթէ այն չկայ, չկայ նաեւ նամակը: Ուստի, աղօթքի տեսակը նոյնպէս պէտք է կրկնակի լինի՝ մէկը գործուն, միւսը՝ հայեցողական: Այսպէս է նաեւ թուերի պարագայում: Անմիջական թիւը դրանց քանակին է վերաբերում, բայց իմաստը դրանց որակի մէջ է:

Մենք աղօթքի մասին ճառը բաժանել ենք հարիւր յիսուներեք գլուխների եւ քեզ ենք ուղարկել աւետարանական ձուկը, որպէսզի դրա մէջ գտնէք խորհրդանշական թուի քաղցրութիւնը եւ եռանկիւն ու վեցանկիւն պատկերը, որը մատնանշում է Ս. Երրորդութեան պաշտելի գիտելիքը՝ ներկայ աշխարհակարգի նկարագրութեան հետ միասին:

100 թիւն ինքնին քառանկիւն է, իսկ 53–ը՝ եռանկիւնաձեւ եւ գնդաձեւ, որովհետեւ 28–ն ինքնին եռանկիւն է, իսկ 25–ը՝ գնդաձեւ, քանզի 5–ը տալիս է 25: Հետեւաբար, դու ոչ միայն քառանկիւն պատկեր ունես, այսինքն՝ առաքինութիւնների քառանկիւն, այլեւ ունես այս դարի իմաստուն գիտելիքները 25 թուի մէջ՝ ժամանակի շրջանաձեւ ընթացքի պատճառով: Ի վերջոյ ժամանակն անցնում է շաբաթից շաբաթ, ամսից ամիս եւ զարգանում է մէկ տարուց միւսը, եղանակից եղանակ, ինչպէս մենք տեսնում ենք արեգակի եւ լուսնի շարժման միջոցով՝ գարուն եւ ամառ եւ այլն: Եռանկիւնը կարող է նշանակել Ս. Երրորդութեան իմացութիւն: Այսինքն, եթէ 153 թիւը համարես եռանկիւնաձեւ, ապա թուերի քանակի պատճառով (ինչպէս պարզւում է), դրանում կը տեսնես պրակտիկա, ֆիզիկա եւ աստուածաբանութիւն: Եւ դեռ աւելին՝ հաւատ, յոյս, բարեգործութիւն՝ ոսկի, խունկ եւ թանկարժէք քարեր: Այսքանը թուի մասին:

Բայց գլուխների խեղճութեան դիմաց մի՛ լցրու քեզ ամբարտաւանութեամբ: Ցիշի՛ր Նրան, ով չարհամարհեց այրի կնոջ երկու լուման, այլ ընդունեց դա աւելի, քան շատ ուրիշների հարստութիւնը:

Հետեւաբար, իմանալով, թէ ինչպէս պահպանել բարեհաճութեան եւ բարեգործութեան պտուղը քո անկեղծ եղբայրների համար, աղօթիր հիւանդի համար, որպէսզի նա ապաքինուի եւ յետոյ քայլի՝ վերցնելով իր մահճակալը, Քրիստոսի զօրութեամբ եւ շնորհքով: Ամէն:

Եթէ մէկը ցանկանում է լաւ բոյրով օծանելիք պատրաստել, օրէնքի համաձայն նա պէտք է հա-

ւասար չափով դնի մաքուր խունկ, կինամոն (դարչին), օնիքս (այստեղ՝ ինչ–որ մի բոյս) եւ զմուռս: Դրանք համապատասխանում են չորս առաքինութիւնների: Եւ իրականում, եթէ դրանք դրուած են հաւասար քանակութեամբ եւ հաւասար մասերի բաժանուած, այն ժամանակ մարդկային բանականութիւնը չի յանձնուի թշնամուն:

Պատուիրանների կատարմամբ մաքրուած հոգին անում է այնպէս, որ բանականութիւնը միշտ մնայ կայուն եւ ունակ լինի ստանալ ցանկալի վիճակը:

Աղօթքը բանականութեան միութիւնն է Աստծու հետ: Ի՞նչ վիճակում պէտք է լինի բանականութիւնը, որպէսզի կարողանայ ձգուել դէպի Տէրը՝ առանց ետ դառնալու եւ խօսել Նրա հետ՝ առանց որեւէ միջնորդի:

Մովսէսը չկարողացաւ մօտենալ այրուող մորենուն, քանի դեռ իր ոտքերից չէր հանել կօշիկները: Դու, որ ուզում ես տեսնել Նրան, որը գերազանցում է ամենայն միտք եւ իմաստ, եւ զրուցել Նրա հետ, ինչպէ՞ս կարող ես այդ անել, եթէ չես ձերբազատւում քո բոլոր ախտաւոր մտքերից:

Ամենից առաջ աղօթի՛ր, որպէսզի կարողանաս արցունքներ ձեռք բերել, որպէսզի քո ողբով փափկացնես հոգուդ մէջ եղած կարծրութիւնը, եւ քո անօրէնութիւնները Տիրոջը խոստովանելուց յետոյ, հայցի՛ր Նրա ներումը:

Օգտագործի՛ր քո արցունքները, որպէսզի քո բոլոր խնդրանքները լսուեն, քանի որ Գերագոյնը ուրախանում է, երբ դու արցունքներով ես աղօթում:

Երբ դեւերը տեսնում են քեզ, որ եռանդով ես լցուած ճշմարիտ աղօթքի պահին, նրանք մտքեր են ներշնչում քեզ որոշ առարկաների նկատմամբ, որպէս թէ դրանք անհրաժեշտ լինեն, եւ կարճ ժամանակ անց նրանք բարձրացնում են յիշողութիւնը դրանց հանդէպ՝ շարժելով բանականութիւնը դրանց որոնման ուղղութեամբ: Չգտնելով դրանք՝ դու յուսահատւում ես եւ շատ ես տխրում: Երբ բանականութիւնը աղօթքի մէջ է, նրա փնտռտուքի առարկաները եւ նրանց նկատմամբ ունեցած յիշողութիւնները գրաւում են նրա ուշադրութիւնը, այնպէս որ, այն կորցնում է արգասաբեր աղօթքի հնարաւորութիւնը:

Պայքարի՛ր, որպէսզի աղօթելիս խուլ եւ յամր պահես քո բանականութիւնը, եւ այդպիսով դու կը կարողանաս ճշմարտապէս աղօթել:

Ինչ որ դու արել ես քեզ վիրաւորած եղբօրից վրէժ լուծելու համար, դա կը լինի քեզ գայթակղութիւն աղօթքի ժամանակ:

Աղօթքը խոնարհութեան ծլարձակումն է եւ զայրոյթի՝ բացակայութիւնը:

Աղօթքը ուրախութեան եւ երախտագիտութեան պտուղ է:

Աղօթքը պաշտպանութիւն է տխրութեան եւ յուսահատութեան դէմ:

Գնա, տես ինչ ունես եւ տուր աղքատներին (Մատթ. ԺԹ 21), վերցրու խաչը եւ ուրացիր քեզ (հմմտ. Մատթ. ԺԶ 23), որպէսզի կարողանաս առանց ցրուածութեան աղօթել:

Եթէ ուզում ես պատշաճ կերպով աղօթել, ոչ մէկին մի՛ տխրեցրու: Հակառակ դէպքում զուր կը լինեն բոլոր թափած ջանքերդ:

Դիր քո ընծան, ասում է Նա, զոհասեղանի առաջ, եւ նախ գնա՛ հաշտուիր քո եղբօր հետ, եւ միայն դրանից յետոյ կարող ես աղօթել առանց խանգարուելու, քանզի ոխն ու վրդովմունքը կուրացնում են աղօթողի հոգու գերագոյն զօրութիւնը եւ խաւարեցնում նրա աղօթքները:

Նա, ով ցանկանում է իսկապէս աղօթել, պէտք է ոչ միայն տիրի զայրոյթին եւ ցանկութեանը, այլեւ վանի իր բոլոր վաւաշոտ մտքերը:

Նա, ով սիրում է Աստծուն, միշտ խօսում է Նրա հետ ինչպէս հօր հետ՝ մերժելով իր ունեցած բոլոր կրքոտ մտքերը:

Նա է աղօթում կատարելապէս, որն իր մտքի բոլոր պտուղների երախայրիքը միշտ դարձնում է Աստծուն ընծայուած պտուղ:

Եթէ ցանկանում ես աղօթել քրիստոնեայի նման, Խուսափի՛ր ամէն տեսակ ստից եւ երդումից: Հակառակ դէպքում իզուր ես ձեւացնում այն, ինչը քեզ համար խորթ է:

ԽՕՍՔ ՃԳՆԱՒՈՐԱԿԱՆ

Հանգստութիւնը բնորոշ է կատարեալ հոգուն, մինչդեռ անկատար հոգուն յատկանշական է խնամքով սպառումը:

Կատարեալ հոգու մասին ասւում է, որ նա նման է փշերի մէջ աճած շուշանի, եւ դա ցոյց է տալիս, որ հոգին խաղաղ է ապրում բազմաթիւ հոգսերի մէջ, քանզի Աւետարանում շուշանը նշանակում է հոգին առանց մտահոգութեան, որովհե-

տեւ չի գործում, չի հիւսում եւ զգեցած է Սողոմոնի փառքից աւելի մեծ փառքով:

Իսկ նրանց մասին, ովքեր շատ են մտահոգուած մարմնական բաների համար, ասուած է. «Ամբարիշտների ամբողջ կեանքը մտահոգութիւն է…»:

Եւ այս պատճառով չենք բաւարարւում անհրաժեշտ բաների օգտագործմամբ, այլ նախընտրելով յագեցուածութիւնը, որը վնասակար է կեանքին, մենք ապաւինում ենք ամէն տեսակի ունեցուածքին՝ չհասկանալով, որ պէտք է ունենալ այնքան, որքան անհրաժեշտ է մարմնին, եւ որ եթէ սրանից այն կողմ գնանք, մեր վարքագիծն այլեւս ոչ թէ անհրաժեշտութեան սահմաններում կը լինի, այլ՝ անկարգութեան:

Մարմնին յարմարեցուած զգեստը ծառայում է օգտագործման եւ պատշաճ յարդարանքի համար, իսկ դրանից դուրս, ամէն կողմ ընկնողը, բռնւում է մեր ոտքերից եւ քարշ գալիս գետնին, որը բացի անյարմար լինելուց, ընդհանրապէս խոչընդոտ է լինում ցանկացած գործունէութեան համար: Նոյն կերպ եւ մեր ունեցածը, մարմնի կարիքներից դուրս, արգելք է առաքինութեան…

Լաւ է ուրեմն մնալ անհրաժեշտութեան սահմաններում եւ ամբողջ ուժով պայքարել դրանք չանցնելու համար:

Դէ, եթէ մէկը առաջնորդւում է կեանքի քաղցրութիւնները ունենալու ցանկութեամբ, որպէսզի գերազանցի դրանց սահմանները, թէկուզ մի փոքր չափով, չի գտնուի ոչ մի պատճառ, որը կը կարողանայ կասեցնել խթանը դէպի այն, ինչը նրանցից դուրս է:

Քանզի նա, ով գերազանցում է չափաւոր կարիքը, նրա համար այլեւս չկայ ոչ մի սահման, եւ անիմաստ տքնաջան աշխատանքը շարունակ մեծացնում է նիւթական անցողիկ բաների հանդէպ փափաքը՝ հրահրելով ցանկութիւնը, ինչպէս բոցը, որին վառելիք են աւելացնում:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՍԻԱՆ ՀՌՈՎՄԷԱՑԻ (360–435)

Յովհաննէս Կասիանը ծնուել է Դ. դարում, մօտաւորապէս 350 թ. Մարսէլի մօտ (ըստ ոմանց՝ Դակիայում, ներկայիս Ռումինիայում): Նա գիտուն մարդ էր եւ ծառայում էր բանակում: Հետագայում նա թողնում է այդ կեանքը եւ վանական է դառնում Բեթղեհէմում: Լսելով Եգիպտոսի մեծ հայրերի համբաւը, նա նրանց մօտ է մեկնում մօտ. 390 թուականին: Նրա հանդիպումները Սկետէի յայտնի վանականների հետ գրանցուած են նրա դասախօսութիւններում: 403 թ. Յովհաննէս Կասիանը գնում է Կոստանդնուպոլիս եւ այնտեղ Ս. Յովհան-

նէս Ոսկեբերանի կողմից ձեռնադրուում սարկաւագ: Ս. Ոսկեբերանի աքսորից յետոյ, Կասիանը գնում է Հռոմ: Այնտեղ նա նամակներ է գրում Հռոմի պապ Ինովկենտիոս Ա.–ին՝ ի պաշտպանութիւն Կ. Պոլսի աքսորեալ պատրիարքի:

Կասիանը Հռոմում քահանայ է ձեռնադրուում, որից յետոյ մեկնում է Մարսել, ուր հիմնում է երկու վանք, որոնցից մէկն էր Ս. Վիկտորի նշանաւոր վանքը: Նա խաղաղութեամբ աւանդում է իր հոգին 435 թ.:

Յովհաննէս Կասիանի գրական ստեղծագործութիւնները նուիրուած են սուրբ ճգնաւորների եւ վանական կեանքի կազմակերպման մասին: Չխորանալով աստուածաբանական նրբութիւնների մէջ՝ նա շատ ժամանակ է նուիրել հոգեւոր կեանքի վերաբերեալ դրական մտորումներին եւ իր սեփական գաղափարները ներկայացրել է առանց հակառակորդների հետ վէճերի, միայն որպէս սեփական մտորումներ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՍԻԱՆ ՊՈՌՆԿՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ

Մեր երկրորդ պայքարը պոռնկութեան ոգու եւ մարմնական ցանկութիւնների դէմ է, որոնք մարդու ամենավաղ տարիքից սկսում են տանջել նրան: Սա մի մեծ պայքար է, քանի որ մինչ միւս արատները պատերազմ են յայտարարում հոգու դէմ, միայն սա է ներկայանում երկակի ձեւի տակ, որը հետապնդում է թէ՛ հոգին եւ թէ՛ մարմինը: Հետեւա-

բար, կռիւն այստեղ կրկնակի է: Կատարեալ զսպուածութիւն եւ ճշմարիտ ժուժկալութիւն ձեռք բերելու համար բաւարար չէ միայն մարմնական ծոմապահութիւնը, եթէ չկայ նաեւ սրտի զղջում, աղօթք առ Աստուած, ջանասիրաբար խորհրդածում Ս. Գրքի շուրջ, ձեռաց տքնաջան աշխատանք: Այս բաներն ի վիճակի են հակազդելու հոգու անհանդարտ մղումներին՝ հեռացնելով այդ հոգուն պղտոր երեւակայութիւններից: Այսուամենայնիւ, ամենամեծ օգուտը հոգու խոնարհութիւնն է, առանց որի չի կարելի դուրս գալ պոռնկութիւնից կամ այլ կրքերից:

Հետեւաբար, կարեւոր է զգօն լինել եւ մեր սրտից հեռացնել պիղծ մտքերը: Որովհետեւ, ըստ Տիրոջ խօսքի, սրտից են գալիս չար Խորհուրդները, սպանութիւնները, շնութիւնները, պոռնկութիւնները եւ փողոցային բաները: Իսկ մեզ համար ծոմ է սահմանուել ոչ միայն դաժան վերաբերմունք ցուցաբերելու համար մարմնի նկատմամբ, այլ՝ որպէսզի սթափեցնի բանականութիւնը եւ չթողնի, որ վերջինս աւելորդ սննդի պատճառով հեղգանայ եւ մթագնի: Ուստի մենք պէտք է ջանադիր լինենք ոչ միայն մարմնական ծոմապահութեան պարագայում, այլ նաեւ պէտք է ուշադրութիւն դարձնենք մեր մտքերի վրայ եւ կատարենք հոգեւոր խոկման վարժութիւններ. առանց այս ամէնի անհնար է հասնել իսկական ժուժկալութեան եւ մաքրութեան գագաթնակէտին: Հետեւաբար, ինչպէս Տէրն է ասում, անհրաժեշտ է, որ նախ մաքրենք բաժակի եւ պնակի ներսը, որպէսզի նրանց արտաքինը նոյնպէս մաքուր դառնայ (Մտթ. ԻԳ 25): Եւ ահա,

եթէ մեզ հետաքրքրում է,— ինչպէս Առաքեալն է ասում,— պայքարել թագը ստանալու կանոնների համաձայն, եկէք չպարծենանք, որ մենք մեր կարողութեամբ եւ ճգնութեամբ ենք կարողացել յաղթել պոռնկութեան պիղծ ոգուն, այլ՝ եկէք խոստովանենք, որ առ այդ մեր Տէր Աստծոյ բացառիկ օգնութիւնն անգնահատելի է: Մարդը չի դադարում պայքարել այս անմաքուր ոգու դէմ, քանի դեռ չի անդրադառնում, որ ոչ թէ իր շտապողականութիւնը կամ թափած ջանքերն են հեռացնում իրեն այդ ախտից, այլ միայն՝ Աստծոյ պաշտպանութիւնն ու օգնութիւնը: Դա, ըստ էութեան, մի բան է, որը գերազանցում է բնութեանը, եւ նա, ով ոտնահարում է մարմնի գրգիռներն ու նրա կամակորութիւնը, ինչ-որ կերպ դուրս է գալիս իր մարմնից:

Այս իսկ պատճառով անհնար է, որ մարդը թռչի, այսպէս ասած՝ իր սեփական թեւերով, դէպի սրբութեան այդ վեհ ու երկնային մրցանակը եւ դառնայ հրեշտակների նման, եթէ Աստծոյ շնորհը չբարձրացնի նրան երկրից ու տիղմից: Մարմնի հետ կապուած մարդիկ ոչ մի այլ առաքինութեամբ չեն կարող ընդօրինակել հրեշտակներին կամ հոգեւոր էակներին, բացի ժուժկալութեան առաքինութիւնից: Դրա շնորհիւ է, որ նրանք, մինչ դեռեւս ապրում են երկրի վրայ, ունեն նաեւ, ինչպէս առաքեալն է ասում, երկնային քաղաքացիութիւն:

Այս առաքինութեան կատարեալ յատկութիւնը արտայայտւում է, երբ հոգին քնած ժամանակ չի ենթարկւում որեւէ պիղծ երեւակայութեան պատկերին: Իրականում, թէեւ այս երեւոյթը մեղք չի համարւում, սակայն այն ախտանիշ է, որ հոգին հի-

ւանդ է եւ չի հեռացել կրքից: Այս իսկ պատճառով մենք պէտք է հաւատանք, որ քնի ժամանակ մեզ տանջող պղտոր երեւակայութիւնները մատնանշում են մեր նախկին անզգուշութիւնները եւ մեր մէջ եղած հիւանդութիւնը, քանզի մեր հոգու հեռաւոր ծալքերում թաքնուած հիւանդութիւնը դրսեւորւում է, երբ «հոսքը» տեղի է ունենում քնի մէջ թուլացած ժամանակ: Եւ ահա թէ ինչպէս է մեր հոգու բժիշկը դեղը տեղադրել դրա ամենաթաքուն վայրերում, քանի որ Նա գիտէր հիւանդութեան պատճառները:

Նա մեզ ասում է. «Ամէն մարդ, որ նայում է կնոջը նրան ցանկանալու համար, արդէն իսկ շնութիւն է գործում նրա հետ իր սրտում» (Մտթ. Ե 28): Եւ սրանով Նա ոչ թէ հետաքրքրասէր ու չար աչքերն է շտկում, այլ աւելի շտկում է մարդու ներսում գտնուող այն հոգին, որը չարաշահում է բարիքի համար Աստծու կողմից իրեն տրուած աչքերը: Նաեւ սրա համար է, որ իմաստուն առակը մեզ չի ասում, որ մեր ամբողջ զգօնութիւնը կենտրոնացնենք մեր աչքերի պահպանութեան վրայ, այլ ասում է՝ քո ամբողջ ուշադրութիւնը սեւեռի՛ր սրտիդ պահպանութեան վրայ (Առակ. Դ 24), քանզի սիրտն է, որ օգտագործում է աչքերն իր ուզածի համաձայն:

Հսկենք, ուրեմն, մեր սիրտը, երբ մեր մտքում, օրինակ, ձեւաւորւում է մի կնոջ պատկերը՝ արտադրուած դիւային խորամանկութեամբ, թէկուզ դա լինի մեր մայրը, քոյրը կամ որեւէ այլ բարեպաշտ կին: Եկէք անմիջապէս հեռացնենք այն մեր սրտից, որպէսզի չպատահի այնպէս, որ մենք մեզ

երկար ժամանակ պահելով եւ զուարճանալով նման յիշողութեան մէջ, վրայ հասնի գայթակղիչը, որը մեզ մղում է դէպի չարը, ստիպի մեզ սայթաքել եւ մեր միտքը խորտակել պղտոր ու կորստաբեր մտքերի մէջ: Հէնց այն պատուիրանը, որ Աստուած տուել էր առաջին մարդուն, հրամայում էր զգուշանալ օձի գլխից, այսինքն՝ զգուշանալ վտանգաւոր մտքերի առաջին ի յայտ գալուց, որոնց միջոցով դրանք փորձում են ներթափանցել մեր հոգիները:

Մեզ յարմար է, սակայն, ինչպէս գրուած է, ամէն առաւօտ սպանել երկրի բոլոր մեղաւորներին (Սաղմ. Ճ 8), այսինքն՝ գիտելիքի լոյսով զանազանել եւ ոչնչացնել մեղաւոր մտքերը մեր սրտի անդաստանում, ինչպէս Տէրն է ուսուցանում, եւ երբ Բաբելոնի որդիները, այսինքն՝ չար մտքերը, դեռ երեխաներ են, պէտք է դրանք ջախջախել՝ բախելով այն վէմին, որն է Քրիստոսը: Որովհետեւ եթէ մեր ամենաթողութեան պատճառով դրանք չափահաս դառնան, դժուար թէ կարողանանք յաղթել դրանց առանց մեծ հառաչանքների եւ տքնութիւնների:

Եւ բացի այն, ինչ ասուել է Սուրբ Գրքում, լաւ է յիշել նաեւ սուրբ հայրերի ասածները: Կապադովկեան Կեսարիայի եպիսկոպոս Սուրբ Բարսեղը մեզ ասում է. «Թէեւ ոչ մի կնոջ հետ չեմ կենակցել, բայց ես կոյս չեմ»: Այս ասելով՝ նա գիտէր, որ կուսութեան պարգեւը ձեռք է բերւում ոչ թէ պարզապէս կնոջ նկատմամբ մարմնական ժուժկալութիւն դրսեւորելով, այլ հոգու սրբութեամբ եւ մաքրութեամբ, որը սովորաբար գործում է Աստոյ երկիւղով: Եւ սուրբ հայրերն ասում են նաեւ, որ

մենք չենք կարող կատարելապէս ձեռք բերել ժուժկալութեան առաքինութիւնը, եթէ նախապէս մեր սրտում չունենանք իսկական խոնարհութիւնը, եւ չենք էլ արժանանայ ճշմարիտ գիտութեանը, քանի դեռ պոռնկութեան կիրքը չի հեռացուել մեր հոգու խորքից:

Ժուժկալութեան գործը ցոյց տալու համար յիշենք առաքեալի մի քանի համապատասխան արտայայտութիւն, եւ դրանով աւարտենք մեր ճառը. «Բոլորի հետ հետամուտ եղէք խաղաղութեան եւ սրբութեան, առանց որի ոչ ոք Տիրոջը չի տեսնի» (Եբր. ԺԲ 13): Եւ պարզ է, ապա աւելացնում է. «Եւ չլինի, թէ որեւէ մէկը լինի պոռնիկ եւ պիղծ, ինչպէս Եսաւը…» (Եբր. ԺԲ 15): Եւ հէնց այս պատճառով է, որ սրբացման գործը երկնային է եւ հրեշտակային, այն պայքարում է հակառակորդների ծանր յարձակումների դէմ: Եւ դրա համար մենք պէտք է մարզուենք ոչ միայն մարմնական ժուժկալութեամբ, այլեւ մեր սրտերի զղջմամբ եւ հառաչանքներով, շարունակական խոնարհումներով: Այս ձեւով մենք Սուրբ Հոգու ներկայութեան ցօղով կը շիջենք մեր մարմնի հրաբորբ ածուխները, որոնք ամէն օր վառում է Բաբելոնի արքան՝ բորբոքելով մեր ցանկութիւնները:

Ի լրումն այս ամէնի, ամենահզօր զէնքը, որ տրուել է մեզ մարտի համար, ժուժկալութիւնն է՝ համաձայն Աստծոյ: Ինչպէս ցերեկային հսկողութիւնը պատրաստում է գիշերուայ սրբութիւնը, այնպէս էլ գիշերային հսկումը, ըստ Աստծոյ, նախապատրաստում է հոգին ցերեկային մաքրութեան:

ԲԱՐՍԱՆՈՒՓԻՈՍ ԳԱԶԱՅԵՑԻ (ՄԱՀ. ՄՕՏ. 540 Թ.)

Բարսանուփիոս Գազայեցին կամ Բարսանուֆիո Պաղեստինցին ծնուել է հինգերորդ դարի կէսերին Եգիպտոսում, ազգութեամբ եգիպտացի: Վաղ տարիքում նա իրեն նուիրել է ճգնաւորական կեանքի, ապա մտել է Պաղեստինի Գազա քաղաքի մի վանք, որտեղ ապրել է յիսուն տարի կատարեալ մենութեան մէջ՝ տեսակցելով միայն մի վանականի հետ, որը ծառայում էր նրան իբրեւ քարտուղար: Այստեղ պէտք նշենք, որ Գազա քաղաքն աշխարհի ամենահին քաղաքն է, որը գոյութիւն

ունի մինչեւ այսօր: Այն եղել է կարեւոր անցակէտ Պաղեստինի, Եգիպտոսի եւ Արեւելքի միջև: Միաժամանակ այն քրիստոնէական կարեւոր կենտրոններից մէկն էր հարեւան Աղեքսանդրիայի պատրիարքութիւնից յետոյ:

Բարսանուփիոս Գազայեցին խորհրդապաշտ մտածող էր եւ օժտուած գերբնական շնորհներով: Նրա սրբութեան համբաւը պատճառ է եղել, որ բազմաթիւ միայնակեաց կրօնաւորներ փնտռեն նրան, իսկ նա այդ բոլորի հետ նամակագրական կապ է հաստատել, որոնց թւում էր յատկապէս Գազայի Մերոսալա վանքի սրբակենցաղ վանահայր Յովհաննէս Գազայեցին, որը կոչուել է նաեւ Յովհաննէս Մարգարէ:

Բարսանուփիոսից մեզ հասել է մօտաւորապէս 800 նամակ, որոնց մեծ մասը ուղղուած է եղել Յովհաննէս Գազայեցուն, որոնք վերջերս հրատարակուել են առանձին հատորով[1]: Այդ նամակների բարերար ազդեցութիւնը շատ մեծ է եղել արեւելեան վանքերի վրայ, մինչդեռ Արեւմուտքի համար դրանք անհայտ են մնացել:

Բարսանուփիոսը մահացել է խորը ծերութեան մէջ՝ մօտաւորապէս 540 թուականին: Նրա պատկերը կայ Կոստանդնուպոլսի Ս. Սոփիայի մայր տաճարում՝ Ս. Անտոնի, Ս. Եփրեմ Ասորու եւ այլ սրբերի հետ: Նրա մասունքները պաղեստինցի մի վանական մօտաւորապէս 850 թուականին տեղափոխել է Օրիա, Իտալիա, դրա համար էլ Օրիայի թեմը մեծարել է նրան որպէս քաղաքի հովանաւոր

[1] John Chryssavgis, The letters of Barsanuphius and John: Desert Wisdom for Everyday Life, Publisher: Bloomsbury Publishing PLC, 2022

սրբի, չնայած որ երկար տարիներ կորել էին նրա մասունքները *սարազէնների*՝ Օրիայի վրայ կատարած յարձակումների պատճառով, որոնք աւերել էին քաղաքի վերոյիշեալ եկեղեցին: Շատ տարիներ յետոյ, Մարկոս անուն մի վանականի տեսիլքի հիման վրայ, վերագտնուել են այդ մասունքները եւ տեղափոխուել Օրիա քաղաքի Ս.Վերափոխման մայր տաճարում, ուր եւ մնում են մինչեւ այսօր: Նա սուրբ է Կաթողիկէ եւ Ուղղափառ եկեղեցիներում, յատկապէս յոյների մօտ՝ իբրեւ բարի օրինակ ժուժկալութեան եւ հոգեւոր կեանքի:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Բարսանուփիոսի Գազայում ապրած տարիներին կատաղի է եղել պայքարը Քաղկեդոնի ժողովի (451 թ.) կողմնակիցների եւ այսպէս կոչուած «միաբնակների» միջեւ: Բիւզանդական կայսրը նոյնիսկ եպիսկոպոսութիւն է հաստատել Գազայի նաւահանգստում՝ պայքարելու համար հակաքաղկեդոնականների դէմ: Նոյն Գազայում կայսրը սինոդ է հրաւիրում (539 թ.)՝ գահընկէց անելու համար Աղեքսանդրիայի միաբնակ պատրիարքին: Ժողովին մասնակցում է նաեւ Հռոմի պապի նուիրակ Պելագիոսը: Ի պատիւ Բարսանուփիոսի, նա չի ուզել խառնուել դաւանաբանական պայքարներին՝ գիտակցելով, որ դրանց խորքում քաղաքական միտումներ կան:

ԲԱՐՍԱՆՈՒՓԻՈՍ ԳԱԶԱՅԵՑՈՒ ԱՂՕԹՔԸ

«Տէր ի՛մ, պահիր ինձ ամէն չարիքից եւ ուժ տուր ինձ դիմանալու Յովբի պէս, նաեւ՝ շնորհ, ինչպէս Յովսէփին, հեզութիւն, ինչպէս Մովսէսին, քաջութիւն կռուի մէջ, ինչպէս Նաւէի որդի Յեսուին, մտքի տիրապետում, ինչպէս դատաւորներին, թշնամիների պարտութիւն եւ ենթակայութիւն, ինչպէս ենթարկւում էին Դաւիթ եւ Սողոմոն թագաւորներին, երկրի բերրիութիւն, նման իսրայէլացիների երկրի: Տուր ինձ մեղքերիս թողութիւն՝ անդամալոյծի պէս մարմնի ապաքինմամբ: Փրկիր ինձ ալիքներից, ինչպէս փրկեցիր Պետրոսին: Ազատիր ինձ նեղութիւնից, ինչպէս Պօղոսին եւ միւս առաքեալներին ազատեցիր: Պահպանիր ինձ ամէն չարիքից, ինչպէս քո ճշմարիտ զաւակներին ես պահպանում, եւ շնորհիր ինձ այն, ինչ քո անունով եմ խնդրում իմ սրտից՝ ի շահ հոգու եւ մարմնի: Ամէն»[1]:

* * *

«Տէրը մօտ է բոլոր նրանց, ովքեր կանչում են իրեն, բոլոր նրանց, ովքեր կանչում են իրեն ճշմարտապէս» (Սղմս. ՃԽԴ 18): Այս արտայայտութիւնը, մասնաւորապէս, յաճախ օգտագործել է Բարսանուփիոս Գազայեցին, մի ճգնակեաց, որին փնտռում էին վանականները, եկեղեցականները եւ աշխարհականները՝ իր խորաթափանց իմաստութեան համար: Այսպէս, օրինակ, մի աշակերտի, որը

[1] հմմտ. Barsanufio y Juan de Gaza, “Epistolario”, “Collana di Testi Pastrici”, XCIII, Roma 1991, էջ 235–236:

ցանկութիւն էր յայտնել «փնտռելու իրեն պատուհասած տարբեր փորձութիւնների պատճառները», Բարսանուփիոսը պատասխանում է. «Եղբայր Յովհաննէս, բոլորովին մի՛ վախեցիր այն փորձութիւններից, որոնք առաջացել են քո դէմ՝ քեզ փորձելու համար, որովհետեւ Տէրը թոյլ չի տայ, որ դու ընկնես դրանց մէջ: Հետեւաբար, երբ այդ գայթակղութիւններից որեւէ մէկը գայ քեզ մօտ, մի՛ ձգտիր պարզել, թէ դա ինչ է, այլ ինչ որ դու պէտք է անես, հետևեալն է, կանչի՛ր Յիսուսի անունը. «Յիսուս, օգնի՛ր ինձ», եւ Նա կը լսի քեզ, քանի որ «Տէրը մօտ է բոլոր նրանց, ովքեր կանչում են իրեն»: Մի՛ յուսահատուիր, ընդհակառակը, ջանասիրաբար վազի՛ր և կը հասնես նպատակին, մեր Տէր Յիսուս Քրիստոսով»[1]:

ԲԱՐՍԱՆՈՒՓԻՈՍ ԳԱԶԱՅԵՑԻ ՆԱՄԱԿԱՆԻ

Բարեպաշտ մի աշխարհական, որը լքել էր իր երկիրը՝ Աստծու անունով պատերազմելու ի նպաստ իր եկեղեցու՝ ընդդէմ այն մարդկանց, որոնք դրան վնաս էին պատճառել, եւ նա մարդ էր ուղարկել վանահօր մօտ՝ խնդրելու մի քանի քաջալերական խօսք եւ յորդոր:

Յորդոր.— Հաստատ մնա՛ Աստծոյ գթութեան, ճշմարտութեան եւ ազատութեան մէջ, եւ մի՛ երկմտիր օգնել, որքան կարող ես: Որովհետեւ Եկեղեցու

[1] Barsanufio y Juan de Gaza, Epistolario, 39: Colección de Textos Patristticos, XCIII, Roma 1991, էջ 109.

բարիքները նուիրաբերուած են Աստծուն, եւ դժ-բախտ է նա, ով նրան որեւէ կերպ վնաս է պատ-ճառում: Աստծուն միշտ ներկայ պահիր քո հոգում, աղաչելով Նրան ամէն ինչում, եւ ուրախութեամբ գնա՛ քո ճանապարհով: Մի՛ ձգտիր հաճեցնել մարդկանց, եւ դու կը ստանաս Աստծոյ շնորհը: Որովհետեւ նրանք, ովքեր ձգտում են հաճեցնել մարդկանց, օտար են Աստծուն, եւ Աստծոյ Հոգին նրանց հետ չէ: Աստծոյ Հոգին ունեցիր քեզ հետ, եւ Նա քեզ ամէն ինչում ճիշտ կ՛առաջնորդի: Զգուշա-ցի՛ր անկարգութիւններից եւ զայրոյթից: Ոչ ոքից մի՛ վախեցիր, այլ միշտ յիշի՛ր այս խօսքը. «Տէրն ինձ հետ է: Եւ ես չեմ երկնչի, թէ ինչ կարող է անել մարդն ինձ հետ» (Սաղմոս ՃԺԷ 6): Եւ նոյնիսկ աւե-լին. «Բոլոր ազգերը շրջապատել են ինձ, եւ Տիրոջ անունով ես քշել եմ նրանց» եւ այլն: (Սաղմոս ՃԺԷ 10): Եթէ պատահի, որ ինչ-որ մէկը զայրանայ քո դէմ, պատասխանիր նրան խոնարհութեամբ եւ գթութեամբ, բայց նաեւ լիակատար գիտութեամբ, թէ ինչ է պահանջում ճշմարտութիւնը, եւ Աստուած նրան կը լցնի սրբերի աղօթքներով: Դու նոյնպէս ունես հայրերի ուսմունքը, եւ նրանք Աստծոյ հետ միասին կը պաշտպանեն քեզ չարից: Նրա շնորհիւ ուժեղ մնա՛ եւ միշտ քաջ (Բ Օրինաց, ԼԱ 6):

* * *

Հարց.— Հայր ի՛մ, կ՛ուզենայի՞ր ինձ ասել, թէ ինչպէս է ձեռք բերւում խոնարհութիւնը կատարե-ալ աղօթքի համար, ինչպէ՞ս հնարաւոր է դա անել առանց ցրուածութեան, եւ թէ արդեօ՞ք ընթերցա-նութիւնն օգտակար է.

Պատասխան.— Կատարեալ աղօթքը կայանում է Աստծոյ հետ առանց խօսելու մէջ՝ հաւաքելով բոլոր մտքերն ու բոլոր զգայարանները միաժամանակ: Սա ձեռք է բերւում, երբ մեռնում ես բոլոր մարդկանց, աշխարհի եւ նրանում եղած ամէն ինչի համար: Աղօթքի ժամանակ դու պէտք է միայն ասես Աստծուն. «Փրկիր ինձ ամբարիշտներից: Թող քո կամքը կատարուի իմ մէջ», իսկ դու քո հոգին պահիր Աստծոյ ներկայութեան մէջ՝ խօսելով Նրա հետ: Աղօթքն ընդունուած է, քանզի Տիրոջ լուսաւորութեան ներքոյ մարդը զերծ է բոլոր շեղումներից եւ իր միտքը լցուած է ուրախութեամբ: Նշանը, որ հոգին հասել է այդ վիճակին, դա անխռովութիւնն է, նոյնիսկ եթէ ամբողջ աշխարհ գայ եւ յարձակուի մեզ վրայ: Նա է կատարեալ կերպով աղօթում, ով մեռած է աշխարհի եւ նրա հաճոյքների համար: Աստծոյ համար ձեր գործը զգոյշ կերպով անելը ցրուածութիւն կամ շեղում չէ, այլ՝ նախանձախնդրութիւն՝ ըստ Աստծոյ: Շահաւէտ է նաեւ ընթերցել հայրերի վարքը, որովհետեւ դա միջոց է հոգին լուսաւորելու Տիրոջ մէջ:

* * *

Հարց.— Արդեո՞ք անհրաժեշտ է հակադրուել կրքային մտքերին, կիրառել անհարկի բառեր եւ զայրոյթ.

Պատասխան.— Կրքերը տառապանքներ են: Աստուած չի ցանկացել հեռացնել դրանք, բայց ասել է. «Նեղութեանդ օրը կանչի՛ր ինձ»: Կրքերը յաղթահարելու այլ ճանապարհ չկայ, քան Աստծոյ անունը կանչելը: Հակադրուելը լաւ է միայն կատա-

ռեալների եւ հզօրների համար, ըստ Աստծոյ: Մենք, որ կատարեալ չենք, ունենք միայն մէկ միջոց, եւ դա Յիսուսի անունով ապաստան գտնելն է աղօթքի մէջ, որովհետեւ կրքերը դեւեր են, որոնք փախչում են Նրա սուրբ անուան առաջ:

* * *

Հարց.— Աւելի լաւ չէ արդեօ՞ք ասել. «Տէր Յիսուս Քրիստոս. ողորմի՛ր ինձ», քան թէ Սուրբ Գրքից հատուածներ արտասանել ու երգել:

Պատասխան.— Երկուսն էլ անհրաժեշտ են, մի քիչ մէկը, մի քիչ մյուսը, քանի որ գրուած է. «Պէտք է մի բան անել, միւսը չանտեսել» (Մատթ. ԻԳ, 23):

* * *

Հարց.— Երբ մտքերը խանգարում են թէ՛ սաղմոսերգութեան ընթացքում եւ թէ՛ դրանից դուրս, ես խնդրում եմ Աստծոյ անունը օգնութեան համար: Հակառակորդն ինձ յուշում է, որ հպարտութիւն կայ մտածելով, որ մարդ լաւ է անում՝ առանց ընդհատումների յիշատակելով Աստծուն: Իսկ ինչպէ՞ս պէտք է վարուեմ ես.

Պատասխան.— Յայտնի փաստ է, որ հիւանդները բացարձակապէս կարիք ունեն բժշկի… Սովորենք, որ փորձութիւնների ժամանակ անհրաժեշտ է անընդհատ կանչել ողորմութիւնների Աստծուն: Բայց Աստծու անունը կանչելով՝ եկէք չտարուենք հպարտ մտքերով: Եթէ նրա գլխում դա չլինի, մեղաւորը չի պատկերացնի, թէ ինչ է հպարտութիւնը: Մենք Աստծոյ կարիքն ունենք. մենք կանչում

ենք Նրա անունը, որպէսզի օգնի մեզ մեր թշնամիների դէմ: Մենք կարիքի մէջ ենք, օգնութիւն ենք հայցում, մենք փորձութեան մէջ ենք, վազում ենք ապաստան գտնելու համար: Ուրեմն եկէք սովորենք, որ Աստծուն անդադար կանչելը մի դեղամիջոց է, որը ոչնչացնում է ոչ միայն կրքերը, այլեւ բուն արարքն ինքնին: Նայէք բժշկին. նա իր դեղամիջոցը կամ թրջոց դնում է հիւանդի վէրքի վրայ, եւ դա իր ազդեցութիւնն է ունենում՝ հիւանդը չիմանալով, թէ ինչպէս է դա տեղի ունեցել: Նոյն կերպ եւ Աստծոյ անունը, երբ արտասանւում է, ոչնչացնում է մեր բոլոր կրքերը, առանց որ մենք դա զգանք առայժմ:

* * *

Հարց.— Երբ իմ միտքը թւում է, թէ հանգիստ է եւ զերծ բոլոր տեսակի անհանգստութիւնից, լա՞ւ է արդեօք նոյնիսկ այդ պահին նուիրել ինձ մեր Տիրոջ՝ Քրիստոսի անուան ոգեկոչմանը: Իմ բանականութիւնն ինձ յուշում է, որ սկսած այն պահից, որ ես խաղաղ եմ, դա անհրաժեշտ չէ.

Պատասխան.— Մենք չենք կարող զգալ նման խաղաղութիւն, քանի որ մենք մեզ մեղաւոր ենք ճանաչում: Տէրն ասել է. «Մեղաւորների համար խաղաղութիւն չկայ»: Ուրեմն, ո՞րն է այդ խաղաղութիւնը, որը մենք կարծում ենք, թէ զգում ենք: Հարկ է վախենալ, որովհետեւ գրուած է. «Խաղաղութիւն եւ ապահովութիւն ասելով կը շրջեն, եւ յանկարծ կործանումը կը զարմացնի նրանց, ինչպէս լինում է յղի կնոջ ծննդաբերութեան երկունքի պարագայում, եւ նրանք չեն կարողանայ փախչել» (Ա Թես. Ե 3): Պատահում է, որ մեր թշնամիները խաբէութե-

ան միջոցով անցողիկ հանգստութիւն են բերում մեր սրտում, որպէսզի թոյլ չտան, որ այն կանչի Աստծոյ անունը: Նրանք լաւ գիտեն, որ Աստծոյ անունը կանչելն իրենց կաթուածահար է անում: Մեզ զգուշացրել են՝ առանց դադարի կանչել Աստ-ծոյ անունը մեր օգնութեան համար: Ահաւասիկ սա է աղօթքը: Գրուած է նաեւ. «Անդադար աղօթէք» (Ա Թես. Ե 17)[1]:

[1] La Filocalia de la oración de Jesús, Salamanca 1998, էջ 81–82:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՆԴՈՒՂՔ (ԿԼԻՄԱՔՈՍ) ԿԱՄ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԻՆԱՅԵՑԻ 575–649

Յովհաննէս Սանդուղքը (Կլիմաքոս[1]) Ծնուել է մօտաւորապէս 579 թուականին Սիրիայում եւ վախճանուել 649 թ[2] Սինայում, Եգիպտոս: Եղել է ճգնաւոր, նաեւ աստուածաբան, փիլիսոփայ եւ Սինա լեռան վրայ գտնուող Սուրբ Կատարինէ վանքի վանահայր: Նրա հոգեւոր ջերմեռանդութեան

---

1 *Կլիմաքոս*, յունարէն *Κλίμακος* բառից է, որ նշանակում է *սանդուղք*:

2 Թուականների շուրջ անճշտութիւն կայ, որոշ աղբիւրներում իբրև ծննդեան թուական նշուած է 525 թ., իսկ մահուան՝ 606 թ.:

վրայ շատ են ազդել Ս. Գիգոր Նազիանզացու եւ Ս. Բարսեղ Կեսարացու գրքերից կատարած ընթերցումները: 16 տարեկանում նա սկսում է իր ճգնաւորական կեանքը Սինայի անապատում, ուր հասնում է սրբութեան բարձրագոյն աստիճաններին: Աստուած նրան օժտում է ի թիւս այլ շնորհներին նաեւ հրաշագործութեան շնորհով: Նրա համբաւը տարածւում է իր շրջապատում եւ քառասուն տարի մեկուսացուած ճգնութիւնից յետոյ է, որ նա ընտրւում է վանահայր:

Յովհաննէս Սանդուղքն իր մասին հետագայում պատմում է, որ կրօնաւորութեան իր առաջին տարիներին կային երկու գործօն, որոնք շատ օգնեցին իրեն առաջադիմել կատարելութեան ճանապարհին: Առաջինն էր՝ անօգուտ խօսակցութիւններին ժամանակ չյատկացնելը, եւ երկրորդը՝ գտնելն էր սուրբ եւ իմաստուն հոգեւոր ղեկավարին, որը պիտի օգնէր իրեն ճանաչելու այն խոչընդոտներն ու վտանգները, որոնք կանգնած էին իր սրբութեան ճանապարհին: Իր ղեկավարից նա սովորեց նաեւ երբեք չվիճել որեւէ մէկի հետ եւ երբեք չհակասել որեւէ մէկին, եթէ միւսի ասածը չէր հակասում Աստծոյ օրէնքին կամ քրիստոնէական բարոյականութեանը:

Այս սրբի «Սանդուղք» կամ «Կլիմաքոս» ազգանունը գալիս է իր գրած յայտնի գրքից, որը շատերի համար մի հոգեւոր ուղեցոյց էր յատկապէս Միջնադարում: Այդ գրքի ամբողջական անունն է՝ «Սանդուղք դէպի երկինք բարձրանալու»: Այն բաղկացած է 30 գլուխներից, դրանք սովորեցնում են բարեպաշտ հոգուն սրբութեամբ բարձրանալ հո-

գեւոր սանդուղքի երեսուն աստիճաններով (սանդղամատներով) մինչեւ հասնել կատարելութեան գագաթը: Սանդուղքը բարձրանում է երկրից կամ դժոխքից դէպի երկինք, որի գագաթին կը տեսնենք բարեգութ Աստծուն: Դրա օրինակն առնուած է Աստուածաշնչից, որտեղ նկարագրուած է Յակոբի տեսիլքը սանդուղքի մասին, որի վրայով բարձրանում եւ իջնում էին հրեշտակները (Ծնն. ԻԸ 12):

Երբ Յովհաննէս Սանդուղքը, այլ անունով նաեւ՝ Յովհաննէս Սինայեցի, զգում է իր մօտալուտ վախճանը, այն ժամանակ հրաժարւում է վանահայրութեան իր պաշտօնից եւ սկսում է պատրաստուել դէպի յաւերժութիւն իր ճանապարհորդութեանը[1]: Նա այդ ժամանակ համարեա 80 տարեկան էր եւ մեծ ուրախութեամբ է աւանդում իր հոգին Տիրոջ ձեռքերում:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՆՈՒՂՔ ՍԻՆԱՅԵՑԻ ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ «ՍԱՆԴՈՒՂՔ» ԳՐՔԻՑ

Համաձայն Աստծոյ, տառապանքը հոգու տխրութիւն է, ցաւով ներթափանցուած սրտի տրամադրուածութիւն, որը մեծագոյն եռանդով որոնում է այն, ինչ ցանկանում է, իսկ մինչեւ հասնելը դրան, տառապում է ու հառաչում ցաւագին:

Տառապանքը նաեւ մեր սրտերում մխրճուած սուրբ տխրութեան մի ոսկեայ խայթոց է, որը մեր-

[1] P. Eliécer Sálesman, Vidas de los Santos, (1), Ecuador 2007, էջ 286–291:

կացնում է հոգին իր բոլոր կրքերից ու մոլութիւններ-ի կապանքներից:

Խղճահարութիւնը խղճի յաւիտենական տանջանք է, որը խոնարհ ինքնաճանաչման միջոցով թարմացնում է սրտի բոցն ու կրակը:

Զղջումը ինքնամոռացութիւն է, քանի որ դրա պատճառով եղել է մէկը, որը մոռացել է ուտել իր հացը (հմմտ. Սղմ. ՃԱ 5):

Ապաշխարութիւնը մարմնական բոլոր զուարճանքներից ուրախ եւ կամաւոր հրաժարումն է:

Զսպուածութիւնն ու լռութիւնը առաքինութիւններ են նրանց համար, ովքեր օգտւում են այս օրինեալ տառապանքից, իսկ չբարկանալն ու վիրաւորանքները մոռանալը բնորոշ են նրանց, ովքեր արդէն առաջ են անցել դրանում:

Եթէ դու հասել ես տառապելու առաքինութեանը, աշխատիր այն պահել քո ամբողջ ուժով, քանի որ եթէ այն ամուր արմատաւորուած չլինի հոգու մէջ, կարող է հեռանալ եւ անհետանալ: Եւ յատկապէս այս աշխարհի անկարգութիւնները, անցողիկ հաճոյքներն ու իրերի տենչը ստիպում են, որ այն հեռանայ: Շատ խօսելն ու մանաւանդ բամբասանքը բոլորովին վերացնում են այն, ինչպէս կրակը՝ մոմին:

Այն, ինչ ես կ՛ասեմ յաջորդիւ, թւում է զուտ յանդգնութիւն, բայց դա չի դադարում որոշակի ճշմարտութիւն պարփակելուց: Երբեմն տառապանքն աւելի արդիւնաւէտ է, քան բուն մկրտութիւնը, որովհետեւ վերջիս մեզ մաքրում է անցեալի մեղքերից, իսկ տառապանքը մեզ պահպանում է ապագայ մեղքերից՝ տալով առաքինութիւն եւ ոգի

դրանցից խուսափելու համար: Իրականում մենք կորցնում ենք մկրտութեան շնորհը այն բանից յետոյ, երբ այն ստացել ենք մանկութեան տարիներին, իսկ այս մէկով՝ տառապանքով, նորոգւում ենք մեր նախկին մաքրութեան մէջ: Եւ եթէ Աստուած մարդկանց հանդէպ ունեցած իր սիրով արցունքներ չտար մեզ, շատ քչերը կը փրկուէին:

Տխրութիւնն ու հառաչանքը կանչում են Աստծուն, եւ երկիւղալից արցունքները բարեխօսում են մեզ համար: Բայց այն արցունքները, որոնք գալիս են սիրուց, նրանք յուշում են մեզ, որ մեր աղօթքները լսուել են եւ ընդունուել Տիրոջ կողմից:

Եւ ինչպէս որ ոչինչ այնքան համահունչ չէ տառապանքին, որքան խոնարհութիւնը, այնպէս էլ ոչինչ այնքան չի հակադրւում դրան, որքան անամօթ ու աշխարհիկ ծիծաղը:

Աշխատիր, ուրեմն, քո բոլոր ջանքերով պահպանել սրբազան զղջումի այս օրինեալ ու երանելի տխրութիւնը, եւ երբեք մի՛ դադարիր աշխատել դրա վրայ, մինչեւ որ, արդէն մաքրուած երկրաւոր բաների հանդէպ քո տածած սիրուց, այդ տխրութիւնը քեզ դէպի վեր առաջնորդի, հասցնի եւ ներկայացնի Քրիստոսին:

Մի՛ դադարիր նկատի ունենալ եւ քո սրտի խորքում ամուր դրոշմել յաւերժական կրակի անդունդը, այն դաժան սպասաւորներին, խիստ եւ ահեղ Դատաւորին, որը չի ների ոչ մի ամբարիշտ մարդու, այն անվերջ քաոսը եւ դժոխային կրակի խաւարը, այն սարսափազդու քարանձաւներն ու խորը զնդանները, այն հսկայ ժայռերն ու անդունդները, եւ այնտեղ գտնուողների սարսափելի պատ-

կերներն ու կերպարանքները: Այսպիսով, եթէ մեր հոգիներում դեռ մնացել են ցանկասիրութեան որոշ հակումներ, դրանք էլ, սարսափներից խեղդուած, տեղի կը տան մաքուր եւ յաւերժական ժուժկալութեան, որը զղջման ողբ ու արտասուքի շնորհիւ աւելի կը շողայ, քան լոյսն ինքնին:

* * *

Սուրբ առաքինութիւնները համեմատւում են Յակոբի սանդուղքի հետ, իսկ արատները՝ սուրբ Պետրոսի ձեռքից ընկած շղթային, որովհետեւ միմեանց հետ կապուած առաքինութիւնները (պատահականօրէն կամ բնական ճանապարհով) կազմում են մի կատարեալ սանդուղք, որը մեզ տանում է դէպի դրախտ: Արատները, սակայն, որոնք իրար կապուած են որպէս օղակներ, կազմում են մի հոգեւոր սանդուղք, որը մարդկանց պահում է մեղքի մէջ բանտարկուած եւ տանում դժոխք:

Զայրոյթը մեծացնում է կատաղութիւնը, այն մեղքերի պահապան է, ատում է արդարութիւնը, կործանում է առաքինութիւնները, թունաւորում հոգին, շփոթեցնում է աղօթքի ընթացքում, վերացնում է կարեկցանքը, նման է սրտին խփած մեխի, սուր ցաւի, կամաւոր դառնութեան, յաւերժական մեղքի, չարիքի, որ երբեք չի քնում:

ՅԻՍՈՒՍԻ ԱՂՕԹՔԸ
ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ՄԱՍԻՆ ՄՏԱԾՈՒՄԸ

Երբ մենք պառկում ենք մեր անկողնում, դա ժամանակն է հսկելու եւ զգաստ լինելու, քանի որ հոգին այնուհետեւ միայնակ եւ առանց մարմնի պայքարում է դեւերի դէմ, իսկ մարմինը բարենպաստ է տրամադրուած զգայնութեան հանդէպ եւ հակուած է դաւաճանութեան: Թող մահուան միտքը միշտ պառկի ձեզ հետ եւ թող այն արթնանայ ձեզ հետ՝ Յիսուսի մենախօսական աղօթքի հետ միասին: Ձեր քնած ժամանակ դուք չէք կարող գտնել դրանց համեմատութեամբ այլ օժանդակ միջոցներ:

* * *

Յաճախ աղօթէք գերեզմանների մօտ եւ գրանցէք նրանց անջնջելի պատկերը ձեր սրտում:

* * *

Թէեւ բոլոր վախկոտներն ունայն են, բայց դա չի նշանակում, որ բոլոր անվախները խոնարհ են եւ ազնուասիրտ, որովհետեւ աւազակները, ոճրագործներն ու գերեզման քանդողները, ընդհանուր առմամբ նոյնպէս վախկոտ չեն: Որոշ վայրեր ձեզ վախ են ներշնչում: Մի՛ յապաղէք այցելել դրանք կէսգիշերին: Երբ առաջ էք գնում, զինուէք աղօթքով. մտնելով այնտեղ՝ երկարէ՛ք ձեր բազուկները եւ խարազանէ՛ք ձեր թշնամիներին Յիսուս Քրիստոսի անունով, որովհետեւ

դրանից աւելի արդիւնաւէտ զէնք չկայ ոչ երկնքում, ոչ երկրի վրայ:

* * *

Տարբերութիւն կայ սիրտը ջանասիրաբար քննելու եւ այդ սիրտը հոգու, թագաւորի եւ քահանայապետի միջոցով այցելելու միջեւ, որը ողջամիտ զոհեր է մատուցում Քրիստոսին: Ոմանց վրայ,— ասում է մեզ աստուածաբանի կոչման արժանացած մի հեղինակ,— սուրբ եւ գերերկնային կրակն իջնում է՝ սպառելու այն, ինչ դեռ մնում է իր մաքրման համար, եւ այն իր կատարելութեան չափով լուսաւորում է վայրկեանները, քանզի նոյն կրակը, որը կլանում է եւ սպառում, նաեւ լոյսն է, որը լուսաւորում է: Ահա թէ ինչու ոմանք աղօթքից դուրս են գալիս խարոյկի պէս շիկացած՝ զգալով բծերի եւ նիւթի մի տեսակ կրծատում, իսկ ոմանք էլ դուրս են գալիս լուսաւորուած եւ խոնարհութեան ու ցնծութեան կրկնակի թիկնոց հագած: Նրանք, ովքեր թողնում են աղօթքը առանց այս երկու հետեւանքներից մէկի, ուրեմն մարմնական աղօթք են արել, չասելու համար հրէական, եւ ոչ թէ հոգեւոր: Եթէ մարմինը, որը դիպչում է մէկ ուրիշին, փոփոխութեան է ենթարկւում, ինչպէ՞ս նա, ով անմեղ ձեռքերով դիպչում է Տիրոջ մարմնին, նոյնպէս չի փոխուի:

* * *

Տեսնելը դու չես սովորում, դա բնութեան ազդեցութիւնն է, աղօթքի գեղեցկութիւնն էլ դու ուրիշի ուսուցմամբ չես սովորում: Այն իր մէջ ունի

ուսուցիչը՝ Աստուած, «Նա, ով մարդուն գիտութիւն է սովորեցնում» (Սաղմ. ՂԴ 10), տալիս է աղօթքը նրան, ով աղօթում է, եւ օրհնում է արդարների տարիները[1]:



Երկրից կամ դժոխքից դէպի երկինք տանող սանդուղքը

[1] La Filocalia de la oración de Jesús, Salamanca 1998, էջ 91, 96. W. Wolkler, Eine Studie zu Johannes Climacus und zugleich eine Vosstudie zu Symon dem Neuen Theologem, Wiesbaden 1968.

ԻՍԱՀԱԿ ՆԻՆՈՒԷՑԻ
(613–700)

Իսահակ Նինուէցի, Իսահակ Ասորի կամ Իսահակ Կատարցի, Արեւելքի Ասորական (Նեստորական) Եկեղեցու գործիչ[1], վանական, ճգնաւոր, գրող, միստիկ, ականաւոր աստուածաբան, եպիսկոպոս: Ծնուել է 613 թ. Բեթ Կատրայայում[2], երիտասարդ տարիքում իր եղբօր հետ եղել է Նինուէի մերձակայքում գտնուող Մար Մաթէոսի վանքի վանական: Ուսումնառութեան տարիները նրան

[1] Isaac de Nínive, El don de la humildad, Salamanca 2020, էջ 10.
[2] Բեթ Կատարայան այսօրուայ Քատարն է, որը Ե. դարից սկսած եղել է նեստորականութեան կենտրոն:

դարձնում են ասկետիկ կեանքի հարցերի առաջատար մասնագէտ: Հետագայում, 670 թ. նա Գէորգ կաթողիկոսի կողմից ձեռնադրւում է Նինուէի (այսօրուայ Իրաքի Մօսուլ քաղաքի) եպիսկոպոս, սակայն հինգ ամիս յետոյ հրաժարւում է այդ պաշտօնից՝ տեսնելով քաղաքի բնակիչների կոպիտ բարքերը եւ անհնազանդութիւնը[1]: Նա զգում էր, որ նրանց առաջնորդելն իր կարողութիւնից վեր է եւ տենչում էր մենակեցութեան: Այդ իսկ պատճառով իրեն նուիրում է ճգնակեցական կեանքի Պարսկաստանի Բեթ Հուզայէի (Խուզիստանի) թեմի տարածքում գտնուող լեռների վրայ, ապա հաստատւում է Ռաբբան Շապուր վանքում (Իրաք), ուր զբաղւում է ուսուցչութեամբ եւ գրում հոգեւոր արժէքաւոր ուսումնասիրութիւններ ու հոգեշահ աղօթքներ, որից յետոյ, բազմավաստակ եւ տքնութիւններից կուրացած վիճակում, վախճանւում է մօտաւորապէս 700 թուականին եւ թաղւում այնտեղ:

Իսահակ Նինուէցին սուրբ է թէ՛ որոշ Ուղղափառ եւ թէ՛ Արեւելեան Կաթոլիկ եկեղեցիներում, իր ոչ դոգմատիկ աստուածաբանութեան պատճառով, նրան կարող են ընդունել քրիստոնէական տարբեր դաւանանքներ եւ նոյնիսկ՝ մահմեդականներ: Նրա գործերը վաղուց թարգմանուել են արամէերէնից եթովպերէնի, ղպտիերէնի, արաբերէնի, յունարէնի, լատիներէնի, ռուսերէնի եւ այլ լեզուների, որոնք հիմք են հանդիսացել վանական ուսում-

[1] Ենթադրւում է, որ նրա հրաժարման պատճառներից մէկը եղել է նաև այն, որ նա նեստորականների հետ վարդապետական հարցերում որոշ անհամաձայնութիւններ է ունեցել:

նասիրութիւնների, յատկապէս եւ մինչեւ այսօր Ղպտի Եկեղեցում: Միւս կողմից էլ Աթոս Լեռան ուղղափառ վանականների համար հոգեւոր մի անփոխարինելի ուղեցոյց է եղել եւ շարունակում է մնալ Նինուէցու գրական հարուստ ժառանգութիւնը, որի մի մասը ամփոփուել է «Ֆիլոկալիա» անունը կրող ժողովածոյում, որից, վերջում, թարգմանաբար ներկայացնում ենք հատուածներ:

Միջնադարում, յատկապէս ԺԲ.–ԺԳ. դարերում, Իսահակ Նինուէցու քարոզների մի հատընտիր յունարէնից թարգմանուել է լատիներէն, ֆրանսերէն, իտալերէն, պորտուգալերէն, իսպաներէն եւ կատալան լեզուների:

Իսպաներէն առաջին թարգմանութիւնը կատարել է վանական Բերնարդո Բուիլը 1489 թ., որն ուղեկցել է Քրիստափոր Կոլոմբոսին դէպի Նոր աշխարհ կատարած իր երկրորդ ճանապարհորդութեան ընթացքում, 1493 թուականին: Նա իր հետ էր տարել Իսահակ Նինուէցուց կատարած իր թարգմանութիւնը՝ ճգնաւորական քարոզների հատընտիրը, որը եղել է Նոր Աշխարհ հասած առաջին գրքերից մէկը:

Մեծ է եղել նաեւ Իսահակ Նինուէցու ազդեցութիւնը ռուսական ասկետիկ գրականութեան վրայ: Ռուս հռչակաւոր գրող Ֆեոդոր Մ. Դոստոեւսկին (1821–1881) իր «Կարամազով եղբայրները» անունը կրող վէպում անդրադառնում է Սմերդիակովի կերպարին, որը մի յամառ ընթերցող է եղել Նինուէցու գրութիւնների:

ԻՍԱՀԱԿ ՆԻՆՈՒԷՅԻ ԿԱՄ ԻՍԱՀԱԿ ԱՍՈՐԻ ՀԵՐՈՎԴԷՍՆ ՈՒԶՈՒՄ ԷՐ ՏԵՍՆԵԼ ՅԻՍՈՒՍԻՆ

Ինչպէ՞ս կարող են արարածները նայել Աստծուն, երբ Նրան տեսնելը այնքա՜ն ահաւոր է, որ հէնց ինքը՝ Մովսէսն ասում է, որ սարսափից դողում է: Եւ, իրօք, երբ Աստծու փառքը յայտնւում է երկրում, Սինա լեռան վրայ (Ելք, գլուխ 20), լեռը ծխում է եւ դողում մօտալուտ յայտնութեան պատճառով: Այն կենդանիները, որոնք մօտենում էին լեռան լանջին, սատկում էին: Իսրայէլի որդիները պատրաստուել էին: Նրանք, համաձայն Մովսէսի հրամանի, երեք օր շարունակ մաքրուել էին, որպէսզի արժանի լինեն լսել Աստծոյ ձայնը եւ տեսնել Նրա յայտնութիւնը: Երբ ժամը հասաւ, նրանք ի վիճակի չեղան տեսնելու Նրա լոյսի ճառագայթումը, եւ ոչ էլ՝ դիմանալ Նրա ահեղ ձայնի որոտումին:

Բայց հիմա, երբ Աստուած իր գալուստով հեղել է իր շնորհը, այլեւս դա ոչ թէ երկրաշարժի, կրակի, սարսափազդու եւ ուժեղ որոտումների դրսեւորումներով է կատարուել, այլ ինչպէս ցօղ՝ խուզուած բրդի վրայ (Դատ. Զ 37), ինչպէս անձրեւի մի կաթիլ, որը մեղմօրէն ընկնում է երկրի վրայ: Նա մեզ մօտ այլ կերպ է եկել: Նա ծածկել է իր մեծութիւնը մեր մարմնի կերպարանքով: Նա դրանից գանձ է ստեղծել: Նա մեր մէջ է ապրել այս մարմնով, որ Նրա կամքով է ձեւաւորուել Ս. Կոյս Մարիամ Աստուածածնի արգանդում, որպէսզի, տեսնելով Նրան մեր ցեղից եւ ապրելով մեր մէջ, չխռովուենք Նրա փառքի տեսութեամբ:

Այդ իսկ պատճառով նրանք, ովքեր հագել են այն հանդերձը, որով Արարիչն յայտնուեց մեր մէջ, նրանք զգեստաւորուել են Քրիստոսով (Գաղ. Գ 27)։ Նրանք ցանկացել են ներքնապէս կրել այն նոյն խոնարհութիւնը, որով Քրիստոսն իրեն յայտնել է իր արարչագործութեանը եւ ապրել դրա մէջ, ինչպէս որ այժմ Նա իրեն յայտնում է իր ծառաներին, որոնք պատուի եւ արտաքին փառքի հանդերձանքի փոխարէն զգեստաւորուել են Նրա անսահման խոնարհութեամբ։

ՄԱՔՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Մարմնական մարզումը հանգստութեան հետ մէկտեղ մաքրում է մարմինը իր պարունակած նիւթական աւելորդ տարրերից։ Հոգու մարզումը, սակայն, խոնարհեցնում եւ մաքրում է հոգին նիւթական այն ձգտումներից, որոնք դրան տանում են դէպի կորնչելի իրերը, ապա փոխում է նրա կրքային բնոյթը եւ մղում նրան դէպի հոգեշահ խոկումներ։ Այս խոկումը տանում է հոգին դէպի բանականութեան մերկացումը, որը կոչւում է աննիւթական խորհրդածութիւն։՝Այստեղ խօսքը հոգեւոր վարժանքի մասին է, որը բարձրացնում է ինտելեկտը (բանականութիւնը) երկրային բաներից եւ այն աւելի է մօտեցնում հոգեւոր հիմնական խորհրդածութեանը եւ հակում այն դէպի Աստուած՝ Նրա անճառելի փառքի տեսքով, որն ստիպում է հոգեպէս վայելել ապագայ բաների յոյսը՝ մանրամասն մտածելով, թէ դրանք ինչ են լինելու։

Սրտի մաքրութիւնը կայանում է բոլոր արատներից մաքուր լինելու մէջ, իսկ հոգու մաքրութիւնը՝ հոգու մէջ թաքնուած բոլոր կրքերից ազատ լինելու մէջ: Ինտելեկտի մաքրութիւնը կայանում է զգայական տիրոյթում գտնուող ամէն ինչից ազատագրուելու մէջ:

Բանականութեան եւ սրտի մաքրութեան միջեւ կայ նոյն տարբերութիւնը, ինչ որ կայ մարմնի որոշակի անդամի եւ ամբողջ մարմնի միջեւ: Սիրտը ներքին զգայարանների կենտրոնական օրգանն է, այսինքն՝ օրգանների օրգանը, քանի որ այն կազմում է արմատը: «Եթէ արմատը սուրբ է, ճիւղերն էլ սուրբ են» (Հռոմ. ԺԱ): Բայց արմատը սուրբ չի լինի, եթէ այն էութեան մի ճիւղն է միայն:

Այժմ, Սուրբ Գրքի համեստ կիրառմամբ, զուգորդուած ծոմի եւ մենութեան որոշակի պրակտիկայի հետ (հեսիխա), բանականութիւնը մոռանում է իր նախկին զբաղմունքը եւ մաքրւում՝ դիմադրելով իր տարօրինակ սովորութիւններին: Բայց դա նաեւ քիչ բան է պահանջում արատաւորելու համար ինքն իրեն: Սիրտը մաքրւում է մեծ ջանքերի շնորհիւ, աշխարհի հետ բոլոր շփումներից զրկուելու եւ համընդհանուր զրկանքների ու զոհողութիւնների միջոցով: Բայց երբ մաքուր է, նրա մաքրութիւնն այլեւս չի արատաւորւում աննշան բաների հետ շփումից, քանի որ այն այլեւս չի վախենում ծանր պարտաւորութիւններից:

ԱՍՏԾՈՒՆ ՅԻՇԵԼԸ

Յիշեցէ՛ք Աստծուն, որպէսզի Նա էլ անդադար յիշի ձեզ, որովհետեւ ձեզ յիշելով Նա կը փրկի ձեզ եւ դուք կը ստանաք Նրա բոլոր բարիքները: Մի՛ մոռացէք Նրան զուր շեղումներով, եթէ չէք ցանկանում, որ Նա մոռանայ ձեզ՝ ձեր գայթակղութիւնների պահին:

Բարեկեցութեան ժամանակ մնացէ՛ք մօտ Նրան հնազանդութեան մէջ: Այսպիսով դուք Նրա առջեւ խօսքի ապահովութիւն կ՛ունենաք, երբ վշտացած յայտնուէք, քանի որ ձեր աղօթքը մղում է ձեզ ձեր սրտում առանց դադարի դէպի Նա:

Անընդհատ կանգնեցէք Աստծոյ դիմաց՝ մտածելով Նրա մասին, պահելով Նրա յիշատակը ձեր սրտերում: Հակառակ դէպքում դուք վտանգի էք ենթարկւում, տեսնելով Նրան միայն ժամանակ առ ժամանակ եւ ձեր վեհերոտութեան պատճառով՝ ապահովութեան պակաս ունենալով Նրա հանդէպ: Մարդկանց շրջանակում շարունակական այցելութիւններն իրար իրականացւում են ֆիզիկական ներկայութեամբ, իսկ միւս կողմից մշտական յաճախումն Աստծուն՝ հոգու խորհրդածութիւն է եւ աղօթքով մատուցուած մի ընծայ:

Երբ գինու ուժը ներթափանցում է երակների մէջ, բանականութիւնը մոռանում է իրերի մանրամասնութիւնն ու նրանց տարբերակումը: Երբ Աստծոյ մասին յիշողութիւնն է տիրում հոգուն, տեսանելի բաների յիշողութիւնը անհետանում է սրտից:

Երբ որեւէ մէկը տեւապէս քնում է իր հոգին, նրա սիրտը ուրախանում է նոր բացայայտումնե-

րով: Նա, ով ուղղում է իր միտքը դէպի իր ներքին էութիւնը, տեսնում է հոգու շքեղութիւնը: Նա, ով յաղթահարում է ցրուածութիւնը, խորհում է իր սրտում իր Տիրոջ մասին: Նա, ով ցանկանում է տեսնել Տիրոջը, ձգտում է մաքրել իր սիրտը՝ մշտապէս յիշելով Աստծուն: Այդ մաքրազարդումով նա ի վիճակի կը լինի, իր բանականութեան պայծառութեան մէջ, ամէն վայրկեան տեսնել Տիրոջը:

ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՍԸ

Երջանիկ են նրանք, ովքեր հասկանում են դա եւ համբերում խաղաղութեան մէջ՝ առանց իրենց անձերին պարտադրելու ամէն տեսակ աշխատանք, այլ իրենց ֆիզիկական ծառայութիւնը փոխանակում են աղօթքի աշխատանքի հետ, երբ ունակ են դրան: Նա, ով չի կարող տանել մենակութիւնը՝ առանց ծառայութեան դիմելու, թող արդարացիօրէն դիմի դրան: Բայց այդ ծառայութիւնը թող անի այնպէս, որպէս թէ դա օգնութիւն լինէր եւ ոչ թէ էական յանձնառութիւն, առանց աւելորդ մտահոգութեան:

Երբ Աստուած ներսից բացում է քո բանականութիւնը, եւ դու յաճախակի ծնրադրում ես նրա առջեւ, թոյլ մի տուր, որ որեւէ պղտոր միտք տիրի քեզ, վախենալով, որ դեւերը թաքուն կը համոզեն քեզ կիրառել այն, որից յետոյ կը նկատես եւ կը զարմանաս, թէ ինչ է քեզանից ծնւում նման բաներից:

Զգուշացիր՛ աշխոյժ կեանքի բարոյական գործողութիւնների եւ գիշեր ու ցերեկ խաչի առջեւ

քո կատարած բերանքսիվայր, ձեռքերդ մէջքիդ դրած, երկրպագութիւնների միջեւ համեմատութիւններ անելուց: Եթէ ցանկանում ես, որ քո եռանդը երբեք չնուազի, եւ քո արցունքները երբեք չսպառուեն, կիրառի՛ր սա… Եւ դու կը լինես նման ծաղկած դրախտի եւ անսպառ աղբիւրի:

Այժմ նկատի ունեցիր շնորհքի այն բազմաթիւ ապացոյցները, որոնք մեզ տալիս է Նախախնամութիւնը: Երբեմն մարդը ծնկաչոք է աղօթում, ձեռքերը պարզած, դէպի երկինք բարձրացուցած, դէմքը դէպի խաչը, զգացումով եւ բանականութեամբ ամբողջովին դէպի Աստուած ու պաղատանքը շրջուած: Մինչ նա կլանուած է այս աղաչանքներով, յանկարծ նրա սրտում բացւում է բերկրութիւնների մի աղբիւր, նրա մարմնի անդամները հանդարտ են, աչքերը ապշահար, դէմքը խոնարհուած դէպի գետին, ծնկները չեն կարողանում յենուել գետնին այն ուրախութեան եւ վեհութեան պատճառով, որ շնորհը տարածում է նրա մարմնում:

ԱՂՕԹՔԸ

Ի՞նչ է աղօթքը: Բոլոր երկրային բաներից զերծ բանականութիւն եւ սիրտ, որի հայեացքն ամբողջութեամբ կենտրոնացած է իր յոյսի առարկայի վրայ: Դրանից հեռանալը նշանակում է ընդօրինակել այն մարդուն, որն ակօսի մէջ խառն սերմեր է սերմանում կամ լծում է եզն ու էշը միասին, որպէսզի դրանցով մշակի հողը:

Առանց ցրուածութեան կատարուած աղօթքը հէնց այն աղօթքն է, որը հոգու մէջ առաջացնում է Աստուծոյ մասին մտածելու մշտական ձգտումը, այսինքն՝ Նրա նոր մարմնաւորումը, հետեւաբար Աստուած բնակւում է մեր մէջ՝ Նրա հանդէպ մեր ունեցած մշտական յիշողութեան միջոցով, որն ուղեկցւում է Նրա կամքը փնտռելու սրտի լուրջ ներգրաւուածութեամբ: Ակամայ վատ մտքերը, սակայն, առաջանում են նախկին անտարբերութիւններից:

Ի՞նչ է հոգեւոր աղօթքը: Գոյութիւն ունի հոգեւոր աղօթք, երբ հոգու շարժումները, նրա իսկական մաքրազարդումից յետոյ, ենթակայ են Սուրբ Հոգու ազդեցութեանը: Այս բանին տասը հազարից հազիւ մէկը կարող է արժանանալ: Դա մեր ապագայ վիճակի խորհրդանիշն է, քանի որ բնութիւնը վեր է դասուած այն բոլոր անմաքուր շարժումներից, որոնք ներշնչուած են այս աշխարհի յիշողութիւնից… Դա ներքին հայեացք է, որն իր մեկնակէտն ունի աղօթքում:

Ո՞րն է ճգնակեացի գործունէութեան գագաթնակէտը, ինչպէ՞ս հասկանալ, որ մրցավազքն հասել է իր վերջնական նպատակակէտին: Այն հասնում է իր վերջնակէտին, երբ մարդն արժանի է դառնում հանապազ աղօթելու: Նա, ով հասել է դրան, հասել է բոլոր առաքինութիւնների աւարտին եւ, միեւնոյն ժամանակ, հասել է հոգեւոր կացարանի: Նա, ով իրականում չի ստացել Սուրբ Հոգու պարգեւը, ի վիճակի չէ կատարելու անխափան աղօթքը հանգստի ժամանակ: Երբ Հոգին հաստատում է իր բնակութիւնը մարդու մէջ, նա այլեւս չի կարող դադարեցնել աղօթելը, քանի որ Հոգին չի

դադարում աղօթել նրա մէջ։ Անկախ նրանից, թէ նա քնում է, թէ արթուն վիճակում, աղօթքը չի բաժանւում նրա հոգուց։ Ուտելիս, խմելիս, պառկած վիճակում, գործով զբաղուած, քնի մէջ ընկղմուած, նրա հոգուց ինքնաբուխ տարածւում է անոյշ բուրմունքն աղօթքի։ Այսուհետեւ աղօթքը չի գերակշռի միայն սահմանուած ժամանակահատուածների մէջ, այլ՝ ցանկացած պահի։ Թէեւ նա իր թուացեալ հանգիստն է վերցնում, բայց աղօթքը թաքուն կերպով ապահովուած է նրա մէջ, որովհետեւ անվրդովների լռութիւնն ինքնին աղօթք է,— ասում է Քրիստոսազգեաց մի մարդ։ Մտքերը աստուածային յղումներ են։ Մաքրուած բանականութեան շարժումները լուռ ձայներ են, որոնք գաղտնօրէն սաղմոսերգութիւն են մատուցում Աներեւոյթին։

Եթէ ձեզ յաջողուի համատեղել գիշերների ձեր խոկումները ցերեկների ձեր ունեցած ծառայութեան հետ՝ առանց ձեր սրտերի գործողութիւնների եռանդը համապատասխանաբար նուազեցնելու, ապա ձեզանից երկար ժամանակ չի պահանջուի որպէսզի կարողանաք ողջագուրուել Յիսուսի հետ եւ փարուել Նրա կրծքին… Ահա իմ խորհուրդը. մնացէ՛ք հանգիստ եւ արթուն, առանց սաղմոսներ արտասանելու կամ երկրպագութիւններ անելու, իսկ աղօթելիս, աղօթէ՛ք միայն ձեր սրտում, բայց մի՛ քնէք։

ԱՂՕԹՔԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Շնորհը մարդկանց մէջ գործում է տարբեր ձեւերով՝ ըստ իր չափի: Նրանցից մէկը բազմապատկում է իր աղօթքների թիւը՝ մի կրակոտ եռանդի ազդեցութեան տակ, իսկ մէկ ուրիշը ձեռք է բերում հոգու այնպիսի հանգստութիւն, որ իր նախկին աղօթքների բազմութիւնը նուազեցնում է եւ միասնութեան հասցնում:

Պէտք չէ շփոթել բաւարարուածութիւնը աղօթքի մէջ եւ տեսիլքը՝ նրանում: Երկրորդը գերազանցում է առաջինին այնքան, որքան տղամարդը փոքր տղայի նկատմամբ: Պատահում է, որ բառերը բերանում եզակի փափկութիւն են ստանում, եւ նախադասութեան նոյն բառն անվերջ կրկնւում է առանց յագեցուածութեան, ստիպելով առաջ գնալ եւ անցնել յաջորդին:

Երբեմն աղօթքը առաջացնում է որոշակի խորհրդածութիւն, որն ստիպում է, որ աղօթքն անհետանայ շուրթերից: Նրան, ում վիճակւում է նման խորհրդածութիւն, ընկնում է հոգեկան յափշտակուածութեան մէջ եւ նմանւում մի մարմնի, որի հոգին խլուել է նրանից: Այն, ինչ որ մենք անուանում ենք աղօթքի մէջ տեսիլք, ոչ պատկեր է, ոչ էլ՝ երեւակայութեան կողմից ստեղծուած ձեւ, ինչպէս յիմարներն են պնդում:

Աղօթքի այս խորհրդածութիւնն ինքնին ունի տարբեր աստիճաններ եւ շնորհներ: Բայց, մինչ այդ, դա դեռ շարունակում է մնալ աղօթք, քանի որ միտքը դեռ չի անցել այն վիճակին, երբ այլեւս աղօթքը գոյութիւն չի ունենայ, այլ՝ աղօթքից աւելի

գերազանց մի վիճակ: Աղօթքի ընթացքում լեզուի եւ մտքի շարժումները բանալիներն են: Յետոյ մուտք է գործւում է սենեակ: Այնտեղ բերանը, շուրթերը լռում են: Սիրտը՝ մտքերի այդ սենեկապետը, զգայարանների վրայ տիրող բանականութիւնը, հոգին՝ այդ արագընթաց թռչունը, իր բոլոր միջոցներով ու կարողութիւններով եւ իր աղաչանքներով, կարող են միայն համր մնալ, քանի որ ներս է մտել տան Տէրը:

Ըստ սուրբ հայրերի ասածի, օրէնքների եւ Աստծոյ կողմից մարդկութեանը թելադրուած պատուիրանների հետապնդած նպատակն է՝ մարդկային սրտի մաքրութիւնը: Նմանապէս, աղօթքի բոլոր ձեւերն ու կեցուածքները, որոնցով մարդը դիմում է Աստծուն, աւարտւում են մաքուր աղօթքով: Իսկ եթէ հոգին հատել է մաքուր աղօթքի սահմանը եւ անցել աւելի այն կողմ, այնտեղ այլեւս չկայ աղօթք, չկան յոյզեր, արցունքներ, իշխանութիւն, ազատութիւն, աղաչանքներ, ցանկութիւն, անհամբեր յոյս այս աշխարհի կամ միւսի համար: Հետեւաբար, չկայ այլ աղօթք բացի մաքուր աղօթքից… Անցնելով այդ սահմանը, դու ընկնում ես զմայլանքի մէջ, երբ հոգին այլեւս չի աղօթում…

Տասը հազար մարդկանց մէջ դժուար կը լինի գտնել մէկին, որն զգալի չափով կատարած լինի պատուիրաններն ու օրէնքները, ինչպէս նաեւ արժանի համարուի ունենալու հոգու հանգստութիւն: Ոչ պակաս հազուադէպ է ամբոխի մէջ գտնել մի մարդու, որին իր հետեւողական զգօնութիւնը արժանի է դարձրել մաքուր աղօթքի… Բայց ինչ վերաբերում է այն խորհրդին, որը գտնւում է անդե-

նական աշխարհում, ապա դժուար թէ մի ամբողջ սերնդի մէջ գտնուի մի մարդ, որը մօտեցել է Աստծոյ փառքի այդ գիտութեանը… Այնտեղ մոռացւում է աղօթքի առարկան, յոյզերը սուզւում են այս աշխարհին չպատկանող խորը արբեցութեան մէջ: Խօսքը յայտնի անգիտութեան վերաբերեալ է, որի մասին Եւագրն ասել է. «Երանի նրան, ով աղօթքում հասել է այն անգիտութեանը, որն անհնար է յաղթահարել»:

Եկել է ժամանակը բացատրելու այն, ինչ վերեւում ասացինք՝ նկատի ունենալով հոգեւոր ուրախութիւնը: Սկզբում դա մի անորոշ էներգիա է, որ սէրն արթնացնում է սրտում՝ առանց որեւէ ակնյայտ պատճառի, քանի որ այն շարժման մէջ է դնում խառնուածքը, առանց անձնական տեսլականի, առանց գործնական մտածողութեան, այն յայտնաբերւում է պատճառից զուրկ, քանզի բանականութիւնը դեռ մշուշոտ է:

ԱՂՕԹՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Նաւավարը, մինչ նաւարկում է, հայեացքը յառում է աստղերին, որոնցով կարգաւորում է իր նաւի ընթացքը եւ ակնկալում, որ ցոյց տան դէպի նաւահանգիստ տանող ճանապարհը: Վանականը հայեացքն ուղղում է աղօթքին, որն առաջնորդում է իր ընթացքը դէպի նաւահանգիստ, ինչը պահանջում է իր մասնագիտական ասպարէզը: Վանականը չի դադարում իր հայեացքն ուղղել աղօթքի վրայ, որպէսզի դրա օգնութեամբ ցոյց տրուի

իրեն այն կղզին, ուր նա կը կարողանայ ապահով դնել իր փայտեայ արկղները՝ որպէսզի դրանցում հաւաքի եւ նաւ տանի անհրաժեշտ սննդամթերքն ու ապրանքը՝ նախքան նաւի ցռուկը դէպի այլ կղզի ուղղելը: Այսպիսին է մրցավազքը, քանի դեռ այն այս աշխարհում է: Մարդ նաւարկում է կղզուց կղզի, եւ նրանցում նրա յայտնաբերած զանազան գիտելիքները կղզիների չափ են, մինչեւ որ նա վերջապէս իր քայլերն ուղղում է դէպի ճշմարտութեան քաղաքը, որտեղ նրա բնակիչներն եռուզեռի մէջ չեն, որտեղ իւրաքանչիւրը յագեցած է իր ունեցածով: Երանի նրանց, որոնց ճանապարհորդութիւնն անցնում է անխռով ընդարձակ ովկիանոսով[1]:

[1] La Filocalia de la oración de Jesús, Salamanca 1998, էջ 83–89.

ՍԻՄԷՈՆ ՆՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ (949–1022)

Ի շարս Յովհաննէս Աւետարանչի եւ Գրիգոր Նազիանզացու, Սիմէոն վանականը երրորդն է ու վերջինը, որ սրբադասուելով Օրթոդոքս (Ուղղափառ) Եկեղեցում արժանացել է «Նոր Աստուածաբանի» կոչմանը: Նա եղել է եկեղեցական յայտնի բարեկարգիչ, բանաստեղծ եւ մարմնաւորել է հեսիխաստական միստիցիզմի աւանդութիւնը:

Սիմէոն Նոր Աստուածաբանը ծնուել է 949 թ. Փոքր Ասիայի Գաղատիա (Γαλατία) տարած-

քում, որը մօտաւորապէս այսօրուայ Անկարայի շրջանն է Թուրքիայում: Շատ երիտասարդ տարիքում տեղափոխուել է Կոստանդնուպոլիս՝ ուսում ստանալու եւ կայսեր մօտ ծառայութեան անցնելու համար: Նա դառնում է պալատական, բայց քիչ տարիներ անց, հմայուելով հոգեւոր ու բարեպաշտական գրութիւնների ընթերցումներով, որոշում է թողնել պալատը եւ մտնել վանք: Այդ ժամանակ նա 27 տարեկան էր: Շնորհիւ իր մեծ հաւատի եւ ուշիմութեան, վանական դառնալուց երեք տարի յետոյ, նա ընտրւում է Կոստանդնուպոլսի Սուրբ Մամէս վանքի վանահայր, ուր ապրում էր արդէն: Այստեղ է նա սկսել իր լարուած որոնումը՝ հոգեւոր կերպով միանալու Քրիստոսին, ինչը նրան մեծ հեղինակութիւն է ապահովել:

Իր կեանքի վերջին շրջանը Սիմէոն Նոր Աստուածաբանն անցկացրել է Կոստանդնուպոլսի Ս. Մակրինա վանքում, որտեղ գրել է իր գործերի մեծ մասը՝ հետզհետէ աւելի յայտնի դառնալով իր ուսմունքներով եւ հրաշքներով: Նա վախճանուել է 1022 թ.: Նրա աշակերտներից ամէնից յայտնին է Նիկետաս Ստեթատոսը, որը հաւաքել եւ ընդօրինակել է Սիմէոնի գրութիւնները եւ գրել նրա կենսագրութիւնը: Այս բոլոր աշխատութիւնները մինչեւ այսօր իրենց կարեւոր տեղն են գրաւում արեւելեան վանական աւանդոյթում:

«Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ եկեղեցական մեծ հերձուածի շեմին Սիմէոն Նոր Աստուածաբանը (949–1022)՝ բիւզանդացի վանականը, Արեւելքի եկեղեցու մեծագոյն միստիկն է: Իր ժամանակակիցների կողմից նա կոչուել է «Նոր Աստուածա-

բան», ոչ այնքան նրա գիտական պաշարի, որքան Աստծոյ մասին նրա քրիստոնէական փորձառութեան իսկութեան եւ խորութեան պատճառով: Սիմէոնը, հոգեւոր անմիջական փորձառութեան պարզ եւ իւրայատուկ լեզուով, կարող է դիպչել յուսահատութիւնից վիրաւորուած ցանկացած ժամանակի մարդու սրտին, հրաւիրելով նրան մտնել Աստծոյ հետ ջերմեռանդ երկխօսութեան մէջ:

«Նրա բանաստեղծական խորը ներշնչանքի փոխաբերութիւնները շնչում են քրիստոնէական հաւատի նախասկզբնական ճշմարտութիւնների թարմութեամբ եւ հաղորդում խիստ արդիական ուղերձ՝ բախուելով արտաքնապէս քնած քրիստոնէութեանը: Նա ընդգծում է Հոգու գիտակցուած փորձառութեան անհրաժեշտութիւնը: Ի դէմս աւետարանական արմատականութեան կորստի՝ նա առաջարկում է քրիստոնէական կեանքը, որպէս նախադրեալ յարութեան: Յոգնածութեան կամ անցած ժամանակների հանդէպ եղած կարօտի դիմաց՝ նա անխոնջ կերպով կրկնում է, որ հասնելու համար մի բանի՝ պէտք է իմանալ ինչպէս ցանկանալ: Պէտք է իմանալ՝ ո՞րն է դուռը… արցունքների խորհուրդը»[1]:

[1] Benedicto XVI, Audiencia General, Vaticano, miércoles, 16 de septiembre de 2009.

ՅԻՍՈՒՍԻ ԱՂՕԹՔԻ ԵՒ ՍԻՄԷՈՆԻ ԷՔՍՏԱԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթէ դու բուժում ես փնտռում, ուրեմն մշակիր քո գիտակցութիւնը, արա այն ամէնը, ինչ վերջինս ասում է քեզ, եւ դու կը շահես:

* * *

Նա, ով փնտռում է Հոգու ներգործութիւնը նախքան պատուիրանների գործադրումը, նման է այն ստրուկին, որը հէնց իր գնման պահին է պահանջում գնման գինը եւ ստրկութիւնից ազատ արձակման գիրը:

* * *

Նա, ով աղօթում է մարմնաւորապէս եւ դեռեւս չունի հոգեւոր գիտելիքներ, նման է այն կոյրին, որն աղաղակում էր. «Դաւթի՛ որդի, ողորմի՛ր ինձ» (Ղուկ. ԺԸ 38): Երբ բժշկուեցին կոյրի աչքերը եւ նա տեսաւ Տիրոջը, երկրպագեց Նրան, եւ դրանից յետոյ Նրան անուանեց ոչ թէ Դաւթի որդի, այլ՝ Աստծոյ Որդի:

Մեր երիտասարդը հիացած էր այդ երեք դրուագներով եւ հաւատում էր, որ ծայրայեղ առաւելութիւն կը գտնի՝ զարգացնելով իր գիտակցութիւնը եւ կը կարողանայ ճանաչել Ս. Հոգու գործողութիւնները, ինչպէս նաեւ կը սովորի պահել Աստծոյ պատուիրանները, որի շնորհիւ կը բացուեն իր ներքին աչքերը եւ հոգեպէս կը տեսնի Աստծուն:

Օրէցօր նրա յետմիջօրէի աղօթքը երկարում էր. նա այն երկարացնում էր մինչեւ կէսգիշեր՝

առանց հանգստանալու կամ թուլանալու, ոռանց որեւէ անդամ շարժելու, նոյնիսկ առանց շարժուելու կամ աչքերը բարձրացնելու: Անշարժ էր մնում սիւնի պէս կամ անմարմին էակի պէս:

Մի օր, յետմիջօրէին, երբ նա աղօթում էր եւ իր հոգու մէջ ասում «Աստուած իմ, ողորմիր ինձ, ես մեղաւոր եմ», յանկարծ մի հզօր աստուածային լոյս փայլում է նրա վերեւում: Ամբողջ սենեակը ողողում է այդ լուսաւորութեամբ: Երիտասարդը չգիտէր՝ տանո՞ւն է արդեօք, թէ՞ տանիքի վրայ: Նա միայն լոյս էր տեսնում բոլոր կողմերից, նոյնիսկ չգիտէր, եթէ ինքը երկրի վրայ է կամ ոչ: Ոչ մի վախ ընկնելու, ոչ մի մտահոգութիւն այս աշխարհի համար: Նա միայն կազմում էր մի միասնութիւն այդ աստուածային լոյսի հետ, թւում էր, թէ հէնց ինքն է լոյս դարձել, եւ աշխարհից բոլորովին բացակայելով՝ լցուել է արցունքներով եւ անասելի ուրախութեամբ: Այնուհետեւ նրա հոգին բարձրանում է երկինք, եւ այնտեղ նա տեսնում է մէկ այլ լոյս, աւելի շքեղ, եւ այդ լոյսի մօտ նկատում է կանգնած սուրբ վանահօրը, որն իրեն նուիրել էր Մարկոսի գիրքը եւ կարգախօսը:

ՍԻՄԷՈՆ ՆՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

Երբ նա մի գիշեր աղօթքի մէջ էր, իր մաքրազարդուած հոգով միացած առաջին Հոգուն, նա տեսաւ մի լոյս վերեւում, որն յանկարծ իր լոյսը սփռեց իր վրայ երկնքից: Դա իսկական եւ վիթխարի

մի լոյս էր, որը յստակեցնում էր ամէն ինչ եւ ամէն ինչ մաքուր դարձնում ցերեկուայ պէս: Նա նոյնպէս, լուսաւորուած նրանով, զգում էր, որ ամբողջ տունը, ներառեալ այն խուցը, որում նա յայտնուել էր, անհետացել են եւ մէկ ակնթարթում ոչնչութիւն դարձել, նաեւ հէնց ինքը յափշտակուել է օդում՝ ամբողջովին մոռանալով իր մարմինը: Այդ վիճակում,— ինչպէս նա մեկնաբանում էր եւ գրում իր վստահելիներին,— նա լցուած էր մեծ ուրախութեամբ եւ հեղեղուած ջերմ արցունքներով, եւ ամենատարօրինակն այս սքանչելի իրադարձութեան մէջ այն էր, որ նա դեռեւս հասուն չլինելով նման բացայայտութիւնների մէջ, ի զարմանս իրեն, սկսում է անդադար աղաղակել բարձրաձայն. «Տէ՛ր, ողորմիր ինձ», մի բան, որ նա նկատում է, թէ ինքն ուշքի է եկել, քանի որ մինչ այդ նա բոլորովին անտեղեակ էր, որ իր ձայնը խօսում է եւ որ իր խօսքը լսւում է դրսում… Աւելի ուշ, վերջապէս, այդ լոյսը կամաց-կամաց նահանջում է եւ վերադառնում դէպի իր մարմինը եւ դէպի իր խցի ներսը եւ գտնում իր սիրտը լցուած անասելի ուրախութեամբ…[1]

[1] La Filocalia de la oración de Jesús, Salamanca 1998, էջ 130:

ՍԻՄԷՈՆ ՆՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ
ՕՐՀՆԵՐԳ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ

Դու Աստուած ես յաւիտենական, եզակի
եւ անստեղծ,
Սուրբ Երրորդութիւն Որդու եւ Հոգու հետ:
Արարիչն ես երեւելի եւ իմանալի աշխարհի:
Դո՛ւ, Տէր եւ Վարդապետ:

Դու ինձ հրապուրեցիր քո գեղեցկութեամբ,
Եւ Քո սիրոյ համար Դու ինձ խոցեցիր՝
Փոխակերպելով ինձ ամբողջութեամբ:

Քո գեղեցկութիւնն ինձ գերել է եւ ես հիացած եմ,
Ո՛վ Սուրբ Երրորդութիւն, Դու ի՜մ Աստուած:
Երեքից Իւրաքանչիւրում
Նոյնանում են յատկանիշները Քո,
Եւ երեքը մէկ Դէմք են,
Դու, ով իմ Աստուած,
Դու Աստուած ես Տիեզերքի:

Թող իմ աչքերը տեսնեն Քո փառքը,
Եւ իմ ձայնը թող դա հռչակի ամէն օր:
Դո՛ւ, Արարիչ եւ Վարդապետ դարերի,
Դո՛ւ՝ Սուրբ Երրորդութիւն, Դու իմ Աստուած:

ԳՐԻԳՈՐ ՍԻՆԱՅԵՑԻ
(1260–1346)

Գրիգոր Սինայեցին ծնուել է մօտաւորապէս 1260 թուականին Զմիւռնիայում (Իզմիր)։ Երիտասարդ տարիքում, 1282 թ., նա գերի է ընկել սելջուկ թուրքերի ձեռքը եւ տարուել Սիրիայի Լաւոդիկէ քաղաքը, ուր տեղի քրիստոնեաները կարողացել են փրկագին վճարել նրա համար եւ ազատել գերութիւնից։ Այնուհետեւ նա գնացել է Կիպրոս, ուր հրապուրուել է վանական կեանքով, ապա անցել է Սինա թերակղզու Սուրբ Կատարինէ վանքը եւ այնտեղ էլ կատարել վանականի իր ուխտը, որի համար էլ կոչուել է՝ Սինայեցի։

Հետագայում, Գրիգոր Սինայեցին տեղափոխուել է Կրետէ, որտեղ Արսէն անունով մի յոյն վա-

նականից սովորել է հեսիխասմի կիրառման սկզբունքները: Որոշ ժամանակ անց, 1310 թուականին, նա հաստատուել է Աթոս լեռան մի վանքում եւ մնացել այնտեղ մինչեւ 1335 թուականը: Այնուհետեւ, Աթոսի վրայ թուրքերի աճող յարձակումները պատճառ են դարձել, որ Գրիգոր Սինայեցին իր որոշ աշակերտների հետ թողնի վանքը եւ գնա դէպի Բուլղարական կայսրութիւն, ուր նա Բուլղարիայի ցար Իւան Ալեքսանդր օրօք պաշտպանութիւն է գտել: Այստեղ նա, Ստրանջա լեռներում, Պարորիայի մօտ, հիմնում է մի վանք, որտեղ նա վախճանւում է 1346 թուականին:

Հարուստ է Գրիգոր Սինայեցու հոգեւոր ժառանգութիւնը: Նա գրել է բազմաթիւ շարականներ, աստուածաբանական մեկնաբանութիւններ եւ մի կարեւոր ուսումնասիրութիւն քրիստոնէական միստիցիզմի (հեսիխասմի) մասին: Ֆիլոկալիան ընդգրկում է յունարէն հինգ աշխատութիւններ նրանից:

Եզրակացնելով՝ պէտք է ասել, որ Գրիգոր Սինայեցու համար հոգեւոր կեանքը կայանում է հիմնականում մկրտութեան էներգիան վերականգնելու եւ փորձարարական ճանապարհով վերագտնելու, ինչպէս նաեւ լոյսը ընկալելու մէջ: Դրանց կարելի է հասնել տարբեր ուղիներով: Դրանցից ամենակարճը Յիսուսի աղօթքն է, որն ուղեկցւում է շնչառական տեխնիկայով: Սուրբ Հոգով շարժուող իմաստութիւնը մտաւոր, մաքուր եւ հրեշտակային աղօթքի զօրութիւնն է, որի նշանն է ձեւերից ամբողջովին ազատուած միտքը՝ չտեսնելով ոչ իրեն, ոչ էլ նիւթական որեւէ բան, քանզի զգայարանները յաճախ ծածկուած են այդ լոյսի համար:

Չար մտքերի հետ կռիւը կարելի է շահել
միայն Քրիստոսին մեզ օգնութեան կանչելով,
քանի որ նրանք անկարող լինելով տանել
սրտի ջերմութիւնը աղօթքի մէջ,
փախչում են կրակով այրուածի պէս:

Ոչ մի սկսնակ չի կարող յետ մղել նոյնիսկ մի պարզ միտք, եթէ Աստուած չօգնի նրան նման ջանքերում: Քանզի միայն ամենաուժեղը կարող է քաջութեամբ պայքարել եւ հեռացնել իրենից վնասակար մտքերը: Բայց նա պէտք է միաւորի իր ջանքերը Աստծոյ հետ՝ կրելով այն զէնքերը, որոնք Նա ինքն է տալիս նրան:

Այսպիսով, երբ տեսնէք նրանց գալը (չար մտքերի), յամառօրէն եւ հետեւողական կերպով կանչէք Տէր Յիսուս Քրիստոսին, եւ կը տեսնէք, թէ ինչպէս են դրանք անհետանում: Քանզի չկարողանալով տանել սրտի մէջ աղօթքի ջերմութիւնը, դրանք փախչում են կրակով այրուածի պէս: «Յիսուսի անունով պայքարիր քեզ վրայ յարձակուողների դէմ»,— ասում է սուրբ Յովհաննէս Սինայեցին, քանի որ մեր Աստուածը կրակ է, որը լափում է ամէն չարիք (Բ Օրինաց Դ 24): Տէրը միշտ շտապում է օգնելու, որովհետեւ «միթէ Աստուած արդարութիւն չի անի իր ընտրեալներին, երբ նրանք գիշեր ու ցերեկ աղաղակում են Նրան, մինչ Նա թողնում է նրանց սպասել» (Ղուկաս ԺԸ 7)[1]:

1 Քաղուած և իսպաներէնի թարգմանուած հետևեալ գրքից՝ *Sfântul Grigorie Sinaitul, Despre liniştire şi despre cele două feluri ale rugăciuni în Filocalia VII, Bucureşti, 1977.*

* * *

Քրիստոսի հետ տառապելու պատճառն այն է, որ մենք Նրա հետ միասին փառաւորուենք կամ աստուածանանք (Հռոմ. Ը 17)։ Արատաւոր ցանկութիւնները կամ հեդոնիզմը (հաճոյքների հետեւից գնալը) մահ են պատճառում նրանց, ովքեր գործում են դրանք։ Ահա թէ ինչու մարդ կամաւոր կրում է Քրիստոսի չարչարանքները, որը խաչելութիւնն է խաչելութեան եւ մահն է մահուան։

Նա, ով տառապում է Քրիստոսի համար, համբերութեամբ դիմանում է իր հետ պատահող փորձութիւններին։

ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԳԱԼԻՍ ԵՆ ՔՆԻ ԺԱՄԱՆԱԿ

Հարց.— Քանի՞ ձեւով է առաջանում սերմնաձորումը՝ մեղաւոր եւ ոչ մեղաւոր։

Պատասխան.— Դա պատահում է երեք եղանակով՝ պոռնկութեամբ, ինքնաբաւարարումով եւ անմաքուր ու այլասերուած մտքերի ազդեցութեամբ։ Ոչ մեղաւոր ծորումները տեղի են ունենում եօթ ճանապարհով. 1) մէզի հետ միասին. 2) տարբեր ուտելիքների պատճառով. 3) գրգռիչ յուզումների եւ իրադարձութիւնների պատճառով. 4) ոգելից խմիչքների օգտագործումով. 5) մարմնի հեղգութեան կամ թուլութեան պատճառով. 6) չափազանցուած յոգնածութեան պատճառով. 7) երազի մէջ դիւային տարբեր երեւակայութիւնների պատճառով։

Նրանց համար, որոնք ծերացել են ուղղափառ ասկետիկ պրակտիկայում, դա յաճախ տեղի է ունենում վերը նշուած հինգ միջանկեալ ձեւերով: Եօթը ճանապարհից առաջինի հետ համընկնում են նրանք, որոնց սերմնահեղուկը դուրս է գալիս մէզի հետ խառնուած, որովհետեւ շատ ասկետիկ ջանքերի եւ յոգնածութեան պատճառով ներքին ծորանները մի կերպ թուլացած են լինում եւ նրանց տրւում է աստուածային սրբացնող էներգիան, որն է ժուժկալութեան շնորհը: Վերջին ճանապարհը՝ երազի մէջ երեւակայական միջոցով կատարուող սերմնական հոսքն է, դա վերաբերում է նրանց, ովքեր դեռ հեղգ են եւ թոյլ: Այս դէպքում էլ դա, քանի որ ակամայ է կատարւում, ուրեմն մեղք չէ, ինչպէս ասում են հայրերը

ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԻ ԱԿՐՈՍՏԻՔՈՍ[1]

Ճշմարտութեան գիտութիւնը, ըստ էութեան, շնորհի զգացումն է…

* * *

Ճշմարիտ սրբավայր եւ ապագայ վիճակի ակնկալիք. այդպիսին է պղտոր մտքերից մաքրուած սիրտը, որը շարժւում է Հոգու միջոցով: Այնտեղ ամէն ինչ ընթանում է եւ արտայայտւում Հոգու ներգործութեամբ: Նա, ով չի հասել այս վիճակին, շնորհիւ իր միւս առաքինութիւնների, կարող է ծա-

[1] Յուն. ἄκρο-στῖχίδος հայերէն՝ բանակապ, եզրակապ, անձինք:

ռայել որպէս որակեալ քար Աստծոյ տաճարի կառուցման համար, այդուհանդերձ նա դեռ չի կարող համարուել Հոգու տաճար, ոչ էլ՝ նրա քահանայապետը:

* * *

Բոլոր պատուիրաններից վեր կայ մի պատուիրան, որը վերաբերում է բոլորին. «Յիշի՛ր քո Տէր Աստծուն ամէն ժամանակ» (Բ Օրինաց Ը 18): Հէնց այս պատուիրանի համար են միւսները արհամարհւում եւ միեւնոյն ժամանակ հէնց սրա համար են միւսները իրագործւում: Մոռացութիւնը, առաջին հերթին, ոչնչացնում է Աստծոյ հանդէպ յիշողութիւնը, մթագնում է պատուիրանները եւ բացայայտում մարդու մերկութիւնը:

* * *

Հոգու մէջ էապէս գոյութիւն ունի երկու հիացական սէր՝ սրտի սէրը եւ հիացմունքային (էքստազի) սէրը: Առաջինը համապատասխանում է լուսաւորութեանը, երկրորդը՝ բարեգործութեանը: Ե՛ւ մէկը, եւ՛ միւսը զգայնութիւններից հանում են այն ոգին, որը նրանք առաջ են մղում: Աստուածային սէրն այն հոգեւոր արբեցումն է,— ամենաբարձրը բնութեան մէջ,— որն ինքնին վերացնում է արտաքին աշխարհի հետ ցանկացած յարաբերութեան զգացում:

* * *

Մտքերի սկիզբն ու պատճառը օրինազանցութիւնից յետոյ յիշողութեան պոռթկումն է, որը, դառնալով բարդ ու բազմազան, պարզ ու միատարր, կորցնում է Աստծոյ հանդէպ յիշողութիւնը եւ ապականում Նրա զօրութիւնները:

* * *

Նախնական այդ յիշողութիւնը մտքերի կործանարար եւ չար յիշողութիւնից մաքրելու միջոցն է վերադառնալը սկզբնական պարզութեանը: Մեղքի գործիքը՝ անհնազանդութիւնը, խեղաթիւրել է ոչ միայն պարզ յիշողութեան յարաբերութիւնները բարու հետ, այլեւ ապականել է նրա ուժերը եւ թուլացրել նրա բնական ձգողականութիւնը դէպի առաքինութիւնը: Յիշողութեան մեծագոյն դեղամիջոցը աղօթքի մէջ յիշելն է Աստծուն՝ յամառօրէն եւ անսասան կերպով:

* * *

Հոգեւոր աղօթքի սկզբունքը,— խորհրդապաշտ քահանայութիւնը,— հոգու մաքրագործող գործունէութիւնն է կամ առաքինութիւնը: Անդորրի սկզբունքը (հեսիխիա) հանգիստն է եւ դրա միջոցը՝ լուսաւորող առաքինութիւնն ու խորհրդածութիւնը: Նրա նպատակակէտն է՝ էքստազը եւ Աստծոյ կողմից հոգու յափշտակութիւնը:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Մենք չպէտք է խօսենք մեծ բժշկի պէս կամ Սուրբ Գրքի կամ Հայրերի աջակցութեան կարիքն ունենանք, այլ «Աստծուց ուսուցանուած լինենք» (Յովհ. Զ 45) մինչեւ սովորենք եւ իմանանք Նրա մէջ եւ Նրա միջոցով այն ամէնը, ինչ անհրաժեշտ է: Ոչ միայն մենք, այլեւ որեւէ հաւատացեալ, մի՞թէ կանչուած չենք՝ մեր սրտերում փորագրուած կրելու հոգու օրէնքի տախտակները եւ զրուցելու Յիսուսի հետ մաքուր աղօթքի միջոցով, ինչպէս քերովբէները:

* * *

Բայց մենք պարզապէս երեխաներ ենք մեր երկրորդ ստեղծման պահին: Անկարող ենք ըմբռնելու շնորհը, օգուտ քաղելու մեր վերանորոգումից: Անտեղեակ ենք, նախեւառաջ, փառքի այն գերհզօր մեծութեանը, որին մենք մասնակից ենք: Մենք չենք գիտակցում, որ պահպանելով պատուիրանները, մենք պէտք է աճենք թէ՛ յուզական ոլորտում եւ թէ՛ հոգեպէս, տեսնելու համար այն, ինչ ստացել ենք: Այսպիսով, անփութութեան եւ չարամիտ սովորութիւնների պատճառով ընկնում ենք անզգայութեան եւ կուրութեան մէջ, այն աստիճան, որ այլեւս չգիտենք, թէ կայ Աստուած, թէ ինչ ենք կամ ինչ ենք դարձել, թէեւ Աստծոյ զաւակներն ենք, լոյսի զաւակները, Քրիստոսի երեխաներն ու անդամները:

* * *

Մենք մկրտուել ենք հասուն տարիքում, բայց միայն ջուրն ենք ընկալում, ոչ թէ Հոգին: Նոյնիսկ Հոգով նորոգուելով՝ մենք դրան չենք հաւատում, բացի մեռած եւ անգործունեայ հաւատով… Մենք մարմին ենք եւ վարւում ենք ըստ մարմնի: Եւ մենք մեռած ենք մնում մինչեւ մեր վախճանի ժամը՝ առանց Քրիստոսով ապրելու կամ Նրանով յուզուելու: Եւ «այն, ինչ մենք գիտենք», ճամփորդութեան աւարտին եւ դատաստանի ժամանակ «կը վերցուի մեզանից» մեր անհաւատութեան պատճառով, եւ մեր յոյսը կը նուազի, քանի որ չենք հասկացել, որ երեխաները պէտք է նման լինեն Հօրը, աստուածներ Աստծոյ մէջ, հոգիներ՝ Հոգուց բխած…

ՇՆՉԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եսայի ճգնաւորը եւ նրանից առաջ շատ ուրիշներ հաստատում են, որ դու պէտք է պահես շունչդ: «Կրթի՛ր քո անկարգ հոգին»,— ասում է Եսային, այսինքն՝ թշնամու զօրութիւնից խանգարուած եւ ցրուած հոգիդ, ում մէջ անփութութիւնը մկրտութիւնից յետոյ վերականգնում է նախկին բոլոր չար ոգիները (տես Մատթ. ԺԲ 45): Մէկ ուրիշն ասել է. «Վանականը պէտք է իր շնչառութեամբ ունենայ Աստծոյ յիշատակը». եւս մէկ. «Աստծոյ սէրը պէտք է անցնի մեր շնչով», իսկ Սիմէոն Նոր Աստուածաբանն ասում է՝ «Սեղմի՛ր քո քթի միջով անցնող օդի ընդունումը այնպէս, որպէս թէ այլեւս չկարողանաս յարմարաւէտ շնչել…»:

Մեր մաքրուելուց յետոյ մենք ստացել ենք Հոգու նշանները եւ ներքին Խօսքի սերմերը (Յակոբոս Ա 21), բայց պատուիրաններին չինազանդուելը ստիպում է մեզ ընկնել կրքերի մէջ եւ Սուրբ Հոգին շնչելու փոխարէն, մենք յաղթահարւում ենք չար ոգիների շնչառութեամբ[1]:

[1] Filocalía 4o tomo: Varias enseñanzas para principiantes, medianos y perfeccionados, por san Gregorio el Sinaíta. Ed. Lumen, 2013.

Ս. Գրիգոր Պալամասի նկարը
Աթոս լեռան Վատոպեդի (Վատոպեդիու) վանքում

ԳՐԻԳՈՐ ՊԱԼԱՄԱՍ
(1296–1359)

ԺԴ. դարը, երբ գործել է Գրիգոր Պալամասը, մի շատ ծանր ժամանակաշրջան է եղել Բիւզանդական կայսրութեան համար, որն իր տարածքով շատ կրճատուած էր: 1204 թուականին Խաչակրաց չորրորդ արշաւանքի զինուորները, փոխանակ ազատագրելու Երուսաղէմը եւ յատկապէս տեղի քրիստոնէական սրբատեղիները մուսուլմանների ձեռքից, փոխում են իրենց ուղղութիւնը և յարձակ-

ւում, կողոպտում ու աւերում են Բիւզանդական կայսրութեան մայրաքաղաք՝ Կոստանդնուպոլիսը, ուր հաստատում են լատինական մի կայսրութիւն և մի լատին պատրիարք: Փախուստի մատնուած բիւզանդական կայսրն ու ուղղափառ պատրիարքը ապաստան են գտնում Նիկիայում: Ուղղափառութեան սրտում բացուած այս վէրքը աւելի խորն է լինում, քան 1054 թ. հերձուածը Հռովմէական եկեղեցու հետ, նրանք երկուստեք բանադրում են միմեանց[1]: Ի վերջոյ բիւզանդական նոր կայսր Միքայէլ Ը. 1261 թ. կարողանում է վերատիրանալ իր գահին, բայց, այդուհանդերձ, չի փչացնում իր յարաբերութիւնները Հռոմի հետ՝ ակնկալելով նրա օգնութիւնը ընդդէմ թուրքերի:

Բիւզանդական կայսրութեան նման ծանր իրավիճակում է ծնւում Գրիգոր Պալամասը 1296 թ. Կոստանդնուպոլսում, Փոքր Ասիայից եկած մի ազնուականի ընտանիքում, նա հինգ եղբայրներից աւագն էր: Նրա հայրը՝ Կոնստանտինը, եղել է բիւզանդական կայսր Անդրոնիկոս Բ. Պալեոլոգի (1282–1328) պալատականը, սակայն մահացել է, երբ Գրիգորը դեռ շատ երիտասարդ էր: Ինքը՝ կայսրը, անձամբ զբաղուել է հօրից որբ տղայի խնամքով եւ դաստիարակութեամբ՝ յոյս ունենալով, որ տաղանդաւոր Գրիգորն իրեն կը նուիրի պետական ծառայութեանը, սակայն Պալամասը, երկարատեւ աշխարհիկ ուսումնառութիւնից յետոյ, 1316 թ. ընտրում է վանական կեանքը Աթոս լեռան

[1] Հռոմի Յովհաննէս Պօղոս Բ. պապը 2000 թ. այցելում է Յունաստան, ուր պաշտօնապէս եւ հրապարակայնօրէն իր Եկեղեցու կողմից ներողութիւն է խնդրում վերոյիշեալ հակաքրիստոնէական դէպքերի համար:

վրայ, որտեղ նրան ծանօթացնում են *հեսիխազմի* աւանդոյթին:

Նրա կեցութիւնը Աթոսում ընդհատւում է որոշակի ուղեւորութիւններով դէպի Թեսաղոնիկէ, որտեղ նա քահանայ է ձեռնադրւում 1326 թ. եւ ուր աշխուժացնում է հեսիխաստական հոգեւորութեան շրջանակը, ապա Կոստանդնուպոլիս՝ կարճատեւ ճամփորդութեան ընթացքում մօր մահուան առթիւ: 1335–1336 թուականներին ընտրւում է Աթոս լեռան Սուրբ Սաբաս վանքի վանահայր, որն այն ժամանակ ունէր մօտաւորապէս 200 վանական:

Թուրքական յարձակումներից աւելի ապահով էր թւում Թեսաղոնիկէ (Սելանիկ) քաղաքը, դրա համար էլ Պալամասն իր միաբանակից եղբայրների հետ հաստատւում է այնտեղ եւ քաղաքից ոչ շատ հեռու հիմնում մի մենաստան:

Գրիգոր Պալամասը ջատագովն էր *հեսիխասպական* շարժմանն ու նրա տարածմանը յատկապէս փրկելու համար իր եկեղեցին լատինացումից եւ Արեւմտեան սխոլասիկ աստուածաբանութիւնից, մանաւանդ որ Բիւզանդական կայսրութիւնը թուրքերի յարձակումների պատճառով քաղաքականապէս յայտնուել էր ծանր վիճակում եւ ակնկալում էր Հռոմի օգնութիւնը: Այս առումով Պալամասի դէմ է պայքարում հումանիստ փիլիսոփայ Բարլաամ Կալաբրացին իր կողմնակիցներով: Վերջինս ծագումով իտալացի էր եւ իր հռոմէական կաթոիկ դաւանանքից դարձել էր ուղղափառութեանը[1]: Նա իր վարկաբեկումներով քննադատում է

[1] Բարլաամը, սակայն, հետագայում, գնալով Իտալիա, վերադառնում իր նախկին կաթոլիկ դաւանանքին

եւ ծաղրում հեսիխաստներին, մանաւանդ Աթոս լեռան վանականներին: Պալամասն ու Աթոս լեռան բոլոր վանահայրերը գրաւոր կերպով խստօրէն դատապարտում են Բարլաամին:

Ընդդիմադիրների աճող զրպարտութիւնների պատճառով, Կոստանդնուպոլսի Յովհաննէս ԺԴ. պատրիարքը 1344 թ. չորս տարով բանտարկել է տալիս Գրիգոր Պալամասին, որը նոր միայն յաջորդ պատրիարք Իսիդորի օրօք ազատւում է բանտից եւ ձեռնադրւում որպէս Թեսաղոնիկէի եպիսկոպոս: Սակայն Բարլաամի հետ հակամարտութիւնն ամբողջութեամբ չէր լուծուած, Թեսաղոնիկէի բնակիչները չեն ընդունում Պալամասին իբրեւ իրենց հոգեւոր առաջնորդ, եւ նա ստիպուած է լինում ապրելու տարբեր վայրերում: Նոր միայն 1350 թուականին նա կարողանում է զբաղեցնել իր եպիսկոպոսական աթոռը:

1354 թ. դէպի Կոստանդնուպոլիս կատարած իր ուղեւորութեան ժամանակ, Գրիգոր Պալամասի նաւն ընկնում է թուրք ծովահէնների ձեռքը, որոնք նրան բանտարկում են եւ ծեծի ենթարկում: Նա ստիպուած է լինում անցկացնել օսմանեան արքունիքում կալանքի տակ: Ի վերջոյ, հաւանաբար փրկագին վճարելու միջոցով, նա ազատ է արձակւում եւ վերադառնում Թեսաղոնիկէ, որտեղ իր կեանքի վերջին երեք տարիներին ծառայում է որպէս արքեպիսկոպոս: Յետ մահու, 1368 թ., նա սրբադասւում է Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքի կողմից:

Նրա աճիւնները ամփոփուած են Թեսաղոնիկէի (Սելանիկ) Սուրբ Գրիգոր Պալամաս եկեղեցում:

Շատ հարուստ է Գրիգոր Պալամասի գրական ժառանգութիւնը, ուր կարելի է գտնել բազմաթիւ հոգեւոր քարոզներ, ճառեր, կրօնական միստիկ խորհրդածութիւններ, նամականի, արժէքաւոր ուսումնասիրութիւններ, որոնցից յատկապէս երկուսը փորձում են ցոյց տալ, որ Սուրբ Հոգին բխում է բացառապէս Հայր Աստծուց[1], մի տեսակէտ, որը բոլորովին հակառակ է Ս. Հոգու բխումի վերաբերեալ Հռովմէական Կաթոլիկ Եկեղեցու ներմուծած Filioque (եւ յՈրդւոյ) դաւանանքին:

ԳՐԻԳՈՐ ՊԱԼԱՄԱՍ ԱՂՕԹՔԻ ԵՒ ՍՐՏԻ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Աստուած ինքնին բարի է, նոյնինքն ողորմածութիւնն է, բարութեան խորութիւնը եւ, միեւնոյն ժամանակ, Նա ընդգրկում է այդ խորութիւնը եւ գերազանցում է բոլոր անուններն ու բոլոր հնարաւոր հասկացութիւնները: Նրա ողորմութիւնը ստանալու այլ միջոց չկայ, քան միութիւնը Նրա հետ: Մարդը միաւորւում է Աստծուն՝ հնարաւորինս կիսելով նոյն առաքինութիւնները՝ պաղատանքի եւ միութեան այդ առեւտրի միջոցով, որը հաստատւում է աղօթքի մէջ:

[1] Obras completas de Gregorio Palamas, I, Tesalónica 1962.

Առաքինութիւններին մասնակցելը, հաստատուած նմանութիւնների շնորհիւ, առաքինի մարդու վրայ այն ազդեցութիւնն է գործում, որով նա տրամադրւում է ընդունել Աստծուն: Աղօթքի զօրութեանն է պատկանում այս ընդունելութեան գործողութիւնը, ինչպէս նաեւ խորհրդաւոր կերպով մարդու աճման ընծայումն ու միաւորումը աստուածայինին,— որովհետեւ դա բանական արարածների կապն է իրենց Արարչի հետ,— պայմանով որ գործուն զղջման շնորհիւ այդ աղօթքը գերազանցի կրքերի եւ մտքերի մակարդակը: Քանզի կրքերի հետ կապուած մարդկային հոգին չի կարող յաւակնել աստուածային միութեանը:

* * *

Երբ հոգու միասնութիւնը դառնում է եռամիասնական, չդադարելով մէկ լինելուց, հոգին միաւորւում է գերագոյն եռամիասնական կատարելութեանը՝ փակելով մոլորութեան տանող բոլոր դռները՝ տիրելով մարմնին, աշխարհին եւ այդ աշխարհի իշխանին: Այս կերպ հոգին լիովին խուսափում է իր վրայ կատարուած յարձակումից, նա ամբողջովին ինքն իր մէջ է եւ Աստծոյ մէջ եւ վայելում է իր ներսում առաջացող հոգեւոր վեհացումը, քանի դեռ ինքը մնում է այդ վիճակում: Հոգու միասնութիւնը դառնում է եռեակ եւ մնում է մէկ, երբ նա շրջւում է դէպի ինքն իրեն եւ ինքն իրենից բարձրանում դէպի Աստուած: Հոգու վերելքը դէպի Աստուած կատարւում է հիմնականում աղօթքի միջոցով. երբեմն ընտրուած եւ կենտրոնացուած սեղմ աղօթքով, երբեմն էլ աւելի ընդլայնուած աղօթքով,

որն աւելի ջանք է պահանջում: Նա, ով յարատեւում է հոգեկան այս կենտրոնացման եւ դէպի Աստուած իր ձգտումի մէջ, եռանդուն կերպով զսպելով իր մտքի յարձակումները, ներքուստ մօտենում է Աստծուն, տիրում է անասելի բարիքների, համտեսում է գալիք դարաշրջանի քաղցրութիւնը, հոգեւոր իմաստով ճանաչում է, թէ որքան լաւ է Տէրը՝ ըստ սաղմոսերգուի խօսքի (Սղմս. ԼԴ 9):

* * *

Մեր մարմինն ինքնին ոչ մի վատ բան չունի, այն իր բնութեամբ լաւ է: Նրանում պարզապէս մի ինչ–որ վնասակար բան կայ, և դա մարմին զգեցած հոգին է, այն մարմինը, որը տրուած է պոռնկական մեղքին: Չարը մարմնից չի գալիս, այլ նրանից, ով բնակւում է այդ մարմնում: Չարը նրանից չէ, որ հոգին բնակւում է մարմնում, այլ դա աւելի նրանից է, որ հոգու օրէնքին հակադրուող օրէնքն է կիրառւում մեր մարմնի անդամների մէջ: Ահա թէ ինչու մենք ապստամբում ենք մեղքի օրէնքի դէմ եւ այն արտաքսում մարմնից, որպէսզի ներմուծենք նրա մէջ հոգու իշխանութիւնը: Այս իշխանութեան շնորհիւ մենք սահմանում ենք օրէնքը, նրա բնոյթը և նրա գործունէութեան սահմանը՝ հոգու իւրաքանչիւր զօրութեան, զգայարանների և մարմնի անդամների նկատմամբ: Իւրաքանչիւրին տրւում է այն, ինչ որ արժանի է: Օրէնքի այս աշխատանքը կրում է ժուժկալութեան անունը: Հոգու կրքային հատուածի համար մենք ձեռք ենք բերում բարեգործութեան հիանալի սովորութիւնը, իսկ հոգու բանական մասի համար մենք բարելաւում

ենք այն՝ դէն շպրտելով այն ամէնը, ինչը խանգարում է հոգու վերելքին դէպի Աստուած: Օրէնքի այս երեւոյթը կոչւում է սթափութիւն: Նա, ով մաքրում է իր մարմինը ժուժկալութեան միջոցով, նա, ով բարեգործութեամբ և գթասրտութեամբ իր բարկութիւնն ու ցանկասիրութիւնը դարձնում է առաքինութեան առիթ, նա, ով Աստծուն մատուցում է աղօթքով մաքրուած հոգի, ձեռք է բերում եւ իր մէջ տեսնում մաքուր սրտերին խոստացուած շնորհը… «Այս գանձը մենք տանում ենք հողէ անօթների մէջ» (հմմտ. Բ Կորնթ. Դ 6–7): Սրանով մենք հասկանում ենք մեր մարմինը: Այս դէպքում, ուրեմն, ինչպէ՞ս, մեր հոգին, ունենալով ու պահելով մեր մարմնի ներսում, կարող ենք զրկուել նրա ազնուագոյն վեհութիւնից:

* * *

Նրանք, ովքեր նկատի ունեն ուղեղը կամ սիրտը իբրեւ հոգու նստավայր, մեղադրւում են որպէս *Մեսալեանական* աղանդաւորներ[1], բայց այդպիսիք թող իմանան, որ յարձակւում եմ սրբերի վրայ: Նոյնպէս Ս. Աթանասը բանականութեան նստավայրը տեղադրում է ուղեղում, իսկ Ս. Մակարը, որի լուսաւորութեան փայլը ոչ ոքից պակաս չէ, սիրտն է համարում իբրև վայրը հոգու գործունէութեան: Եւ նրանց հետ համաձայն են գրեթէ բոլոր սրբերը:

[1] Այս անունը հաւանաբար առաջացել է Ասորիքում տարածուած «մսալիանա» (աղօթողներ) աղանդից, որը նաեւ հաստատուած է եղել Հայաստանում իբրեւ «մծղնէութիւն», այն դատապարտուել է Շահապիւանի եկեղեցական ժողովում 444 թ., հետագայում այն ընդգրկուել է *պաւղիկեանների* շարժման մէջ:

Սուրբ Գրիգոր Նիւսացին էլ, հաստատելով, որ հոգին ոչ մարմնի ներսում է, ոչ էլ դրսում, չի հակասում նրանց, քանզի միւսները հոգին դնում են մարմնի մէջ այնքանով, որքանով այն համարում են միացած նրա հետ: Նրանք իրենց խօսքում պարզապէս այլ տեսակէտ են ներկայացնում, բայց իրենց խորքում իրարից տարբեր կարծիք չունեն[1]:

Ս. Գրիգոր Պալամասի Եկեղեցին
Ուր պահպանւում են սրբի մասունքները
Թեսաղոնիկէ (Սելանիկ) – Յունաստան

[1] La Filocalia de la oración de Jesús, Salamanca 1998, էջ 183–184, 192.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջաբան 7
Ֆիլոկալիա Յիսուսեան աղօթքի մասին 15
Անապատական հայրերի ասոյթներից 46
Աբբայ Աղաթոն 50
Աբբայ Յովհաննէս Կարճահասակ
(Կոլոբոս) 58
Անտոն Մեծ կամ Անտոն
Անապատական 63
Ս. Եփրեմ Ասորի 73
Մեծն Մակար Եգիպտացի 80
Ս. Եւագր Պոնտացի 88
Ս. Նեղոս Սինայեցի 111
Յովհաննէս Կասիան Հռովմէացի 121
Բարսանուփիոս 128
Յովհաննէս Սանդուղքը (Կլիմակոս) 138
Իսահակ Նինուէցի 147
Սիմէոն Նոր Աստուածաբան 162
Գրիգոր Սինայեցի 169
Գրիգոր Պալամաս 179

ՖԻԼՈԿԱԼԻԱ
ԿԱՄ ՍԷՐ ԴԷՊԻ
ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

Հաւաքեց եւ թարգմանեց՝
Յակոբ արք. Գլնճեանը

Հրատարակության խմբագիր՝
Գևորգ Մադոյան

Ձևավորումը՝
Վիտալի Ասրիևի

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84/16
Ծավալը՝ 12 տպ. մամուլ

Տպագրվել է «Ասողիկ» տպագրատանը